Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

ԻՆՏԵՐՆՅՈՒՍ

Սա «Լրագրողական էթիկա» շարքի երկրորդ գիրքն է, որ կազմել և հրատարակել է «Ինտերնյուս» մամուլի աջակցության հասարակական կազմակերպությունը: Առաջինը լույս է տեսել 2011թ.-ին:

Գիրքը ստեղծվել է մասնագիտական էթիկայի մասին տարբեր լսարաններում ծավալված քննարկումների հիման վրա: Հասցեագրված է գործող և ապագա լրագրողներին ու թեմայով հետաքրքրված մարդկանց: Գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում մեդիա փորձագետ Մեսրոպ Հարությունյանի «Զրույցներ լրագրողական էթիկայի մասին» շարքն է, երկրորդում՝ տարբեր հեղինակների հոդվածներ են՝ մասնագիտական էթիկայի խախտման կոնկրետ օրինակների վերաբերյալ: Ինտերնյուսը շնորհակալություն է հայտնում իր գործընկերներին՝ գրքի պատրաստմանն աջակցելու համար:

Գիրքը պատրաստվել և հրատարակվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Լրատվամիջոցների ազատության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության խթանումը Հարավային Կովկասում և Մոլդովայում» 2011-2012թթ. համատեղ ծրագրի շրջանակներում:

Խմբագիր՝ Նարինե Սաֆարյան

Դիզայն և էջադրում՝ FAINBERG BRANDING & MARKETING

Երևան, 2012թ.

| | | |
|---|---|---|
| ՄԱՍ 1 | Զրույցներ լրագրողական էթիկայի մասին | 5 |
| | Խուսափել շահերի բախումից | 13 |
| | Բազմամա՞րդ է, արդյոք, հանրահավաքը, թե՞ սակավամարդ | 23 |
| | Կկուն թուխս կնստի՞ | 35 |
| | Ժուռնալիստիկայի «սրբազան կովը» | 43 |
| | Կարելի՞ է գնել հեռախոս մեկ դրամով | 53 |
| | Վստա՞հ եք, որ գաղտնատուն եք | 61 |
| | Նախնադարում էլ մարդկանց հետաքրքրել են ցեղապետի և նրա կնոջ հարաբերությունները | 69 |
| | Հանցագործն ազգություն չունի | 79 |
| | Քլինթոնի նախագահության «պայծառ գարունն» ու Ջորջ Բուշ Ավագի «նախագահության ձմեռը» | 85 |
| | «Ռոմեո եւ Ջուլիետ»-ում դեղագործի դե՞րն է ամենից կարեւորը | 93 |
| | Ամփոփում | 99 |
| ՄԱՍ 2 | Օրինակներ, մեկնաբանություններ | 105 |
| | Թանկարժեք նվեր լրագրողին | 105 |
| | Ձեռքդ ետ տար, եթե ավելի ես ցավեցնելու վերքը | 109 |
| | Լրագրողական դիակապտություն | 115 |
| | Ինչու՞ է էթիկան կարեւոր լրագրության համար | 119 |

## ՄԱՍ 1
ԶՐՈՒՅՑՆԵՐ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

> “Տասնյակ տարիների ընթացքում մշակված տարբեր տեսակի էթիկական կանոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում միևնույն սկզբունքների տարբեր շարադրանքներն են:”

**Մեսրոպ Հարությունյան**

*Նվիրում եմ ընկերոջս, եղբորս՝ Այդին Մորիկյանի՝ ՄԱՐԴՈՒ, լրագրողի, խմբագրի, դասախոսի պայծառ հիշատակին:*

# Զրույցներ լրագրողական էթիկայի մասին




Լուսանկարը՝ wallpapers-diq.com-hg

# ԻԲՐԵՎ ՍԿԻԶԲ

Տարիների ընթացքում ՁԼՄ օրենսդրության եւ ինքնակարգավորման դասավանդման փորձը հանգեցրեց մի դասաշարի մշակման, որը հիմնված է առավելապես լսարանի ակտիվության վրա:

Լրագրողական էթիկային նվիրված պարապմունքների ժամանակ մենք ոչ թե դոգմաներ ենք ներկայացնում եւ ասում, թե, ա՛յ, սա է ճիշտը, եւ այս կամ այն իրավիճակում պետք է այսպես կամ այնպես վարվել, այլ ընդհակառակը, ասում ենք, որ որեւէ իրավիճակում չկա էթիկական տեսակետից ճիշտ կամ սխալ լուծում: Կա ոմանց (մեկի) համար ընդունելի, ոմանց (մյուսի) համար անընդունելի որոշում:

Երկրորդը, որ անընդհատ շեշտում ենք պարապմունքների ժամանակ. ինքնակարգավորման կամ էթիկայի հիմքը կամավորությունն է, եւ եթե մարդը կամավոր իր վրա պարտավորություն չի վերցրել, ապա մեղադրել նրան էթիկական կանոններ խախտելու մեջ չես կարող:

Եվ մեր պարապմունքների շարքերի փորձի վրա հիմնված այս զրույցներն էլ նրա համար չեն, որ ժուռնալիստիկայի բաժինների ուսանողները կարդան եւ պատրաստվեն պետական ավարտական քննություններին: Սրանք ոչ միայն ապագա եւ գործող լրագրողներին, այլեւ ցանկացած մեկի, ով փորձում է տեղեկություններ, կարծիքներ եւ գաղափարներ գտնել ու տարածել, ընդամենը պետք է մղեն մտածելու. «իսկ ինչպե՞ս կվարվեմ ես այս կամ այն իրավիճակում»:

Տեղեկություններ տարածելը, որ լրագրություն (ժուռնալիստիկա) է կոչվել դարեր ի վեր, հիմա դարձել է հանրամատչելի մի բան՝ ավտոմեքենա վարելու նման: Իսկ կար ժամանակ, երբ վարորդը կարգին հարգված մասնագիտություն էր, ու ամեն մեկը չէ, որ կարող էր ավտոմեքենա վարել: Եվ, այնուհանդերձ, ավտոմեքենա վարելու համար էլ բացի արագության լծակի եւ ոտնակների տեղը իմանալուց, պետք է տիրապետել նաեւ երթեւեկության կանոններին: Ոմանք գիտեն ու պահպանում են, ոմանք գիտեն, բայց խախտում են, ոմանք էլ չգիտեն եւ կարծես ցանկություն էլ չունեն իմանալու:

Զանգվածային լրատվության ոլորտն էլ ունի կարգավորող օրենքներ: Սակայն օրենքներից զատ, ինչպես ցանկացած բնագավառում, կան նաեւ վարվեցողության (էթիկայի) կանոններ: Եթե շարունակենք համեմատությունը, ապա կարող ենք հիշատակել հեռավոր երթուղու վարորդների այն կանոնը, որ եթե ճանապարհին խափանված մեքենա ես տեսնում, ապա կանգնիր եւ հարցրու, թե ինչով կարող ես օգնել: Սա, իհարկե, չգրված կանոն է: Մեր բնագավառում կան լրագրողներ եւ լրատվամիջոցներ, որոնք ունեն գրված կանոններ եւ ձգտում են պահպանել դրանք: Կան լրատվամիջոցներ, որոնք ոչ մի կանոնի էլ չեն հետեւում կամ հետեւում են խմբագրի ճաշակի ու կողմնորոշումների կանոնին:

10 տարի հետո (կամ ինչո՞ւ 10 տարի հետո՝ հիմա էլ) ինտերնետում ամեն օր տեղեկություններ տարածող մի երիտասարդ կամ ոչ երիտասարդ կկարդա մեր այս գրույցները ու գուցե կասի. «ի՞նչ օբյեկտիվություն, ի՞նչ անկողմնակալություն, ի՞նչ հղում տեղեկատվության աղբյուրին, ի՞նչ փաստերի ստուգում տարբեր աղբյուրներից... Ես ինչ լսում, տարածում եմ, ես թքած ունեմ որեւէ կանոնի վրա, պետք լինի՝ նաեւ անձնական հարցերս կլուծեմ՝ մեկը մի բան ասի, էնքան բաներ տարածեմ իր մասին՝ տակից դուրս չգա...»:

Սա էլ նրա բարոյականությունն է, նրա էթիկան, որն ինձ, գուցե նաեւ շատերիդ համար անընդունելի է, սակայն դա էլ իր ընտրությունն է...

Բայց նկատի ունեցեք, եթե շատերը փորձեն այսպես վարվել, կառավարությունները կսկսեն օրենքներով սահմանափակել լրատվամիջոցների եւ լրագրողների գործունեությունը, ընդ որում՝ ավելի խիստ մեթոդներով: Այն ժամանակ աղմուկ չբարձրացնեք, թե՝ «հասեք, ճնշում են իմ խոսքի ազատությունը...»:

Այնպես որ, գրելուց առաջ մի պահ մտածենք, իսկ ավելի լա՞վ չէ, որ ինքնակարգավորմամբ սահմանվեն խաղի կանոնները, քան պետությունը գործի դնի մամլիչը...

# ՄՈՒՏՔ

Ցանկացած գործունեությամբ, այդ թվում՝ լրագրությամբ, զբաղվելը ենթադրում է հետեւել որոշակի կանոնների: Դրանք ընդունված է կոչել վարվեցողության կանոններ, էթիկայի կանոններ, վարքականոններ եւ այլն:

Այսպես, սիրալիրության սկզբունքներով առաջնորդվող խանութների եւ բնակչության սպասարկմամբ զբաղվող կազմակերպությունների աշխատակիցների համար վարվելակերպի սկզբունք է «հաճախորդը միշտ ճիշտ է» (կամ՝ «հաճախորդն արքա է») կանոնը: Ոսկերիչներից ոմանք իրենց համար սկզբունք են ընտրում՝ «մի խարդախիր» կարգախոսը: Միջնադարյան համքարությունները ունեին իրենց չգրված կանոնները, որոնց պարտավորվում էր հետեւել յուրաքանչյուրը, ով վարպետ ձեռնադրվելով (մի այլ վարպետի ապտակը «ուտելով») դառնում էր համքարության անդամ:

Լրագրողներն էլ, գործունեություն սկսելով կամ ծավալելով, կամա թե ակամա առաջնորդվում են որոշակի կանոններով: Լավ է, որ դա կամա(վոր) լինի. լրագրողական համքարությունը, առանձին խմբագրություններ կամ հենց անհատ լրագրողներ կամավո՛ր պարտավորություններ ստանձնեն:

Տասնյակ տարիների ընթացքում մշակված տարբեր տեսակի էթիկական կանոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում միեւնույն

սկզբունքների տարբեր շարադրանքներն են: Տողերիս հեղինակն այդ վերլուծությունից առանձնացրել է մոտ մեկ տասնյակ սկզբունք, որոնք հանդիպում են համարյա բոլոր կանոնագրերում կամ կանոնագրքերում: Եվ այստեղ էլ մեր զրույցները այդ սկզբունքների շուրջ են:

Ներկայացվածները պարտադրանք չեն, քանի որ էթիկական վարվելակերպը ինքը, պիտի անընդհատ կրկնենք, կամավորություն է ենթադրում: Ուստի այն սկզբունքները, որ կներկայացվեն այստեղ, ընդամենը խորհուրդներ են, դրանց հետեւելը՝ յուրաքանչյուրի անձնական որոշումն է, իսկ պարտավորվել հետեւելը՝ առավել եւս անձնական է...

Իհարկե, ոչ մի էթիկական կանոն կամ սկզբունք հավերժ չէ: Փոխվում են ժամանակները, փոխվում են նաեւ մեր պատկերացումները բարոյականության եւ բարոյական վարվելակերպի մասին: Ահա թե ճաշակի եւ պատշաճ վարվելակերպի հարափոփոխության մասին ինչ է նշված «Վաշինգտոն փոստ» թերթի էթիկայի կանոնագրում.

**«Վաշինգտոն փոստ»-ը հարգում է ճաշակը եւ պատշաճությունը՝ ընդսմին հասկանալով, որ այդ հասկացությունների մասին հասարակական պատկերացումները հարափոփոխ են: Նախորդ սերնդի համար վիրավորական համարվող բառը հաճախ առօրեական է հաջորդ սերնդի համար:**[1]

Ի դեպ, պարտադիր չէ, որ լրագրողների կամ լրատվամիջոցների վարվեցողության կանոնները կամ էթիկայի կանոնագրերը անպայման պարունակեն այս գրքում հիշատակված բոլոր կանոնները: Հնարավոր է ոմանք իրենց համար սահմանեն այլ կանոններ:

Այդուհանդերձ, ինչպես նկատել է Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը» ժողովածուի նախաբանում, երբ դու առաջնորդվում ես բոլորի համար ընդունելի կանոններով, դառնում ես համքարության մի մաս եւ քեզ անվտանգ ես զգում:[2]

Եվ քանի որ արդեն պայմանավորվեցինք, որ էթիկական վարվելակերպը կամավորություն է ենթադրում, եւ որ յուրաքանչյուրը կարող է ունենալ իր կանոնները, ուստի մինչ մեր զրույցներն սկսելը առաջարկում ենք ընթերցողին լրացնել ստորեւ բերված տողերը (կարծում ենք՝ հետաքրքիր կլինի ե՛ւ մտորելն ու գրի առնելը, ե՛ւ գրչով գրելու հաճույքը վերհիշելը):

ա) Գրեք երեք բան, որ դուք ձեր լրագրողական գործունեության ժամանակ չեք անի երբեք:

բ) Գրեք երեք բան, որ դուք ձեր լրագրողական գործունեության ժամանակ չեք անի՝ բացառությամբ ինչ-ինչ դեպքերի, հանգամանքների, պարագաների:

գ) Եվ երեք բան, որ դուք ձեր լրագրողական գործունեության ժամանակ կանեք անպայման:

Եթե լրացրեցիք (ոչինչ, եթե որեւէ սյունակում երեքի փոխարեն ընդամենը մեկ կամ երկու սկզբունք կամ կանոն գրեցիք), ապա դուք, ըստ էության, ձեզ համար կանոնագիր մշակեցիք: Դժվար չէր, չէ՞:

Իսկ հիմա առժամանակ մոռացեք ձեր գրառումները: Զինվեք համբերությամբ եւ եկեք զրուցենք: Ձեր գրառած կանոններին կանդրադառնաք ու դրանք կհիշեցնենք այս զրույցների վերջում:

## ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԸ ԵՎ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱՇԽԱՐՀԸ

Լրատվամիջոցի հիմնական առաքելությունը լսարանի համար տեղեկություններ եւ գաղափարներ տարածելն է (գումարած ժամանց ապահովելը եւ գովազդային ծառայություններ մատուցելը): Այսինքն՝ լրատվամիջոցը գոյություն չունի հենց այնպես: Ռոբինզոնին իր կղզում պետք չէր թերթ ունենալ, որովհետեւ եթե գրեր էլ

ինչ-nr բան, ապա միշի գrեr միայն ինfն իr համar. ընթեrցող չունեr, Ուrբաթն էլ այդ դեrի համar hարմar չէr: Իr sեղեկասվության միակ աղբյուrը hենց ինfն էr, nrnc ժամանակ անց՝ նաեւ Ուrբաթը, գովազդաsուների եւ hովանավոrների կաrիf էլ առանձնապես չկաr:

Լrասվամիջոցների եւ crջապաsող աշխաrհի hաrաբեrություններից ամենա-կաrեւոrները լսաrանի hեs են. hենց լսաrանի hամar եւ լսաrանի cնոrhիվ գոյություն ունի լrասվամիջոցը:

Այսուհանդեrձ, նույն լսաrանի hամar sեղեկություններ ու գաղափաrներ փնsrելու եւ sաrածելու աշխաsանfում լrասվամիջոցն ու լrագrողները hաrաբեrվում են sեղեկությունների աղբյուrների եւ այդ sեղեկությունների hեrոսների (օբյեկsների) hեs: Այsեղից էլ՝ մեr եւ crջապաsող աշխաrհի hեs hաrաբեrությունների եrկrոrդ կողմը: Այս hաrաբեrությունները նույնպես կաrեւոr են, nrովհեsեւ դժվաr է sեղեկություններ sաrածել առանց դrանf hայթայթելու: Իսկ hայթայթելու hամar, բնականաբաr, պեsf է hաrցնես: Այսsեղից էլ մեr գոrծունեության մյուս կաrեւոr բաղադrիչը՝ hաrց sալը: Մենf՝ լrագrողներս, ամբողջ կյանfում hաrց ենf sալիս: Եվ, եթե կուզեf, մեr գոrծունեության hիմfը hենց hաrց sալն է: Չէ՞ nr hասաrակությունը կազմված է hիմնականում զբաղված մաrդկանցից եւ նrանf ժամանակ չունեն իrենց hեsաfrfrող խնդիrների վեrաբեrյալ hաrցումներ ուղղել: Ահա այդ hասաrա-կությունից առանձնացել ենf մենf՝ լrագrողներս եւ նrանց փոխաrեն hաrց ենf sալիս, պաsասխաններ sանում եւ այդ պաsասխանները բեrում hանձնում նույն hանrությանը՝ sեղեկությունների, գաղափաrների, կաrծիfների sեsfով՝ hոդվածով, hեռուսաsառաղhոսուժեով, ինsեrնեsային hաղոrդագrությամբ:

Եվ վեrջապես, գոյություն ունենալու hամar, լrասվամիջոցը պեsf է ֆինանսական միջոցներ hայթայթի: Ֆինանսավոrման hիմնական աղբյուrը վաճառfն է: Մի cսապեf առաrկել. վաճառf ասելով նկաsի չունենf միայն թեrթի բաժանոrդագrությունը եւ hասավաճառը: Վաճառfը, դrանից բացի, ենթադrում է նաեւ ամենակաrեւոrը՝ գովազդը, nr լrասվամիջոցների ֆինանսավոrման hիմնական աղբյուrն է: Ինչfան cաs մաrդ է պաsrաս 100 դrամ վճաrել գնելու hամar թեrթը, ինչfան cաs մաrդ է hեռակառավաrման վահանակի կոճակը սեղմում hենց ձեr ալիfի վrա, ինչfան cաs մաrդ է մկնիկի կոճակը կsցնում ձեr ինsեrնեsային էջում, այնfան ավելի cաs է գովազդային sաrածf (ժամանակ) վաճառելու ձեr hնաrավոrությունը: Այսինfն, վաճառf ասելով, նկաsի ունենf, նաեւ, nr գովազդի hամar մենf գովազդաsուին ենf վաճառում մեr լսաrանը: Գովազդաsուներից զաs կա ֆինանսավոrման եւս մի աղբյուr՝ hովանավոrները: Այսsեղից էլ՝ լrասվամիջոցի եւ crջապաsող աշխաrհի hաrաբեrությունների եrrոrդ կողմը ՝ hաrաբեrությունները գովազդաsուների եւ hովանավոrների hեs:

Եվ եթե այդ hաrաբեrություններին եrկrաչափական պաsկեrի sեսf sանf, ապա կսsացվի մի hավասաrակողմ եռանկյուն, nrի մի կողմը լսաrանի hեs

հարաբերություններն են, մյուս կողմը՝ տեղեկատվության աղբյուրների եւ օբյեկտների հետ հարաբերությունները, երրորդ կողմը՝ գովազդատուների եւ հովանավորների հետ հարաբերությունները (նկար 1): Իսկ եռանկյան մակերեսը՝ այդ երեքի շահերն են, որ հաստատ բախվում են իրար:

Նկար 1




Այս հարաբերությունների կարգավորման համար կան օրենքներ, իսկ դրանցից զատ՝ լրագրողներն ու լրատվամիջոցներն ընդունում են խաղի սեփական կանոններ՝ անվանելով դրանք էթիկական կանոններ, վարքականոններ եւ այլն: Եվ օրենքների, եւ էթիկական կանոնների խախտումների դեպքում կա պատասխանատվություն: Եվ եթե շարունակենք երկարաչափական պատկերով ցուցադրել, ապա կստացվի նկար 2-ը:

Նկար 2




Ինքնակարգավորման մի բաղկացուցիչը հանդիսացող էթիկական կանոնները կամ վարքականոնները անվանել ենք ազնիվ խաղի կանոններ: Ընդ որում, ազնիվ է նաեւ հայտարարելը, որ դուք ոչ մի կանոն չեք ընդունում, ձեզ համար չկան նորմեր, եւ ձեզ կաշկանդողը միայն օրենքներն են: Սա ավելի ազնիվ է, քան եթե հայտարարեք, ասենք, թե լինելու եք բազմակարծ, անկողմնակալ, հավաստի եւ այլն, սակայն այդպես էլ ոչ մի անգամ այլ տեսակետ չհրապարակեք, աղբյուրներին հղում չկատարեք եւ այլն:

Ազնիվ խաղի կանոններն էլ հենց նշանակում են ազնվություն նկար 1-ում պատկերված եռանկյան կողմերի հետ հարաբերություններում:

Այսինքն՝

- ազնվություն լսարանի հետ հարաբերություններում
- ազնվություն տեղեկատվության աղբյուրների եւ տեղեկատվության օբյեկտների հետ հարաբերություններում
- ազնվություն գովազդատուների եւ հովանավորների հետ հարաբերություններում:

Հենց այս երեք հարաբերությունների մեջ էլ կդիտարկենք ազնիվ խաղի այն կանոնները, որոնք պարզապես իբրեւ խորհուրդ կառաջարկենք: Պիտի նորից կրկնենք, այս խորհուրդները դոգմաներ եւ պարտադրանքներ չեն: Դրանց գործելու հիմնական պայմանը կամավոր ընդունելն է: Այդ հարաբերություններից յուրաքանչյուրի համար մենք առանձնացրել ենք մի քանի սկզբունքներ կամ կանոններ:

## ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

- Օբյեկտիվություն եւ անկողմնակալություն
- Հավաստիություն
- Փաստերի եւ կարծիքների տարանջատում
- Տեղեկատվության եւ գովազդի տարանջատում

## ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

- Աղբյուրի գաղտնիության պահպանում եւ off the record տեղեկությունների չհրապարակում
- Հարգանք մարդկանց անձնական կյանքի նկատմամբ
- Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների նկատմամբ
- Սխալների ուղղում եւ պատասխանի հնարավորության տրամադրում

## ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՎԱԶԴԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

- Խմբագրական անկախություն, գովազդատուների եւ հովանավորների լուսաբանման առավելության բացառում

Սակայն այդ երեք հարաբերությունների համար առաջարկվող սկզբունքներից առանձնացրել եւ իբրեւ առաջին զրույցի թեման դիտարկելու ենք շահերի բախումից խուսափելու սկզբունքը, իսկ թե ինչու՝ ասված է հենց զրույցի սկզբում:

---

1 «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը»: ԵՄՍ, Երեւան-2000, էջ 36

2 «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը»: ԵՄՍ, Երեւան-2000, էջ 14

> Շահերի բախումից խուսափելը այլ բան չի նշանակում, քան ցանկացած իրավիճակում նախապատվությունը տալ լրատվամիջոցի հեղինակության շահին:

## Զրույց առաջին

# Խուսափել շահերի բախումից




Լուսանկարը՝ corporate-entrepreneurs.com-ից

Այս սկզբունքը մենք դնում ենք առաջինը, որովհետեւ ազնիվ խաղի մնացած բոլոր կանոնները այս կամ այն կերպ առնչվում են սրան:

Նորից հիշենք նկար 1-ում պատկերված եռանկյունը: Վստահ եմ, որ հարց առաջացավ. իսկ լրագրողի եւ լրատվամիջոցի՞ շահերը... Եվ շատ տեղին հարց է: Չէ՞ որ լրագրողն էլ մարդ է եւ հաստատ ունի անձնական շահեր: Այո, գործունեության ընթացքում հաճախ նաեւ այդ շահն է բախվում մնացած շահերին:

Ձեր, իբրեւ օբյեկտիվ եւ անկողմնակալ լրատվամիջոցի շահն է՝ ամբողջական տեղեկություններ, կարծիքներ, գաղափարներ, մեկնաբանություններ, զվարճանք տարածելով՝ հնարավորինս շատ ընթերցողներ ներգրավել:

Լսարանի շահն է՝ ստանալ անաչառ, անկողմնակալ, հավաստի (ճշտված) տեղեկություններ, իրազեկ մեկնաբանություններ, իր համար հաճելի զվարճալի եւ ժամանցային նյութեր:

Երկուսից էլ մի կողմ թողնենք զվարճանքը, որը մեր քննարկումներից դուրս է: Ինչպես տեսնում ենք, տեղեկությունների տարածման եւ ստացման առումով երկու կողմերի շահերը համընկնում են: Սակայն այս շահերին երբեմն գալիս եւ բախվում են այլ շահեր՝ ձեր անձնական շահերը, աղբյուրների շահերը, հրապարակումների հերոսների շահերը, երրորդ անձանց շահերը, գովազդատուների եւ հովանավորների շահերը եւ այլն...

Կարեւորը այս շահերը հավասարակշռելն է, այսինքն՝ շահերի բախումից խուսափելը...

Շահերի բախումից խուսափելը այլ բան չի նշանակում, քան ցանկացած իրավիճակում նախապատվությունը տալ լրատվամիջոցի հեղինակության շահին: Ընդ որում, կարող է իրավիճակ լինել, որ այդ հեղինակության համար դուք նախապատվությունը տաք ոչ թե, ասենք, տեղեկատվական ամբողջականությանը, այլ, օրինակ, տեղեկատվության օբյեկտին: Օրինակ, երբ այդ օբյեկտն անչափահաս է կամ բռնության զոհ... Ավելին, հնարավոր է, որ շահերի բախումից խուսափելու համար լրագրողը հրաժարվի ընդհանրապես լրագրությամբ զբաղվել կամ ժամանակավորապես կասեցնի նման գործունեությունը. ասենք՝ ընտրությունների ժամանակ, երբ ինքն ակտիվորեն ներգրավված է ընտրական գործընթացում:

Ահա նման մի օրինակ. երբ Գյումրիում լույս տեսնող «Գյումրի-Ասպարեզ» թերթի գլխավոր խմբագիր Լեւոն Բարսեղյանը մասնակցում էր տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին իբրեւ ավագանու թեկնածու, նա տարածեց հետեւյալ հայտարարությունը.

**22 օգոստոսի, 2012**
**«Գյումրի-Ասպարեզ» օրաթերթի գլխավոր խմբագիր Լեւոն Բարսեղյանի հայտարարությունը**

**Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ես Գյումրու ավագանու անդամության համար առաջադրել եմ իմ թեկնածությունը, իսկ այսօրվանից մեկնարկում է պաշտոնական քարոզարշավը, չկամենալով «Գյումրի-Ասպարեզ» օրաթերթի եւ www.asparez.am տեղեկատվական կայքի խմբագրի դիրքով գերազանցություն ունենալ այլ թեկնածուների նկատմամբ, ժամանակավոր եւ կամավոր կասեցնում եմ իմ աշխատանքը այդ ԶԼՄ-ներում որպես խմբագիր մինչեւ 2012 թվականի սեպտեմբերի 17-ը ներառյալ:**[1]

Ընտրելով հասարակական գործունեությունը (մասնակցությունը ավագանու ընտրություններին)՝ լրագրողը հրաժարվում է (ժամանակավորապես) մասնագիտական գործունեությունից, այսինքն՝ գերադասում է իր ղեկավարած լրատվամիջոցի շահը (անկողմնակալ եւ անաչառ հրատարակության վարկը) իր անձնական այն շահից, որ կարող էր ստանալ՝ շարունակելով լրագրողական գործունեությունը:

Շահերի բախումից խուսափելու սկզբունքն ամենից առաջ վերաբերում է լսարանի, ապա նաեւ՝ տեղեկատվության աղբյուրների ու օբյեկտների հետ հարաբերություններին:

Հատվածներ «Վաշինգտոն փոստ» թերթի էթիկայի կանոնագրի «Շահերի բախում» բաժնից:

**Մեր լրագիրը պարտավորվում է հնարավորինս խուսափել շահերի բախումից: Մենք խիստ քաղաքականություն ենք որդեգրել՝ գիտակցելով, որ մեր սահմանափակումները կարող են ավելի խիստ լինել, քան ընդունված է մասնավոր բիզնեսի ոլորտում: Մասնավորապես.**

**- Մենք ինքներս ենք հոգում մեր ծախսերը:**

**- Մենք լրատվության աղբյուրներից որեւէ նվեր չենք ընդունում: Մենք դեմ ենք անվճար ուղեւորություններին: Մենք չենք ակնկալում եւ չենք ընդունում որեւէ արտոնություն, որ կարող է տրվել մեր հրատարակության դիրքի շնորհիվ: Այս կանոնից միակ եւ ընդունելի բացառությունն, օրինակ, ճաշի հրավերն է, երբ այն պատահական է, անշահախնդիր, չի կրկնվում եւ նախապես չի ծրագրվել...**

**... Առանց ղեկավարության թույլտվության «Վաշինգտոն փոստ»-ից բացի ոչ մեկի համար չենք աշխատում: Կողմնակի գործունեությունն ու աշխատանքն անհամատեղելի են...**

**... Բիզնեսի կամ ֆինանսական ոլորտները լուսաբանելիս շահերի իրական կամ թվացյալ բախումից խուսափելու համար բաժնի լրագրողները պատասխանատու խմբագրին պետք է ներկայացնեն իրենց եկամուտներն ու ներդրումները...**

**... Մենք ամեն ջանք գործադրում ենք լրատվության աղբյուրներից եւ կոնկրետ շահերից կախում չունենալու համար: Հարկավոր է զգույշ լինել այն պաշտոնյաների հետ անձնական կապեր ունենալուց, որոնք իրենց դիրքի պատճառով լրագրողական հետաքրքրության եւ ուսումնասիրության առարկա կարող են հանդիսանալ...**

**... Մենք խուսափում ենք քաղաքական, հասարակական, սոցիալական շարժումներին եւ ցույցերին ակտիվ մասնակցելուց, ինչը կարող է վիճելի դարձնել անաչառ, անկողմնակալ եւ արդարացի հրատարակության մեր վարկը:**

**Լրագրողների հարազատներն իրավամբ կարող են չենթարկվել «Վաշինգտոն փոստ»-ի պահանջներին, բայց պետք է ընդունել, որ նրանց ծառայողական դիրքը կամ մասնակցությունը նման իրադարձություններին կարող են առնվազն խաթարել մեր հեղինակությունը: Ընտանիքի անդամների կամ հարազատների գործնական եւ մասնագիտական կապերը պետք է հայտնի լինեն բաժնի պատասխանատուին:**[2]

Ահա եւ Հայաստանում գործող Հետաքննող լրագրողների ընկերակցության «Հետք» էլեկտրոնային թերթի էթիկայի կանոնագրի՝ շահերի բախումից խուսափելու սկզբունքին վերաբերող կանոնները:

**Չընդունել նվերներ, հրաժարվել անվճար ուղեւորություններից կամ այլ ծառայություններից, որոնք կասկածի տակ կարող են դնել մեր անկախությունը ու անկողմնապահությունը եւ վտանգել հասարակության վստահությունը «Հետք» թերթի նկատմամբ: Եթե**

**հնարավոր չէ խուսափել նվերից, ապա ընդունելով այն՝ ուղարկել մանկատներ, ծերանոցներ կամ նման այլ հաստատություններ:**

**Չենթարկվել քաղաքական ու ֆինանսական ազդեցությունների ու ճնշումների:**

**Չլինել որեւէ կուսակցության անդամ, քաղաքականության մեջ չներքաշվել, պետական պաշտոններ չզբաղեցնել:**

**Խուսափել երկրորդ աշխատանքից, եթե դա կասկածի տակ է դնում լրագրողի անկախությունն ու օբյեկտիվությունը:**

**Խուսափել պաշտոնյաների հետ խիստ մտերիմ կապեր ունենալուց: Մեր անձնական եւ մասնագիտական վարքագիծը չպետք է անվստահություն եւ կասկած ներշնչի մասնագիտության եւ թերթի նկատմամբ:**[3]

Այսպիսով, շահերի բախումից խուսափելու մի քանի հիմնական կետեր առանձնացնենք:

Որպեսզի ձեր լրատվամիջոցի օբյեկտիվության շահը, ձեր անձնական շահերը, տեղեկատվության աղբյուրների եւ օբյեկտների շահերը, գովազդատուների եւ հովանավորների շահերը չբախվեն իրար, աշխատեք՝

1 Նվերներ չընդունել տեղեկատվության աղբյուրներից, այդ թվում՝ PR կառույցներից:
2 Գործուղման չմեկնել նրանց հաշվին:
3 Ակտիվորեն ներգրավված չլինել քաղաքական կամ հասարակական գործունեության մեջ:
4 Չանդամակցել որեւէ քաղաքական ուժի:
5 Չաշխատել այլոց համար:
6 Չգրել այն կազմակերպությունների գործունեության մասին, որոնցում դուք շահեր ունեք (ասենք՝ բաժնետեր եք):
7 Չգրել ձեզ եւ ձեր մերձավորներին առնչվող խնդիրների մասին:
8 Ձեր լրագրողական դիրքն ու հնարավորությունները չօգտագործել անձնական հարցեր լուծելու համար:
9 Խմբագրական հրապարակումներում առավելություն չտալ գովազդատուներին եւ հովանավորներին:
10 Այլ (մտածեք ինքներդ):

______________________________

______________________________

## Առաջադրանք

Պատկերացրեք այսպիսի պարզ իրավիճակ. խմբագրությանը հայտնի են դարձել մի նախարարությունում կոռուպցիոն սկանդալի մասին փաստեր: Ընդ որում, և՛ ոստիկանությունը, և՛ տվյալ նախարարությունը պատրաստակամ են տրամադրելու որոշ մանրամասներ: Ձեր լրատվամիջոցի ղեկավարը հենց ձեզ է հանձնարարել լուսաբանել այդ գործը: Նյութեր հավաքելու ընթացքում պարզում եք, որ այդ սկանդալում ներքաշված է նաեւ ձեր մանկության ընկերը, որին վաղուց չեք տեսել: Ի՞նչ կանեք դուք:

Մտածեք, խնդրեմ, եւ ստորեւ նշված գործողություններից առանձնացրեք այն, որը կնախընտրեք անել նման իրավիճակում:

- Կհրաժարվեմ լուսաբանելուց եւ կխնդրեմ խմբագրին այն հանձնարարել մեկ ուրիշ լրագրողի:
- Ամեն դեպքում կլուսաբանեմ՝ անտեսելով ընկերության շահը եւ մնալով հնարավորինս անաչառ ու անկողմնակալ:
- Կլուսաբանեմ՝ տեղեկությունների մեջ փնտրելով ընկերոջս արդարացնող փաստեր եւ ներկայացնելով նաեւ դրանք:
- Կհրաժարվեմ լուսաբանելուց եւ կխնդրեմ խմբագրին, որ մեր լրատվամիջոցն ընդհանրապես չանդրադառնա դրան:
- Անմիջապես կտեղեկացնեմ ընկերոջս, որ իր գլխին սեւ ամպեր են կուտակվում:
- Այլ (նշեք ինքներդ):

Իսկ եթե դուք ոչ թե լրագրող եք, այլ, ասենք, գլխավոր խմբագի՞ր, որը պատասխանատու է ողջ լրատվական բովանդակության համար:

Մտածեք եւ ստորեւ բերված տողերում գրառեք այն գործողությունները, որ, իբրեւ լրատվամիջոցի ղեկավար, կանեք այդ դեպքում:

Չմոռանանք կրկնել, որ նման իրավիճակները չունեն էթիկապես «ճիշտ» լուծումներ: Ինչպես վերեւում արդեն ասել ենք, կան ոմանց համար ընդունելի լուծումներ, որոնք կարող են այլոց համար անընդունելի լինել: Ընդ որում, մեկ դեպքում լուծումը կարող է մի կերպ լինել (ասենք՝ դուք գերադասեք մի շահը), մի այլ դեպքում՝ այլ կերպ: Դա կախված է տեղեկատվության հասարակական նշանակությունից, ինչպես նաեւ ձեր անձնական շահի աստիճանից:

Բերվածը, այո, պարզագույն իրավիճակ է, սակայն մանավանդ մարզային կամ քաղաքային լրատվամիջոցները նման իրավիճակների հաճախ կարող են բախվել: Ամեն դեպքում, լրատվամիջոցն ու լրագրողն իրենք են ընտրում, թե որ շահին տալ նախապատվությունը եւ իրենք են նման որոշման համար պատասխանատու: Խոսքն, անշուշտ, լսարանի առջեւ պատասխանատվության մասին է:

Ներկայացնենք մի քիչ ավելի բարդ թվացող իրավիճակ:

Ձեզ զանգահարում եւ առաջարկում են փաստաթղթերով հիմնավորված տեղեկություններ՝ բնակչությունից գաղտնի պահվող ռադիացիայի իրական չափերի եւ նորմատիվների գերազանցման մասին: Սակայն տեղեկատվության աղբյուրը դա ձեզ կտրամադրի միայն որոշակի վճարի դիմաց: Խմբագրական խորհուրդը պիտի որոշում կայացնի՝ գնե՞լ, թե՞ ոչ: Ընդ որում, դուք ունեք սկզբունք՝ ոչ մի դեպքում չվճարել տեղեկությունների դիմաց...

Մտածեք, խնդրեմ, եւ ստորեւ բերված տարբերակներից ընտրեք հնարավոր գործողությունը.

- Կգնեմ այդ ինֆորմացիան, որովհետեւ հասարակական շահն այս դեպքում ավելի կարեւոր է, քան ինֆորմացիա չգնելու մեր սկզբունքը:
- Հավատարիմ կմնամ իմ սկզբունքին եւ չեմ գնի այդ ինֆորմացիան՝ միաժամանակ ձգտելով այն ձեռք բերել այլ աղբյուրից՝ օրինական ճանապարհով:
- Կհրապարակեմ նյութ, որ մեր ունեցած տեղեկություններով բնակչությունից թաքցվում է ռադիացիայի իրական չափը եւ կսպասեմ պետական մարմինների արձագանքին:
- Այլ (նշեք ինքներդ):

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

Իսկ եթե ձեզ առաջարկում են հայտնի պատգամավորի ինտիմ կյանքին վերաբերող լուսանկարնե՞ր, ընդ որում՝ իրենք են պատրաստ վճարել, որ դուք հրապարակեք դրանք: Ինչպե՞ս կվարվեք...

Մի՛ շտապեք պատասխանել. մի պահ մտածեք եւ ծանրութեթեւ արեք ձեր վարվելակերպը, ապա՝ որոշում ընդունեք:

Իսկ այս բաժնի վերջում, վերը մեջբերված կանոններից առանձնացրեք ու ստորեւ տողերում գրեք նրանք, որոնք ձեզ համար ընդունելի են կամ՝ ձեւակերպեք շահերի բախումից խուսափելու ձեր կանոնը:

**Հ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ Իլյա Իլֆի եւ Եվգենի Պետրովի «Լրագրող Օշեյնիկովը» երգիծական պատմվածքը, որտեղ հեղինակները գրոտեսկային ոճով ներկայացնում են, թե ինչպես է լրագրողը փորձում մեկ հոդվածով շահել պաշտոնյաների սրտերը՝ ապագայում անձնական խնդիրները լուծելու համար: Պատմվածքի հայերեն տարբերակը կարող եք կարդալ Այդին Մորիկյանի կազմած «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու. Բնագրեր» գրքում (Երեւանի մամուլի ակումբ, Բաց հասարակության ինստիտուտ, «Վելաս պրինտ», Երեւան – 2006, էջ 229):*

1. Տես http://www.asparez.am/news-hy/haytararautyun-hy/,
http://www.lragir.am/armsrc/country70033.html
եւ մի քանի այլ կայքերում: Վերջին դիտումը՝ 01.09.2012թ.

2. «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը»:
ԵՄԱ, Երեւան-2000, էջ 32-33

3. Հետաքննող լրագրողների ընկերակցության «Հետք» էլեկտրոնային թերթի էթիկայի կանոնագիր (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 6-ին) http://hetq.am/arm/about/code-of-ethics/,
վերջին դիտումը՝ 04.10.2012թ.

# ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լսարանի առջեւ ազնիվ լինելն ամենից կարեւորն է. չէ՞ որ լրատվամիջոցն ու լրագրողը աշխատում են հենց լսարանի համար: Ընդ որում, միշտ երեւի պետք է նկատի ունենալ, որ վերը բերված եռանկյան մյուս կողմերը՝ տեղեկատվության աղբյուրներն ու օբյեկտները, գովազդատուներն ու հովանավորները նույնպես լսարանի մասն են կազմում, եւ սա է պատճառը, որ լսարանն է ամենից կարեւորը ԶԼՄ-շրջապատող աշխարհ հարաբերություններում:

Այդ ազնվությունը ենթադրում է, որ դուք լսարանին տեղյակ եք պահում (լավ կլինի՝ գրված ու հրապարակված), թե ինչ կանոններով եք «խաղում» մեդիա դաշտում:

Պետք է միշտ նկատի առնել, որ ձեր գործը, ցուցադրածը, հաղորդածը բազմաթիվ մարդկանց համար է: Եվ եթե դուք ազնիվ չեք լսարանի հետ, ապա շատ շուտով կկորցնեք այն: Իսկ լսարանի կորուստը տնտեսական կորուստներ է նշանակում: Հետեւաբար, ազնվությունը լսարանի հետ հարաբերություններում նաեւ տնտեսական օգուտներ է ենթադրում:

Հարկ է եւս մեկ բան ավելացնել. եթե լրատվամիջոցը կամ լրագրողը հայտարարում է, թե ինքն այս կամ այն ուժի կողմնակից է, դա էլ ազնիվ խաղալու կամ լսարանի հետ ազնիվ հարաբերվելու դրսեւորում է: Սակայն նա (լրագրողը կամ լրատվամիջոցը) պետք է նկատի ունենա, որ այս դեպքում, գերադասելով ամեն ինչ իր նախընտրած կամ իրեն հովանավորող ուժի (խմբի, կուսակցության, կազմակերպության եւ այլն) տեսակետից ներկայացնելը, այսինքն՝ այդ ուժի շահերը գերադասելով անկողմնակալ տեղեկություններ ստանալու ընթերցողի շահից, կորցնում է ընթերցողների վստահությունը...

... Այսուհանդերձ, դա ավելի ազնիվ է այն դեպքից, երբ լրատվամիջոցը հայտարարում է, թե ինքն անկախ է եւ պատրաստ ներկայացնելու ցանկացած տեսակետ, սակայն նրա բովանդակության ուսումնասիրողը այլընտրանքային որեւէ տեսակետ այնտեղ չի հայտնաբերում:

Լսարանի հետ ազնիվ խաղի կանոններից առանձնացրել ենք չորսը:
Ահա դրանք.

- ա) օբյեկտիվություն եւ անկողմնակալություն,
- բ) հավաստիություն,
- գ) փաստերի, կարծիքների եւ մեկնաբանությունների տարանջատում,
- դ) տեղեկատվության եւ գովազդի տարանջատում:

> Նյութը անաչառ չէ, եթե այն գիտակցաբար կամ անգիտակցաբար ապատեղեկացնում կամ նույնիսկ մոլորեցնում է ընթերցողին: Անաչառությունը ընթերցողի նկատմամբ ազնվությունն է:

## Զրույց երկրորդ

# Բազմամա՞րդ է, արդյոք, հանրահավաքը, թե՞ սակավամարդ

### Տեղեկատվության օբյեկտիվության (անաչառության) եւ անկողմնակալության մասին



Մինաս Ավետիսյան, «Խնոցի են հարում», 1964 թ., Հայաստանի պետական պատկերասրահ

Մի պահ հիշենք դարերով հայկական գյուղերում օգտագործված խնոցին: Որպեսզի ավելի լավ պատկերացնենք, նայենք Մինաս Ավետիսյանի «Խնոցի են հարում» նկարը:

Ի՞նչ աշխատանք է կատարվում խնոցիով: Հիշենք՝ կաթի սերը լցնում են մեջը, խնոցին տարուբերում են, եւ հարվելուց կարագը (յուղը) առանձնանում է թանից: Ընդ որում, հետագայում օգտագործվում է ե՛ւ յուղը, ե՛ւ թանը:

Դե, իսկ հիմա խնոցու աշխատանքը համեմատենք լրագրողի աշխատանքի հետ. լրագրողը հավաքում է անհրաժեշտ տեղեկությունները, «թափահարում է» այն՝ առանձնացնում ամենակարեւոր փաստերը (յուղալին), որը դրվում է վերեւում, իսկ տակը մնում է մնացած մանրամասները, օգտագործելին (համեմատենք ժուռնալիստիկայի դասագրքերից ձեզ հայտնի շրջված բուրգի հետ):

Շարունակենք համեմատությունը. եթե խնոցին յուղը (կարագը) առանձնացնում է «օբյեկտիվորեն» (մեր «սուբյեկտիվ» միջամտությունը միայն այն ճոճելն է), ապա լրագրողը եւ լրատվամիջոցը փաստերը (նորությունները, իրադարձությունները, կարծիքները եւ այլն) ընտրում են՝ հիմնվելով կարեւորության սեփական պատկերացումների վրա. մե՛ր կարծիքով է ընթերցողին հենց մե՛ր ընտրածը հետաքրքիր: Այսինքն, լուսաբանման համար տեղեկությունների ընտրությունը կրում է մեր սուբյեկտիվ ազդեցությունը:

Բայց միայն փաստերի ընտրությունը չէ. լրագրողներն իրենց նախընտրությունները, երբեմն՝ ակամա, երբեմն՝ միտումնավոր, ցուցադրում են անմեղ թվացող բառերով, օրինակ՝ «բազմամարդ (սակավամարդ) հանրահավաք»: Այս բառերն արդեն սուբյեկտիվության տարրեր են մտցնում, եւ մեր օբյեկտիվությունը որոշակի կորուստ ունենում է:

Այսպիսով, օբյեկտիվության բարձր մակարդակի հասնում ենք փաստերի ընտրությամբ եւ այդ փաստերի պարզ, չեզոք շարադրմամբ:

Ոչ էական փաստերը մի կողմ ենք դնում:

Թեպետ, կրկնեմ, սուբյեկտիվ ընկալման արդյունք է, թե որ փաստն է էական, որը՝ ոչ:

Ահա արտաքուստ չեզոք, միայն փաստեր ներկայացնող մի լրատվություն:

Այսօր՝ օգոստոսի 4-ին, ավտովթար է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 12.30-ի սահմաններում Երեւան-Իջեւան ավտոճանապարհի 63-րդ կիլոմետրի հատվածում իրար են բախվել Երեւանի բնակիչ 38-ամյա Արթուր Սիմոնյանի վարած «Օպել Կորսա» մակնիշի 33 ՊՍ 132 համարանիշի եւ Երեւանի բնակիչ 63-ամյա Բաբկեն Բաղդասարյանի վարած «Սեաս Տոլեդո» մակնիշի 31 ՍՍ 412 համարանիշի ավտոմեքենաները:

Ինչպես դեպքի վայրից Tert.am-ին հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր են ժամանել ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 4-րդ վաշտի աշխատակիցները՝ հրամանատար Սերգեյ Հակոբյանի գլխավորությամբ: Տեղում է նաեւ ՃՈ հետաքննիչ Ներսիկ Գրիգորյանը: Վրաերթի հետեւանքով դեպքի վայր ժամանած Սեւանի հիվանդանոցի շտապ բուժբրիգադը առաջին բուժօգնություն է ցուցաբերել «Օպել Կորսայի» ուղեւոր 37-ամյա Նարինա Մանուկյանին: Վերջինս բժիշկներին հայտնել է, որ հրաժարվում է բժշկական օգնությունից, քանի որ իրեն լավ է զգում:

Դեպքի վայրում քննչական աշխատանքները ղեկավարում է Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սեւանի քննչական բաժանմունքի քննիչ Վիգեն Հարությունյանը: Փաստի առթիվ Սեւանի քննչական բաժանմունքում նյութեր են նախապատրաստվում:[1]

**Tert.am 04.08.12**

## Առաջադրանք

Խնդրում եմ, մտածեք եւ ինքներդ ձեզ համար վերլուծեք վերը բերված նյութը: Արդյոք ներկայացված բոլոր փաստե՞րն են էական: Դուք ո՞ր փաստերը կհանեիք կամ՝ է՞լ ինչ կցանկանայիք ավելացնել: Փորձեք եղած փաստերի հիման վրա վերաշարադրել այս լուրը:

Հարց. հնարավո՞ր է հասնել բացարձակ օբյեկտիվության: Պատասխանը միանշանակ չէ: Ըստ փորձագետների (եւ վերը մենք դա ցույց տվեցինք խնդրու հետ համեմատությամբ) լրատվության ոչ օբյեկտիվությունը սկսվում է հրապարակման համար նախատեսվող նորությունների եւ այդ նորության փաստերի ընտրությունից: Լրատվամիջոցը ինքն է ընտրում իր կարծիքով ընթերցողի համար հետաքրքիր նորությունը: Իսկ այդ նորությունը (լուրը) շարադրելիս լրագրողն ինքն է ընտրում իր կարծիքով ընթերցողներին հետաքրքիր փաստերը, ապա եւ՝ շարադրում դրանք իր սուբյեկտիվ ընկալման արդյունք հանդիսացող հերթականությամբ ու բառերով:

Այսպիսով, օբյեկտիվությունը (անաչառությունը) առավելապես վերաբերում է փաստերը ներկայացնելուն, իսկ դրա բնական կորուստները խորհուրդ է տրվում լրացնել անկողմնակալությամբ:

Անկողմնակալությունը վերաբերում է տեսակետներ եւ կարծիքներ ներկայացնելուն: Սա նշանակում է հասարակությանը մատուցել տվյալ երեւույթի, իրադարձության կամ գաղափարի վերաբերյալ նույն հասարակության մեջ եղած տարբեր (հնարավորինս շատ) կարծիքներ: Ընդ որում՝ անկողմնակալության սկզբունքը կիրառելի է ինչպես մեկ առանձին վերցված հրապարակման համար,

այնպես էլ՝ ողջ լրատվամիջոցի բովանդակության: Այսինքն՝ անկողմնակալության կարելի է հասնել ոչ միայն անպայման մեկ հրապարակման կամ լրատվամիջոցի նույն թողարկման մեջ, այլեւ՝ հետագայում եւս նույն խնդրի վերաբերյալ այլ տեսակետները ներկայացնելով:

Օբյեկտիվության սկզբունքի բավականին հաջող սահմանում է տրված «Վաշինգտոն փոսթ» թերթի էթիկայի կանոնագրում:

**«Վաշինգտոն փոսթ»-ի լրագրողները եւ խմբագիրները դավանում են անաչառության սկզբունքին...**

**... Անաչառությունը պահանջում է մի քանի կանոնների պահպանում.**

**Նյութն անաչառ չէ, եթե կարեւոր եւ նշանակալի փաստեր են անտեսված: Անաչառությունն ու լիարժեքությունն անբաժանելի են:**

**Նյութը անաչառ չէ, եթե էական փաստերի փոխարեն երկրորդական տեղեկություններ են մատուցվում: Անաչառությունն էականի ներառումն է: Նյութը անաչառ չէ, եթե այն գիտակցաբար կամ անգիտակցաբար ապատեղեկացնում կամ նույնիսկ մոլորեցնում է ընթերցողին: Անաչառությունը ընթերցողի նկատմամբ ազնվությունն է:**

**Նյութը անաչառ չէ, եթե լրագրողները թաքցնում են իրենց աչառու վերաբերմունքը այնպիսի անվնաս թվացող բառերի հետեւում, ինչպիսիք են՝ «մերժված», «չնայած», «հանգիստ» «ընդունելի» կամ «զանգվածային»: Անաչառությունը պահանջում է շիտակություն:**[2]

Ինչպես տեսաք, մենք, ըստ «Վաշինգտոն փոսթ»-ի կանոնագրի, օբյեկտիվ (անաչառ) չեղանք եւ սեփական գնահատական տվեցինք՝ մինչ մեջբերումը գրելով «բավականին հաջող սահմանում է տրված «Վաշինգտոն փոսթ» թերթի էթիկայի կանոնագրում»: «Բավականին հաջող» արտահայտությունը մեր սուբյեկտիվության դրսեւորումն էր:

Իհարկե, յուրաքանչյուրն ազատ է՝ տեսակետներ ու գաղափարներ արտահայտելու, սակայն անկողմնակալության հասնում են՝ այդ տեսակետերին հակադրվողներին էլ ներկայացնելով:

Ահա այս սկզբունքի ձեւակերպումները «Առավոտ» օրաթերթի կանոններում:

**1. «Առավոտի» լրագրողները խուսափում են սահմանազատում են լրատվությունը մեկնաբանություններից. լուրի եւ ռեպորտաժի մեջ չեն ներդնում սեփական դատողություններն ու էմոցիաները:**

**2. «Առավոտի» լրագրողները ձգտում են ապահովել նյութերի ծըրագրայնությունն ու բազմակողմանիությունը, բոլոր հնարավորությունները օգտագործել՝ տեղեկատվությունը առնվազն երկու աղբյուրից ճշտելու համար: Այն անձը կամ կազմակերպությունը, որի մասին նյութում բացասական կարծիք կամ մեղադրանք է հնչեցվում, հնարավորություն ունի «Առավոտի» նույն նյութում կամ հաջորդ օրերին տպագրվելիք նյութերում պարզաբանում կամ պատասխան տալ:**

**3. «Առավոտի» լրագրողները սեփական մեկնաբանություններում զերծ են մնում վիրավորանքներից, որակումներից, պիտակավորումներից:**

**4. «Առավոտը» չի արտահայտում որեւէ քաղաքական խմբի տեսակետը: «Առավոտը» բաց է անխտիր բոլոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչների առջեւ՝ իրենց տեսակետներն արտահայտելու համար, եթե այդ տեսակետները չեն պարունակում որեւէ մեկի հասցեին անձնական վիրավորանք: «Առավոտի» լրագրողներն ու խմբագիրը աշխատում են հավասարակշռել արտահայտած տեսակետը՝ նույն խնդրով ընդդիմախոսի տեսակետով:[3]**

Վերը ասվածը հիմնականում վերաբերում է լրատվական նյութերին: Իսկ վերլուծությունների եւ մեկնաբանությունների դեպքո՞ւմ, կհարցնեք: Այստեղ էլ օբյեկտիվության որոշակի մակարդակի հասնում են՝ հիմնվելով հավաստի, ճշտված փաստերի վրա, իսկ անկողմնակալության՝ վերլուծության մեջ սեփականից բացի այլոց տեսակետները եւս ներկայացնելով: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ միեւնույն փաստերի համադրումից կարելի է հանգել տրամագծորեն տարբեր եզրակացությունների:

Ահա երկու ընդարձակ ռեպորտաժ նույն իրադարձության (Հայ ազգային կոնգրեսի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի հանրահավաք) վերաբերյալ:

## ՀԱԿ-Ը ՇՈՒՐՋՕՐՅԱ ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ ՇԱԲԱԹ ՀԱՅՏԱՐԱՐԵՑ[4]

Երեկվա ՀԱԿ հանրահավաքի շուրջ հետաքրքրություն, այնուամենայնիվ ստեղծվել էր թեկուզ հենց այն պատճառով, որ Հայաստանում ԱՄՆ դեսպանատունն իր աշխատակիցներին հրահանգել էր հեռու մնալ հանրահավաքի վայրից՝ մի քանի գիշեր: Իսկ գիշեր հավանաբար հետեւյալը, որ Տեր-Պետրոսյանը, ճիշտ է, ինքնաբուխ հանրահավաքի կազմակերպման ողջ կանոնակարգը պահելով (ժողովրդի ցանկությունը հաշվի առնել, ՀԱԿ ղեկավարության հետ խորհրդակցել)՝ որոշեց մեկ շաբաթ անընդմեջ հանրահավաք անել, փաստորեն փորձ անելով կրկնել 2008 թվականի նախամարտիմեկյան շրջանի մարտավարությունը: Թե հատկապես ի՞նչը կամ ո՞վ(քե՞ր) էր այդպիսի լուրջ քայլի ենթատեքստը կամ ազդակը, դժվար է ասել: Կամ գուցե Տեր-Պետրոսյանը որոշեց օգտագործել վերջին հնարավորությունը, քանի որ ՀԱԿ-ի համակիրների ակտիվությունը գնում էր բնականոն մարման: Եւ հենց Տեր-Պետրոսյանի ելույթից հետո, կաթկթող անձրեւի տակ, «Ազատության» հրապարակում սկսեցին ձեռքի տակ պատրաստ վրանները խփել: Ավելի մանրամասն ներկայացնենք այդպիսի որոշման պահը, իսկ ինքնաբո՞ւխ էր այդ, թե՞ նախօրոք որոշված՝ ընթերցողը թող եզրակացնի:

Տեր-Պետրոսյանը բացահայտեց ներկա պայքարի միջոցառումների բավական մեծ զինանոցը՝ երթեր, հանրահավաքներ, պիկետներ, նստացույցեր, եւ ինչու չէ՝ շուրջօրյա հանարահավաքներ: «Հիմա-հիմա», բղավեցին մասնակիցները: «Հիմա՝ ի՞նչ», ճշտեց Տեր-Պետրոսյանը: «Նստացույց, հացադուլ, շուրջօրյա հանրահավաք», բղավեցին:

Կոնգրեսի ղեկավարության հետ 5 րոպե խորհրդակցելով՝ ՀԱԿ-ի առաջնորդը նշեց, որ ՀԱԿ-ն ընդառաջեց ինքնաբուխ միջոցառում անցկացնելու հանրահավաքի մասնակիցների ցանկությանը եւ հենց այդ պահից ազդարարեց շուրջօրյա հանրահավաք սկսելու մեկնարկը՝ կոնգրեսի անունից առաջարկելով հանրահավաքի տեւողությունը սահմանել մեկ շաբաթ: Իսկ իշխանություններին առաջադրեց նույն պահանջները, որոնք նախորդ հանրահավաքում բարձրաձայնվել էին՝ դրանցից գլխավորը համարելով մինչեւ տարեվերջ արտահերթ խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների անցկացումը, ընտրական օրենսգրքում մինչ այդ փոփոխություն անելը՝ ՀԱԿ-ի առաջարկները ներառելով եւ ապա՝ մնացյալ պահանջները:

Նա նշեց, թե հենց առաջին երկու պահանջներն են դժվար՝ արտահերթ ընտրությունների անցկացում եւ ԸՕ-ի փոփոխություն, բայց եւ՝ «Մենք մաքսիմալիստ չենք», ասաց: ՀԱԿ-ի առաջնորդը, փաստորեն, միաժամանակ պատրաստակամություն հայտնեց լրջորեն վերաբերել այդ երկու պահանջի հանդեպ իշխանության որեւէ փոխզիջման, անգամ փոխզիջման առկայության դեպքում՝ հենց վաղը սկսել երկխոսությունն իշխանության հետ: Տիգրան Առաքելյանը դիմել է նամակով ՀԱԿ-ին՝ ասելով, որ իր ազատման պահանջը չպետք է խոչընդոտի պայքարին, այնպես որ նրա ազատումը առաջին

երկու պահանջների թվում չէր: Բացի այդ՝ հնարավոր երկխոսության ու նախագահականի հետ կապ պահպանելու պարագայում կապ պահպանող եւս նշանակվեց, «դեժավյու»՝ Մանուշակ Պետրոսյանը:

Իսկ ահա գլխավոր երկու պահանջի վերաբերյալ շոշափելի արդյունքի չհասնելու դեպքում՝ մեկ շաբաթ անց ՀԱԿ-ի ղեկավարությունը հանրահավաքավորի հետ կորոշի անելիքը:

Շուրջօրյա հանրահավաքի մասնակիցների վարքի կանոնները եւս ճշտվեցին՝ կարգապահություն, հասարակական կարգի կարգադրիչների կողմից կարգի պահպանություն, ալկոհոլ օգտագործողների մուտքի արգելում հրապարակ, ոստիկանների հետ շփման արգելում, ոստիկանների հետ շփվող-բանակցողներ եւս առանձնացվեցին՝ Դավիթ Շահնազարյանը, Լեվոն Զուրաբյանը, Ավետիս Ավագյանը, Դավիթ Մաթեւոսյանը:

Տեր-Պետրոսյանը հատուկ շեշտեց հանրահավաքի մասնակիցների պահանջով անցկացվող միջոցառման խաղաղ բնույթը, նշելով, որ իրավապահ մարմիններն իրավունք չունեն միջամտելու դրա ընթացքին. «Մտադիր չենք երկիրը ցնցումների եւ քաոսի ենթարկել», խոստացավ նա եւ 7-օրյա տոն մաղթեց հանրահավաքավորին, քանի որ մաղձով ու նեղսրտությամբ, ըստ նրա, ոչ մի գործ գլուխ գալ չի կարող: Էլի պարելո՞ւ են:

Ուրեմն «սկսել ա»-ն հենց այս էր, հա՞, որ անցած հանրահավաքին ասում էր Տեր-Պետրոսյանը, բայց ինչի՞ կարելի է հասնել այս ուշացած միջոցառումով, դժվար է ասել, եթե չասենք, որ Երեւանի կենտրոնում նորից ապակայունացման օջախ գոյություն ունի, որը ամեն հավես անող սադրիչի (եւ դա ով ասես կարող է լինել՝ եւ ՀԱԿ-ից, եւ իշխանությունից, եւ բոլորովին երրորդ կողմանե) եւ սադրանքի համար պարարտ հող է:

Տեր-Պետրոսյանի ողջ ելույթի եւ մնացած ելույթների մասին էլ չենք խոսում, քանի որ 4 տարի նրա եւ նրանց ասածներն ասվել են: Միայն նշենք, որ ինչպես Ռոբերտ Քոչարյանն էր երեքկեսանոց քայլերով երեկ խոսել, Տեր-Պետրոսյանն էլ երեք սկզբունքային ելակետից էր բխեցրել իր հետագա գործողությունները. այն է՝ իշխանությունը յուրացվել է ընտրական լայնածավալ կեղծիքներով եւ սառնասիրտ սպանդով, վարչախումբը ոչ միայն ընդունակ, այլեւ մտադիր չէ փոխել իր հանցավոր էությունը, վարչախմբի հետագա գոյությունը խոչընդոտում է պետության բնականոն զարգացմանը: Ահա այսպիսի երեքի խորհուրդ: Երեւում է՝ ոչ միայն ասված է երրորդություն սիրում:

**Մարիետա Խաչատրյան**
**«Ազգ» օրաթերթ, 01. 10. 2011**

## ԿԱՏԻՊԵՆ ԵՐԿԽՈՍԵԼ

**Նստացույցին զուգահեռ՝ ՀԱԿ-ը պատրաստ է վերսկսել երկխոսությունը իշխանության առաջարկած իր օրակարգի շուրջ[5]**

Հայ ազգային կոնգրեսի սեպտեմբերյան վերջին հանրահավաքը հիրավի մարդաշատ էր, բայց 2008-ի փետրվարյան հանրահավաքները դեռեւս անգերազանցելի են: Թեեւ թե հանրահավաքի նախորդ օրը, թե երեկ մարզերից տարբեր ահազանգեր եղան՝ մայրաքաղաք եկող տրանսպորտի երթեւեկությունը ոստիկանության կողմից խոչընդոտելու մասին, այնուհանդերձ՝ երեկ Ազատության հրապարակ էին եկել նաեւ ՀԱԿ մարզային կառույցներից: Այդ էին վկայում պաստառները: Երեկ, ժամը 17-ից սկսած, արդեն մայրաքաղաքի տարբեր փողոցներում կարելի էր հանդիպել ՀԱԿ ակտիվիստների եւ համակիրների, ովքեր Հայաստանի պետական դրոշներով անցնում էին Երեւանի փողոցներով դեպի Ազատության հրապարակ:

Հանրահավաքին լավ էին պատրաստվել նաեւ ոստիկանները: Երեկ հրապարակում էին նախորդ տարիների հանրահավաքներից ու բողոքի տարատեսակ ակցիաներից հանրությանը լավ ծանոթ գրեթե բոլոր բարձրաստիճան ոստիկանները՝ Արայիկ Պետրոսյան, Ռոբերտ Մելքոնյան (Բազազ) եւ այլք: Կարմիր բերետավորների պակաս նույնպես չէր զգացվում: Մարդիկ հանրահավաքի էին եկել «Անժամկետ նստացույց» եւ «Իշխանափոխություն՝ առանց զոհերի» պաստառներով:

Մինչ Կոնգրեսի անդամ կուսակցությունների ղեկավարները, ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանը, հանրահավաքը վարող Նիկոլ Փաշինյանը ելույթներ էին ունենում՝ անողոք քննադատության հերթական բաժինը թափելով իշխանավորների գլխին, անցած մեկ շաբաթվա ընթացքում եվրոպական տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ իրենց հանդիպումների ու դրանցից ստացած տպավորությունների մասին էին պատմում, հրապարակում հավաքվածները չէին դադարում վանկարկել՝ «հի-մա, հի-մա»:

Ոգեւորությունն այն աստիճանի էր հասել, որ անգամ այն բանից հետո, երբ ՀՀ առաջին նախագահը հայտարարեց յոթօրյա նստացույցի եւ շուրջօրյա հանրահավաքների մեկնարկի մասին, հանրությունը սկսեց վանկարկել՝ «հի-մա, հի-մա»: Առաջին նախագահը նույնիսկ հումոր արեց՝ «մենք հիմա՝ հիմայի մեջ ենք»:

Մինչ վերջնական որոշումն ընդունելը՝ ՀՀՇ վարչության նախագահ Արամ Մանուկյանը ի ցույց դրեց կոալիցիոն կուսակցությունների անդամների՝ ՀԱԿ-ին հանձնած կուսակցական տոմսերը: Ասաց, որ գերակշռողը հանրապետականների տոմսերն են: Նա նույնիսկ կշռել էր դրանք՝ եթե երկու շաբաթ առաջ հանձնվել էր 3,5 կիլոգրամ կուստոմս, անցած շաբաթ՝ 4 կիլոգրամ, ասաց, որ մի 0,5 կիլոգրամ էլ հանրահավաքից առաջ են բերել: Ըստ Արամ Մանուկյանի, մարդիկ պատրաստակամություն են հայտնել մասսայաբար

տոմսեր հանձնելու, եթե ՀԱԿ-ը խոստանա, որ դրանք ոչնչացվելու են: Պատասխանելով ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովի այն հայտարարություններին, թե դրանք 2008-ից մնացած կուստոմսեր են, Մանուկյանը հակադարձեց, որ 2008-ի տոմսերը «ԿԳԲ-ն տարել էր, դրանք իշխանությունների մոտ են»:

Իր ելույթում ՀՀ առաջին նախագահը կրկին անդրադարձավ անցած քաղաքական իրադարձություններին, գերտերությունների կեցվածքին, ասաց, որ Արեւմուտքն իներցիայի ուժով դեռ շարունակելու է պաշտպանել Սերժ Սարգսյանին եւ նրա իշխանությունը, սակայն ՀՀ քաղաքացիներն իրենց սկզբունքայնությամբ եւ ազատ ապրելու համառությամբ պետք է ազդեն գործընթացների վրա: Ելույթի ավարտին Տեր-Պետրոսյանը դիմեց ժողովրդին՝ «ի՞նչ անել»:

Այդ ընթացքում տեղացող անձրեւը չխանգարեց «Նստացույց», «շուրջօրյա հանրահավաքներ» վանկարկում-պահանջներին: Այնուհետեւ հարթակում անցկացված մինի-քաղխորհրդի նիստից հետո առաջին նախագահը հայտարարեց մեկշաբաթյա նստացույցի եւ շուրջօրյա հանրահավաքների մեկնարկի մասին: Բողոքի ակցիայի շրջանակներում ՀԱԿ-ը հայտնի 10 պահանջներն է դնում իշխանությունների առջեւ՝ մինչեւ տարեվերջ արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրություններ, ընտրություններից առաջ ՀՀ «Ընտրական օրենսգրքում» կատարել փոփոխություններ՝ ընդգրկելով ՀԱԿ-ի ներկայացրած հայտնի առաջարկները, առաջիկա երեք ամիսների ընթացքում բացահայտել 2008-ի մարտի 1-ի 10 սպանությունները եւ քրեական հետապնդում սկսել դրանց պատասխանատուների նկատմամբ, ազատ արձակել քաղբանտարկյալ Տիգրան Առաքելյանին եւ կարճել ՀԱԿ-ի 7 երիտասարդ ակտիվիստների նկատմամբ հարուցված քրեական գործերը, օրենքով արգելել բարձրաստիճան պետական պաշտոնյաների, այդ թվում նաեւ ԱԺ պատգամավորների եւ ՏԻՄ մարմինների ղեկավարների կողմից մամուլի միջոցների եւ լրագրողների դեմ դատական հայցեր ներկայացնելու պրակտիկան:

Ամենօրյա հանրահավաքների ընթացքում կառաջադրվեն նաեւ բազմաթիվ սոցիալական խնդիրներ՝ սկսած ապամոնտաժվող կրպակներից, փողոցային առեւտրի արգելումից մինչեւ Խնայբանկի ավանդների վերադարձը, մանր ու միջին գործարարներին, Երեւանի ճարտարապետությանը, արտաքին տեսքին առնչվող հարցեր եւ այլն: Նկատի առնելով, որ ամենաբարդն առաջին երկու պահանջների կատարումն է, առաջին նախագահը կրկին հնչեցրեց նախորդ հանրահավաքում արդեն արված հայտարարությունը. «Մենք մաքսիմալիստ չենք: Մաքսիմալիստ չենք եղել նաեւ իշխանության ժամանակ: Մենք ենք եղել այն իշխանությունը, որը միշտ պատրաստ է եղել թե հարեւանների հետ, թե հակառակորդների հետ գնալու փոխզիջումների, հաշտության, խաղաղության ճանապարհով: Այսօր էլ նույնն ենք եւ չենք փոխվել ու չենք փոխվելու եւ պատրաստ ենք լրջորեն վերաբերվել այդ երկու պահանջների առթիվ իշխանությունների առաջարկած ցանկացած ողջամիտ փոխզիջման:

Ավելին, նկատի ունենալով, որ ՀԱԿ-ին նամակով դիմել է Տիգրան Առաքելյանը՝ խնդրելով, որ իր ազատազրկումը խոչընդոտ չդիտվի երկխոսությունը շարունակելու համար, մենք փոխըմբռնումը հեշտացնելու նպատակով պատրաստ ենք նաեւ թեկուզ վաղվանից, շուրջօրյա հանրահավաքներին զուգընթաց, սկսել երկխոսություն իշխանությունների հետ: Այսինքն՝ լինելու է երկու պրոցես՝ մեկը՝ այս հրապարակում, մյուսն էլ՝ որեւէ դահլիճում՝ երկխոսելով իշխանությունների հետ»: ՀՀ նախագահի աշխատակազմի հետ ուղղակի կապ պահպանելու համար լիազորվեց ՀԱԿ կենտրոնական գրասենյակի անդամ Մանուշակ Պետրոսյանը: Կախված իրադարձությունների հետագա զարգացումից, կորոշվի՝ դադարեցնե՞լ, թե՞ շարունակել բողոքի ակցիան:

Առաջին նախագահը, այնուհետ նաեւ հանրահավաքը վարող Նիկոլ Փաշինյանը քանիցս հայտարարեցին եւ պահանջեցին խստագույնս պահպանել վարքի կանոնները՝ երկաթյա կարգապահություն՝ բացառելով ինքնագործունեության որեւէ դրսեւորում:

Ազատության հրապարակում կարգուկանոնի պատասխանատուները հասարակական կարգադրիչներն են, չի թույլատրվում ալկոհոլային խմիչքներ օգտագործած մարդկանց մուտքը հրապարակ, բնակչության հանգիստը չխանգարելու համար ժամը 22-ից հրապարակում դադարեցվում են աղմուկն ու երաժշտությունը, խստիվ արգելվում է որեւէ շփում, վիճաբանություն ոստիկանության աշխատակիցների հետ կամ նրանց հասցեին վիրավորական արտահայտություններ: Կանոնները խախտող անձինք կհամարվեն սադրիչներ եւ կարգադրիչների կողմից դուրս կհրավիրվեն հրապարակից: Նաեւ հատուկ նշվեց, որ ակցիան երթեր, ցույցեր, հանրահավաքներ անցկացնելու մասին ՀՀ օրենքին համապատասխան է, եւ ոստիկաններն իրավունք չունեն միջամտել նրա ընթացքին: «Մեր հաջողության գրավականը խստագույն կարգապահությունն է եւ օրինականության սահմաններում գործելու ունակությունը: Քառամյա պայքարի ընթացքում մենք ոչ մի օրենք չենք խախտել, երբեք նպատակ չենք հետապնդել ու այսօր էլ մտադիր չենք երկիրը ցնցումների ու քաոսի մատնելու, իսկ Ղարաբաղում պատերազմի վերսկսման պարագայում պատրաստ ենք անմիջապես դադարեցնել մեր բոլոր քաղաքական գործողությունները եւ միահամուռ կերպով լծվել հայրենիքի պաշտպանության գործին»,- հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Հ. Գ. Ավելի ուշ «Առավոտին» հայտնի դարձավ, որ ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանը փորձել է հեռախոսով կապվել ՀԱԿ-ի հետ երկխոսող իշխանական պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանի հետ, որպեսզի ճշտեն երկխոսությունը վերսկսելու հնարավորությունները: Վերջինս անհասանելի էր: ժամը 23-ի դրությամբ Հանրապետական Գագիկ Մինասյանն էր փորձում «այո»-ն կամ «ոչ»-ը ճշտել: Ի դեպ, վրանների տեղադրման ժամանակ ոստիկանները չեն փորձել խոչընդոտել, ավելին՝ իրենց բավականին կոռեկտ են պահել:

**Նելլի Գրիգորյան**
**«Առավոտ» 01.10.2011**

## Առաջադրանք

Համեմատեք երկու հրապարակումները: Փորձեք ինքներդ ձեզ համար վերլուծել, թե որ ռեպորտաժից ավելի անաչառ ու անկողմնակալ տեղեկություններ ստացաք:

Վերլուծելիս նկատի առեք, որ և՛ «Ազգ», և՛ «Առավոտ» թերթերը ստորագրել են Հայաստանի ԶԼՄ-ների Վարքականոնը: Համեմատեք հրապարակումներն այդ Վարքականոնի պահանջներ հետ: Հիշեք, որ «Առավոտն» ունի նաեւ իր սեփական կանոնները, որի 1-ին կետում ասված է.

> **«Առավոտի» լրագրողները խստորեն սահմանազատում են լրատվությունը մեկնաբանություններից. լուրի եւ ռեպորտաժի մեջ չեն ներդնում սեփական դատողություններն ու էմոցիաները»:**[6]

Փորձեք երկու ռեպորտաժներում առկա փաստերի հիման վրա շարադրել ձե՛ր նյութը հիշյալ իրադարձության վերաբերյալ: Ստացվե՞ց: Համեմատեք ձեր գրածը երկու հրապարակումների հետ:

## Առաջադրանք

Վերցրեք նույն օրվա մի քանի թերթ, կամ դիտեք տարբեր հեռուստաալիքների այդ օրվա լուրերի թողարկումները, կամ կարդացեք նորությունների կայքերի լուրերը եւ համեմատեք, թե մեկ օրվա լրահոսից որը ինչ է նախընտրել հրամցնել իր լսարանին:

Ուսումնասիրելուց հետո կազմեք առավել կարեւոր լուրերի ցանկը: Ձեզ համար նշեք. եթե դուք լինեիք թերթի, կայքի, ռադիոյի կամ հեռուստալրատվական թողարկման խմբագիր, ո՞ր նորություններին կտայիք նախապատվությունը: Ինչպե՞ս կապահովեիք անաչառությունն ու անկողմնակալությունը:

Դե իսկ այս բաժնի վերջում էլ ազատ տողերում գրեք օբյեկտիվության եւ անկողմնակալության ձեր կանոնը, եթե, իհարկե, համաձայն եք ապագա լրագրողական գործունեության մեջ առաջնորդվել այդ սկզբունքով:

**Դ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ 20-րդ դարասկզբի ճապոնացի գրող Ակուտագավայի «Թավուտում» պատմվածքը կամ դիտել նույն պատմվածքի մոտիվներով ռեժիսոր Ակիրա Կուրոսավայի նկարահանած «Ռայսոմոն» ֆիլմը:*

1. http://tert.am/am/news/2012/08/04/accident-sevan/, վերջին դիտումը` 05.09.2012թ.

2. «Վաշինգթոն փոստ» թերթի էթիկայի կանոններ», «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը», ԵՄԱ, «Վան Արյան», Երեւան 2000թ., էջ 35

3. «Առավոտի» էթիկայի վարքականոնը, http://www.aravot.am/9254-2/, վերջին դիտումը` 05.09.2012թ.

4. Մեջբերված է ըստ «Ազգ» օրաթերթի կայքի` http://www.azg.am/AM/2011100104, վերջին դիտումը` 05.09.2012թ.

5. Մեջբերված է ըստ «Առավոտ« օրաթերթի կայքի` http://aravot.am/old/am/articles/politics/97571/view վերջին դիտումը` 05.09.2012թ.

6. «Առավոտի» էթիկայի վարքականոնը, http://www.aravot.am/9254-2/, վերջին դիտումը` 05.09.2012թ.

> Սովորաբար, տեսաբաններն ասում են, թե չկա այնպիսի տեղեկություն, որ հնարավոր չլինի ճշտել առնվազն երեք աղբյուրից: Պրակտիկայում՝ խմբագիրներն իրենց լրագրողներին խորհուրդ են տալիս գտնել գոնե երկրորդ աղբյուր:

## Զրույց երրորդ

# Կկուն թուխս կնստի՞

### Տեղեկատվության հավաստիության մասին




Լուսանկարը՝ thesociety.org.au-ից

*«Լինում է մի սար,*
*Էն սարում մի ծառ,*
*Էն ծառում փըչակ,*
*Փըչակում մի բուն,*
*Բնում երեք ձագ,*
*Ու վըրեն Կըկուն...» :*[1]

Դե, կարծում ենք, բոլորին էլ ծանոթ է Հովհաննես Թումանյանի «Չարի վերջը» ստեղծագործության այս սկիզբը: Հիմա հարց. իսկ արդյո՞ք Թումանյանն այս վեց տողում հավաստի «տեղեկություններ» է հաղորդել կամ՝ արդյոք կեղծ «տեղեկություն» չի՞ հաղորդել...

Մի կողմ թողնենք, որ հեղինակը չի ճշտել, թե որ սարի մասին է խոսքը («մի սար»), սարի վրա այդ մի ծա՞ռն էր հենց, այդ ծառը մի՞ փչակ ուներ եւ անդրադառնանք «բնում երեք ձագ,/Ու վրեն Կըկուն» «տեղեկատվությանը»:

Ախր սա ակնհայտ կեղծ է. կկուն երբեք թուխս չի նստում, ձագ չի հանում...

Լավ, եկեք ընթերցողին եւ գեղագետին չծիծաղեցնենք: Գեղարվեստական խոսքում ամեն ինչ հնարավոր է, մանավանդ, եթե այդ գեղարվեստական խոսքը նաեւ հեքիաթ է, առակ, այլաբանություն եւ այլն... Եթե վերը բերված «ակնհայտ կեղծի» տրամաբանությամբ շարժվենք, ապա այդպիսին պիտի համարենք նաեւ այն, որ կկուն, աղվեսը, ագռավը խոսում են... Ներողություն խնդրենք Թումանյանից՝ նրան «մեղադրանքներ» ներկայացնելու համար... Պարզապես այս օրինակն անհրաժեշտ էր հավաստիության լրագրողական սկզբունքի մասին զրույցն սկսելու համար:

Հավաստիությունը ենթադրում է մի քանի կանոնների պահպանում:

Առաջին եւ ամենակարեւոր պայմանը ստացված տեղեկությունների ճշտումն է մեկ այլ աղբյուրից եւս: Սովորաբար, տեսաբաններն ասում են, թե չկա այնպիսի տեղեկություն, որ հնարավոր չլինի ճշտել առնվազն երեք աղբյուրից: Պրակտիկայում՝ խմբագիրներն իրենց լրագրողներին խորհուրդ են տալիս գտնել գոնե երկրորդ աղբյուր: Իսկ եթե չի հաջողվել ճշտել, ապա ավելի լավ է այդ մասին նշում կատարել:

Ահա թե ինչպես է այս սկզբունքը ձեւակերպված Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնում, որ ստորագրել է մոտ 40 լրատվամիջոց:

**1.1. մինչ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,**

1.2 եթե խմբագրությունը հասարակական նշանակալի տեղեկություններ է ստացել, սակայն չի կարողացել ճշտել փաստերը, հրապարակելիս անպայման նշել այդ մասին,

1.3. վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի վրա,

1.5. ձգտել, որ վերնագրերը, հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս:[2]

Ահա նույն սկզբունքի սահմանումը «Առավոտ» թերթի էթիկայի կանոններում:

«Առավոտի» լրագրողները ձգտում են պահպանել նյութերի ճշգրտությունն ու բազմակողմանիությունը, բոլոր հնարավորություններն օգտագործել՝ տեղեկատվությունը առնվազն երկու աղբյուրից ճշտելու համար:[3]

Եվ «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի կանոններից:

**Ճշգրտություն**

«Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի լրագրողները պետք է անեն առավելագույնը՝ պահպանելու, որպեսզի բոլոր հաղորդումները եւ հրապարակումները (այդ թվում՝ ինտերնետով) լինեն փաստական առումով ճշգրիտ: Այն դեպքերում, երբ որեւէ էական փաստի շուրջ առկա են կասկածներ կամ տարաձայնություններ, տեղեկատվությունը պետք է հիմնված լինի առնվազն երկու անկախ աղբյուրների վրա:

«Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի լրագրողները չպետք է հեռարձակեն կամ հրապարակեն նյութեր՝ հիմնված խոսակցությունների կամ չհաստատված տեղեկատվության վրա:

Փաստական սխալները պետք է ուղղվեն հնարավորինս շուտ:[4]

Երկրորդ պայմանը՝ հղումն է կոնկրետ աղբյուրին. «Ինչպես տեղեկացրեց ՀՀ ֆինանսների նախարարության այսինչ վարչության առաջատար մասնագետ Կիրակոս Միրակոսյանը...»... Եվ եթե անգամ Կիրակոս Միրակոսյանը սխալված լինի ինչ-ինչ փաստերում, միեւնույն է, նրան հղումը ձեր տեղեկատվությանը հարյուր տոկոսանոց հավաստիություն է հաղորդում: Այսինքն՝ ընթերցողի համար այն հարյուր տոկոս հավաստի է: Նույն հավաստիությունը (ճիշտ կրկնենք՝ հավաստիությունը ընթերցողի՛ համար) որոշակի կորուստներ է ունենում, եթե կոնկրետ անձի փոխարեն պարզապես հղում ենք կատարում նախարարության վարչությանը, էլ ավելի է կորուստը, եթե հղումը միայն նախարարությանն է, եւ վերջապես տեղեկատվության հավաստիությունը զգալի անկումներ է ունենում անանուն աղբյուրների դեպքում: Այս իմաստով հավաստիության էթիկական սկզբունքը ակնհայտ հակասության մեջ է աղբյուրը չբացահայտելու սկզբունքի հետ. վերջինս, ի դեպ, եւ օրենսդրական իրավունք է, եւ էթիկական սկզբունք: Սակայն այս սկզբունքի մասին կխոսենք իր տեղում, առայժմ միայն ասենք, որ անանուն աղբյուրներին հղումը միշտ չէ, որ արդարացված է:

Աղբյուրներին հղումը սերտորեն առնչվում է նաեւ գրագողության բացառմանը: Գրագողությունը լրագրության (ընդհանրապես ստեղծագործական գործունեության) մեծագույն մեղքն է. ցանկացած մեջբերված միտք, գաղափար պետք է հղում պարունակի:

Ի դեպ, այս ձեռնարկում մենք խստորեն պահպանել ենք հղումներ կատարելու հիշյալ սկզբունքը՝ ձգտելով գրագողությունը բացառելու օրինակ ծառայել: Ձեռնարկում մեջբերված ցանկացած միտք, ասույթ, կանոն, դրույթ, որը մերը չէ, հղում ունի կոնկրետ հեղինակին եւ աղբյուրին:

Ահա, թե հղումների մասին ինչ է գրված «Վաշինգթոն փոսթ» թերթի էթիկայի կանոններում:

**Բոլոր հնարավոր դեպքերում «Վաշինգթոն փոսթ»-ը պարտավորվում է նշել լրատվության աղբյուրը...**

**... Մամուլից եւ լրատվության այլ միջոցներից նյութեր վերցնելիս պետք է հղում անել՝ պահպանելով հեղինակային իրավունքը: Գրագողությունը լրագրության աններելի մեղքերից է...**[5]

Հավաստիությունն ու օպերատիվությունը նույնպես հաճախ «հակամարտում» են:

Ահա մի պարզ, ինչ-որ տեղ գուցե միջանձնային եւ ոչ այնքան հասարակական հնչեղություն ունեցող միջադեպը ներկայացնելու երկու տարբեր մոտեցում:

Երկու լրատվամիջոցն էլ էլեկտրոնային փոստով ստացել են նույն հաղորդագրությունը՝ Երեւանում, «Վերնիսաժում» մի նկարչին առնչվող փոքրիկ միջադեպի մասին:

**ՆԿԱՐՉԻՆ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՀԵՌԱՆԱԼ ՎԵՐՆԻՍԱԺԻՑ**

Այսօր վաղ առավոտից Վերնիսաժում իրարանցում է: Գեղանկարիչ Արշոյի նկարների դիմաց՝ հասակին, հայտնվել է կարմիր տառերով մի գրություն. ՀԵՌԱՑԻՐ ԱՐՇՈ: Թե ինչ նպատակով են նման գրություն թողել հայտնի չէ: Հայաստանի նկարիչների միության անդամ, յոթանասունն անց նկարիչը առաջին անգամ չէ որ նման վերաբերմունքի է արժանանում:[6]

**Lragir.am, 25/08/2012, տեղադրման ժամը՝ 10:32**

**ՀԵՌԱՑԻ՛Ր ԱՐՇՈ. ԿԱՄ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԴԻՊՎԱԾ ՎԵՐՆԻՍԱԺՈՒՄ**

Այսօր՝ վաղ առավոտից, «Վերնիսաժ» տոնավաճառում իրարանցում էր, ուր մշտապես իր նկարների վաճառքն իրականացնող գեղանկարիչ Արշոյի՝ Նկարիչների միության անդամ Արշավիր Կիրակոսյանի նկարների դիմաց՝ հասակին, հայտնվել է կարմիր տառերով գրություն՝ «Հեռացի՛ր Արշո»:

Այս մասին Tert.am-ն այսօր առավոտյան տեղեկացավ էլեկտրոնային փոստով ստացված հաղորդագրությունից:

«Վերնիսաժ» այցելած մեր թղթակիցը տեղում ճշտեց լուրի հավաստիությունը, սակայն եւ՛ Արշոն, եւ՛ նրա հարեւանությամբ կանգնած նկարիչները գաղափար չունեին, թե ինչ նպատակով էր նման գրություն թողնվել հասակին:

«Ես այսօր առավոտյան եմ նկատել, չեմ կարող ասել՝ ինչի համար է այդ գրությունը, ոչ մի կոնֆլիկտ չի եղել»,- ասաց Արշավիր Կիրակոսյանը, ում այդ գրության մասին հայտնել էր նկարիչների համար սուրճ պատրաստող տիկին Օֆելյան: «Առավոտյան ես նկատեցի, իրան կանչեցի, ասեցի՝ արի, տես՝ էս ի՞նչ են գրել»,- ասաց տիկին Օֆելյան:

Ինչ վերաբերում է «Վերնիսաժ»-ում իրենց նկարները վաճառող նկարիչներին, ապա նրանք գրությանը լուրջ չեն վերաբերվում եւ կարծում են, որ այն հիմար կատակ է: «Արշոն հո քաղաքական գործիչ չէ, որ գրեն հեռացի՛ր, մեկը հաստատ անհաջող կատակ է արել»,- ասաց Աշոտը՝ հավելելով, որ նկարիչները սիրում են իրար հետ կատակներ անել:

Այսուհանդերձ, Tert.am-ին Արշոյի մասին թողած «գրության» մասին հայտնած անձն իր տեղեկատվության մեջ նշել էր, որ յոթանասունն անց նկարիչն առաջին անգամ չէ, որ նման վերաբերմունքի է արժանանում:

Այս կապակցությամբ «Վերնիսաժ» այցելած մեր թղթակցի հետ զրույցում տոնավաճառի հսկիչը հաստատել է, որ «Վերնիսաժ»-ում տեղի խնդիր կա և ամեն ցանկացող այսօր չի կարող գալ ու նկար վաճառել: Միաժամանակ հավելել է, որ Արշոն «ամենահին վաճառողներից է», ու ոչ ոք չի կարող նրա տեղի վրա աչք ունենալ:[7]

**Tert.am, 25.08.12. տեղադրման ժամը՝ 13:03**

Ինչպես տեսնում եք՝ մի լրատվամիջոցը գերադասել էր հաղորդագրությունը ստանալուց անմիջապես հետո տեղադրել այն՝ առանց ստուգելու փաստը (համենայն դեպս այն մասին, որ խմբագրությունը ստուգել է՝ որևէ հիշատակում չկա): Երկրորդ լրատվամիջոցը նյութը տեղադրել էր երկուսուկես ժամ ուշացումով, սակայն գերադասել էր սեփական ճշգրտումները իրականացնել:

## Առաջադրանք

Փորձեք վերլուծել, ինքներդ ձեզ համար ճշտել, թե որ ճանապարհն է ավելի ընդունելի:

**1. Lragir.am-ի**
**2. Tert.am-ի**
**3. Այլ կերպ կվարվեի**

Եթե ընտրել եք երրորդ տարբերակը, ապա այս տողերում գրեք, թե ինչպես կվարվեիք:

Մենք միտումնավոր պարզ ու նույնիսկ ընթերցողների համար գուցե և ոչ այնքան հետաքրքիր միջադեպի լուսաբանման երկու տարբերակ ներկայացրինք: Իսկ հիմա պատկերացրեք, որ լրատվամիջոցների ստացած հաղորդագրությունը վերաբերում էր ոչ թե վերը հիշատակված միջադեպին, այլ տարերային կամ տեխնածին աղետի:

Առավել բարդ է քաղաքական լարված իրավիճակներում (ասենք՝ ընտրությունների քարոզչության ժամանակահատվածում), երբ ամեն պահի կարող են տարբեր հաղորդագրություններ ստացվել ինչ-ինչ միջադեպերի մասին: Դարձյալ հարցնենք. ինչպե՞ս կվարվեիք դուք:

Ընտրեք տարբերակը, եւ ձեզ համար պարզ կլինի, ինչն եք դուք գերադասում՝ հավաստի, ամբողջական, ճշտված տեղեկատվությու՞նը, թե՞ օպերատիվությունը: Հավաստիության մասին խոսելիս անպայման պետք է հիշատակել կեղծ եւ չճշտված տեղեկությունների տարբերությունը: Եթե տեղեկությունը ճշտված չէ, դեռ չի նշանակում, թե այն կեղծ է (թեպետ կարող է եւ այդպիսին լինել): Շատ վատ է, երբ լրագրողը եւ լրատվամիջոցը գիտեն, որ ստացված տեղեկությունն ակնհայտ կեղծ է եւ հրապարակում են այն: Նկատի առեք, որ սա հղի է նաեւ իրավական պատասխանատվության կանչվելու վտանգով՝ զրպարտության համար: Սակայն, հնարավոր է, որ տեղեկությունը կեղծ չէ, դուք էլ այն ճշտելու համար օգտագործել եք մասնագիտական բոլոր հմտությունները, սակայն այդպես էլ ճշտել չի հաջողվել: Այս դեպքում էթիկական կանոնները, ինչպես տեսանք մեջբերումներում, խորհուրդ են տալիս անպայման նշել, որ տեղեկությունը ճշտել չի հաջողվել:

Շատ-շատ դեպքեր են եղել, նաեւ Հայաստանում, երբ լրատվամիջոցի հրապարակած չճշտված փաստը ստիպել է համապատասխան իրավասու մարմիններին տարածել այդ մասին հաղորդագրություններ՝ միջադեպի կամ իրադարձության մասին իրենց վարկածով: Իսկ եթե լրատվամիջոցը դա չհրապարակեր, ապա այդ մասին հասարակությունն այդպես էլ չէր իմանա:

## Առաջադրանք

Վերցրեք նույն օրվա մի քանի թերթ, կամ դիտեք տարբեր հեռուստաալիքների այդ օրվա լուրերի թողարկումները, կամ կարդացեք նորությունների կայքերի լուրերը եւ համեմատեք: Ապա մտածեք՝ տեղեկությունների որ մասն է ձեզ համար հավաստի, որ մասը՝ ոչ: Ինչո՞ւ: Քանի՞ անգամ են ձեր ուսումնասիրած լրատվամիջոցները հղումներ կատարել աղբյուրներին, կա՞ն անանուն աղբյուրներին հղումներ:

Դե իսկ այս բաժնի վերջում էլ՝ ազատ տողերում գրեք հավաստիության, փաստերն անպայման ճշտելու, հղումներ կատարելու ձեր կանոնը, եթե իհարկե, համաձայն եք ապագա լրագրողական գործունեության մեջ առաջնորդվել այդ սկզբունքով:

**Հ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ Ժերար դե Ներվալի «Լրագրային «խայծերի» իրական պատմությունը» հոդվածը՝ կեղծ փաստերի վրա հիմնված սենսացիաներով («խայծերով») ընթերցող գրավելու մասին: Պատմվածքի հայերեն տարբերակը կարող եք գտնել Այդին Մորիկյանի կազմած «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու. Բնագրեր» գրքում (Երեւանի մամուլի ակումբ, Բաց հասարակության ինստիտուտ, «Վելաս գրինս», Երեւան, 2006, էջ 200):*

1. Մեջբերված է ըստ Հ. Թումանյանի, «Ընտիր երկեր», Երեւան – 1978, էջ 115

2. Տես Երեւանի մամուլի ակումբի կայքում, http://ypc.am/self_regul/ln/am, վերջին դիտումը՝ 04.10.2012թ.

3. Տես Առավոտի էթիկայի վարքականոնը. http://www.aravot.am/9254-2/, վերջին դիտումը՝ 04.10.2012թ..

4. http://www.azatutyun.am/info/about_us/336.html, վերջին դիտումը՝ 04.10.2012թ.

5. «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը»: ԵՄԱ, Երեւան-2000, էջ 34

6. http://lragir.am/armsrc/country-lrahos70185.html, վերջին դիտումը՝ 05.09.2012թ.

7. http://tert.am/am/news/2012/08/25/arsho/, վերջին դիտումը՝ 05.09.2012թ.

> «Լրագրողն էլ ցանկացած մարդու նման իրավունք ունի իր կարծիքն արտահայտել, սակայն պիտի նկատի ունենա, որ իր կարծիքն ամենից քիչն է հետաքրքրում լսարանին:»

## Զրույց չորրորդ

# Ժուռնալիստիկայի «սրբազան կովը»

### Փաստերի, կարծիքների եւ մեկնաբանությունների տարանջատման մասին



«Վարդանանք», գոբելեն (1963թ., գործ՝ Գրիգոր Խանջյան[illegible] աթոռ Սբ Էջմիածին)

*«Մեկնաբանությունները ազատ կարող են լինել,
բայց փաստերը սրբազան են»*

*Սքոթ Չարլզ Պրեստուիչ
«Մանչեսթր Գարդիանի» հրատարակիչ*[1]

Գրիգոր Խանջյանն իր «Վարդանանք» կտավում արտացոլել է Վարդանանց պատերազմի պատմական փաստը եւ տվել է այդ փաստի սեփական մեկնաբանությունը (ընդ որում, համարյա այդպես է բոլոր պատմական կտավներում)՝ պատկերելով դարերի ընթացքում բոլոր հայտնի հայ գործիչներին, այդ թվում եւ իրեն. «բոլորս հանուն հայրենիքի...»:

Այսինքն՝ այստեղ, մեր կարծիքով, փաստն ու մեկնաբանությունները տարանջատված չեն, եւ պատմությանն ու ժամանակագրությանը չտիրապետող մարդու համար դժվար է հասկանալ, ասենք Չարենցի մասնակցությունը Վարդանանց պատերազմին փա՞ստ է, թե՞ նկարչի մեկնաբանությունը...

Չծիծաղենք մեր միամիտ մեկնաբանության վրա, եւ եկեք գեղագետ արվեստաբաններին էլ չծիծաղեցնենք մեր դիլետանտական դատողություններով: Այստեղ էլ ներողություն խնդրենք Գրիգոր Խանջյանից ու նրա արվեստի երկրպագուներից...

Ավելացնենք միայն, որ սա մենք համեմատում ենք փաստերը, մեկնաբանությունները եւ կարծիքները տարանջատելու լրագրողական սկզբունքի հետ: Այս սկզբունքը նույնպես լսարանի հետ ազնիվ լինելու կանոններից է:

Փաստերի, կարծիքների եւ մեկնաբանությունների տարանջատման սկզբունքը ենթադրում է դրանց տարանջատում ե՛ւ ԶԼՄ-ի ողջ լրատվական բովանդակության, ե՛ւ մեկ առանձին վերցրած հրապարակման մեջ:

Ընդհանրապես, լրատվամիջոցի տեղեկատվական (ոչ ժամանցային) բաժինները երեք հիմնական գործառույթ ունեն.

- ա) անաչառ ներկայացնել իրադարձությունների վերաբերյալ փաստերը,
- բ) տալ հասարակության մեջ եղած կարծիքները եւ տեսակետները (ավելացնենք եւ իրավասու ու իրազեկ անձանց մեկնաբանությունները),
- գ) տալ խնդիրների վերաբերյալ խմբագրական տեսակետներն ու խմբագրության մեկնաբանությունները:

Ընդ որում, ինչպես արդեն նշել ենք օբյեկտիվության վերաբերյալ զրույցում, խմբագրական կարծիքներն ու տեսակետները չպետք է խոչընդոտ լինեն այլ տեսակետների հրապարակման համար:

Ահա փաստերի եւ կարծիքների տարանջատման սկզբունքի մի քանի ձեւակերպումներ:

> **Մեր թերթում ընդունված է հստակորեն տարանջատել նորությունները խմբագրական նյութերից եւ կարծիքներից: Նպատակը ծառայելն է ընթերցողին, որն ուզում է լրատվական սյունակներում փաստեր գտնել, իսկ խմբագրական նյութերում եւ կարծիքների էջերում՝ տեսակետներ: Բայց այս տարանջատումը լրատվական սյունակներից անաչառ, մանրակրկիտ լրատվությունը, վերլուծությունը կամ մեկնաբանությունը բացառելու միտում չունի, եթե դրանք հստակ տարբերակված են:**[2]
>
> ***«Վաշինգթոն փոստ» թերթի էթիկայի կանոնները***

> **Սահմանազատել տեղեկատվությունը մեկնաբանությունից: Հրապարակումներում հստակ տարբերակել փաստերի շարադրանքն ու մեկնաբանությունը:**[3]
>
> ***Հետաքննող լրագրողների ընկերակցության***
> ***«Հետք» էլեկտրոնային թերթի էթիկայի կանոնագիր***

Շատ տեսաբաններ ասում են, թե լրագրողն իրավունք չունի իր կարծիքն արտահայտելու: Նման իմպերատիվ ձեւակերպումը մեզ համար ընդունելի չէ: Եվ ահա թե ինչու. իրավունքները սահմանված են սահմանադրություններում, միջազգային փաստաթղթերով, օրենքներով... Ոչ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը, ո'չ, ասենք, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածը չեն ասում, թե յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք՝ բացառությամբ լրագրողների:

Վերը հիշատակված իմպերատիվ ձեւակերպումը, որը շատ տարածված է, կարելի է փոխարինել ավելի խորհրդատվական ձեւակերպմամբ, այն է. լրագրողն էլ ցանկացած մարդու նման իրավունք ունի իր կարծիքն արտահայտել, սակայն պետք է նկատի ունենա, որ իր կարծիքն ամենից քիչն է հետաքրքրում լսարանին: Վերջինիս առավել հետաքրքրում են տվյալ հարցում իրավասու անձանց կարծիքները...

Այսուհանդերձ, ընդունելով, որ լրագրողն էլ իրավունք ունի արտահայտելու սեփական կարծիքը, տեսակետներն ու մեկնաբանությունները, հակասության մեջ չե՞նք մտնում անաչառության եւ անկողմնակալության սկզբունքի հետ, որը բացառում էր լրագրողի էմոցիաների ներմուծումը, վերաբերմունքի դույզն-ինչ դրսեւորումը լրատվության մեջ: Կարծում եմ՝ ոչ, որովհետեւ անաչառությունն, ասել ենք, վերաբերում է փաստերը շարադրելուն՝ ընթացիկ նորությունները, իրադարձությունները ներկայացնելուն, իսկ անկողմնակալությունը՝ մեկնաբանություններ եւ կարծիքներ ներկայացնելուն:

Ահա, լրագրողն էլ կարող է իրենը ներկայացնել՝ պայմանով, որ դրան զուգահեռ կլինեն այլ տեսակետներ եւս:

Բացի այդ, լրագրությունը միայն ռեպորտյորի աշխատանքում չի դրսեւորվում. կան նաեւ քաղաքական, տնտեսական, մշակութային եւ այլ թեմաներով գրող մեկնաբաններ, որոնց գործը նաեւ վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելն է: Երկու պայմանով. ա) դրանք պիտի առանձնացված լինեն փաստերից, բ) դրանք պիտի չխոչընդոտեն այլ կարծիքների եւ մեկնաբանությունների տարածմանը նույն լրատվամիջոցում: Պարզագույն օրինակը, ասենք, գրախոսականները կամ թատերախոսականներն են, որ գրում են մշակութային մեկնաբան լրագրողները: Ընդ որում, լրատվամիջոցը, ըստ էության, իր ճաշակից ելնելով կարող է թատերախոսականով տապալել, ասենք, ներկայացումը կամ, ընդհակառակը՝ նպաստել դրա հաջողությանը:

**Ի դեպ, մի հին հումոր այս թեմայով. հանդիսատեսներից մեկը, դուրս գալով թատրոնից, դիմում է ընկերոջը. «Լավ է, որ նախապես կարդացել էի թատերախոսությունը, թե չէ ներկայացումն ինձ դուր կգար»:**[4]

Ասենք, Հայաստանի հանրային հեռուստատեսության «Տեսանկյուն» հեղինակային հաղորդաշարում հեղինակն արտահայտում է իր անձնական կարծիքը: Հաղորդումը եթեր է հեռարձակվում լրատվական ծրագրից անմիջապես հետո, տարանջատված է դրանից ձեւավորմամբ: Այսինքն՝ լսարանի համար պարզ է, որ հաղորդումը փաստերից տարանջատված կարծիք ու մեկնաբանություն է: Այսուհանդերձ, լավ կլինի, որ անկողմնակալության ընդունված սկզբունքը պահպանելու համար, նույն հեռուստաընկերության եթերում հնչեն նաեւ դրան հակադիր կարծիքները՝ այլ հաղորդումների մեջ, եւ երկրորդ՝ եթե ինչ-որ մեկի (անձի կամ կազմակերպության) անունը շոշափվել է, ապա նա պատասխանի հնարավորություն ստանա...

Եթե, իհարկե, հանրային հեռուստաընկերությունն ունենա սեփական էթիկական կանոնագիր, ապա լավ կլինի, որ այս սկզբունքները ներառված լինեն:

Ահա թե այդ մասին ինչ է ասում Բրիտանական անկախ հեռուստատեսային հանձնաժողովի (ITC) կանոնագիրը:

### 3.6. Անձնական կարծիք արտահայտող հաղորդումներ

Ծրագրերի պլանավորման մեջ կարեւոր տեղ ունեն այն հաղորդումները, որոնցում հեղինակին հնարավորություն է տրվում արտահայտել իր կարծիքը: Այնուամենայնիվ, դրանք ենթակա են հստակ երաշխիքների, որպեսզի ապահովեն համապատասխանությունը ընդհանուրին վերաբերող «պատշաճ անաչառության» դրույթին:

Երաշխիքները, որոնք կիրառվում են Վավերագրով նախատեսված՝ վիճելի հարցերի վերաբերյալ անձնական կարծիքներ արտահայտող բոլոր հաղորդումների նկատմամբ, հետեւյալն են.

ա) նախօրոք տրված ազդից եւ թե ծրագրի հենց սկզբից հանդիսատեսը պետք է հասկանա, որ դա անձնական կարծիք արտացոլող հաղորդում է,

բ) անհրաժեշտ է հարգել փաստերը, եւ արտոնագրում ունեցողները պարտավոր են անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի արտահայտված կարծիքները, թեկուզ եւ մասամբ, հիմնված չլինեն կեղծ փաստերի վրա,

գ) պետք է հաղորդմանն արձագանքելու համապատասխան հնարավորություն ապահովվի, օրինակ՝ հաղորդմանը պատասխանելու կամ նախապատրաստական քննարկումներին մասնակցելու իրավունք:[5]

Ի դեպ, խմբագրական մեկնաբանությունների տարանջատման եւ անկախ դրանից այլ տեսակետներ հրապարակելու սկզբունքի ձեւակերպում կա նաեւ «Առավոտ» օրաթերթի կանոնագրում:

5. Առաջին էջում տպագրված մեկնաբանությունը նրա հեղինակի անձնական կարծիքն է, չի արտահայտում խմբագրության տեսակետը եւ որեւէ ձեւով չի ազդում մնացած նյութերի ուղղվածության վրա:[6]

Կարծիքի մեկ տեսակ է նաեւ գնահատողական դատողությունը, երբ փաստը ներկայացնելուց հետո անձը (որ կարող է նաեւ լրագրողը լինել) գնահատական է տալիս այդ փաստին:

**Փաստ - «Սա կապույտ գրիչ է, որի թանաքը լղոզվում է»:**
**Գնահատողական դատողություն - «Սա վատ գրիչ է»:**

## Առաջադրանք

Կարդացեք ստորեւ բերված հրապարակումը եւ որոշեք. արդյո՞ք դրանում պահպանված է փաստերի եւ մեկնաբանությունների տարանջատման սկզբունքը: Նկատի ունեցեք, որ «Լրագիր» համացանցային հրատարակությունում այս հոդվածը հրապարակված է «Մեկնաբանություն» խորագրով:

### ԳՅՈՒՄՐԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՈԴԵԼ

Գյումրիի նախընտրական իրավիճակը կարող է ուսանելի ձեռնարկ դառնալ նրանց համար, ովքեր ցանկանում են ուսումնասիրել Հայաստանի քաղաքական վերափոխումները: Իսկ իրավիճակը 2008, նույնիսկ 2010 թվականից արմատապես փոխվել է: Եթե նախկինում ասում էին, որ Հայաստանում չկա իշխանական ուղղահայաց, ապա հիմա անհետացել է նաեւ ընդդիմությունը: Եվ ձեւավորվել է որոշակի ամորֆ զանգված, որոնց նպատակներն ու գաղափարախոսական երանգները շատ դժվար է հասկանալ:

Այսպիսով, Գյումրի: Քաղաքապետի թեկնածուներն են Բարգավաճ Հայաստան կուսակցության անդամ Սամվել Բալասանյանը, Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչ Հովսեփ Սիմոնյանը եւ երկու անկուսակցականներ՝ գործարար Անդրանիկ Ավետիսյանը եւ թոշակառու Սպարտակ Պետրոսյանը:

Նախ, չի առաջադրվել երկարամյա քաղաքապետ Վարդան Ղուկասյանը, իսկ դա նշանակում է, որ Հայաստանի քաղաքականության մեջ հին քրեական տարրերի դերը աստիճանաբար վերանում է: Ցանկացած դեպքում, Վարդան Ղուկասյանի նկատմամբ «հաղթանակը» դիվիդենտներ բերեց Սերժ Սարգսյանին:

Երկրորդ, իշխող կուսակցությունը չի առաջադրել իր թեկնածուին՝ որոշելով հանրապետության երկրորդ քաղաքը «հանձնել» Բարգավաճ Հայաստանին: Դա ակնարկ է այն մասին, որ ԲՀԿ միշտ երկրորդը կլինի: Ավելին, աջակցելով Սամվել Բալասանյանին, ՀՀԿ-ն զրկել է ԲՀԿ-ին ընդդիմադիր դիրքերից խոսելու հնարավորությունից:

Երրորդ, Հայ ազգային կոնգրեսը չի առաջադրել իր թեկնածուին: Եվ չնայած հայտարարվել է, որ Կոնգրեսն ուղղակի իմաստ չի տեսնում ավագանու

ընտրություններին մասնակցելու մեջ, կարելի է նշել, որ Կոնգրեսն ուղղակի սկսել է վախենալ հրապարակայնությունից: Կոնգրեսը նախընտրում է չխոսել երկրի համար ամենաակտուալ հարցերի մասին. կամ ասելու բան չունի, կամ էլ ամաչում է իր դիրքորոշումից: Բացի այդ, ընտրություններին մասնակցելու դեպքում Կոնգրեսը ստիպված կլիներ մրցակցության մեջ մտնել ԲՀԿ-ի հետ, որի հետ վերջերս ընկերություն է անում:

Թեկնածու է առաջադրել միայն Դաշնակցությունը, սակայն այդ կուսակցությունը դժվար թե «պատերազմի» Սամվել Բալասանյանի դեմ: Շատ հավանական է, որ ՀՅԴ-ն որոշել էր առաջադրել իր թեկնածուին մինչեւ այն պահը, երբ հայտնի դարձավ, որ ՀՀԿ-ն չի առաջադրում Վարդան Ղուկասյանին:

Եվս մեկ հետաքրքիր փաստ. ավագանու խորհրդին առաջադրվել են «Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնության ներկայացուցիչները: Հատկանշական է, սակայն, որ նախաձեռնությունը չի առաջադրել իր թեկնածուին քաղաքապետի ընտրություններում, որոշելով բավարարվել միայն Ավագանու խորհրդով: Եվ դա նույնպես վկայում է տրանսֆորմացիաների եւ դրանց անավարտության մասին. երկրորդ քաղաքում ձեւավորվել է քաղաքացիական շարժում, սակայն այն դեռ պատրաստ չէ իր վրա քաղաքական պատասխանատվություն վերցնել:

Այս պատկերը համարձակորեն կարելի է տարածել ամբողջ Հայաստանի եւ առաջիկա նախագահական ընտրությունների վրա: Ինչպես եւ Գյումրիում, կարելի է վստահ լինել, որ ՀՀԿ-ն «կառաջնորդի շքերթը»՝ նախապես որոշելով ԲՀԿ երկրորդ դերը, ընդ որում, ոչ թե ընդդիմադիր, այլ «կողքից տղայի»:

Եվ ամենահետաքրքիրն այն է, որ առաջիկա ընտրությունները կարող են անցնել առանց արմատական ընդդիմության մասնակցության: Չի բացառվում, որ Հայ ազգային կոնգրեսը ուղղակի չի առաջադրի իր թեկնածուին եւ նույնիսկ կաջակցի ՀՀԿ թեկնածուին, հայտարարելով, որ ներկայիս իրավիճակում անհրաժեշտ է ազգային կոնսոլիդացիա: Այն մասին, որ իշխանության ու ընդդիմության միջեւ համագործակցությունը հնարավոր է, կարելի է դատել այն բանից, որ Ա1+-ը եթերային ժամանակ է ստացել Արմնյուզ-ում:

Վերջապես, ինչ վերաբերում է քաղաքացիական շարժմանը, ապա հավանաբար այն կվերցնի այն դերը, ինչ Գյումրիի նախաձեռնությունը: Քաղաքացիական նախաձեռնություններն իրենց ներկայությունը կհաստատեն քաղաքական կյանքում, բայց ոչ մի դեպքում իրենց վրա չեն վերցնի քաղաքական պատասխանատվությունը:

Տեսնենք, թե ինչպես կանցնեն Գյումրիի ընտրությունները: Դատելով «նախապատրաստական դասավորությունից»՝ ամեն ինչ նորմալ կլինի:[7]

**Նաիրա Հայրումյան**
**Lragir.am, 05/09/2012**

Ահա եւս մի հրապարակում նույն կայքում: Կարդացեք եւ որոշեք. արդյո՞ք դրանում պահպանված է փաստի եւ գնահատող դատողությունների տարանջատման սկզբունքը: Մինչ պատգամավորի ելույթի (փաստի) մեջբերումը եղած խմբագրական տեքստի հատվածները («ելույթը...առավել քան կոշտ էր», «անխնա քննադատության ենթարկեց») ընկալվում են իբրեւ գնահատող դատողություննե՞ր, թե՞ իբրեւ փաստ:

### ԻՆՉՈՎ ԵՆ ԶԲԱՂՎԱԾ ԱԳՆ-Ն ԵՎ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

ԱԺ ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Զոհրաբյանի ելույթը՝ Ռամիլ Սաֆարովի էքստրադիցիայի պատճառով առաջացած սկանդալի վերաբերյալ, այսօր առավել քան կոշտ էր. նա անխնա քննադատության ենթարկեց ՀՀ իշխանություններին, մասնավորապես՝ ԱԳ նախարարին:

«Ադրբեջանին դատափետել՝ այնպես կարող եմ դատափետել, որ բոլորդ զարմանաք»,- ասաց նա՝ հավելելով, որ իրականում պետք է խոսել՝ արդյոք Հայաստանը կարող էր կանխել այն: Ըստ Ն. Զոհրաբյանի, միջազգային բոլոր հեռուստաալիքներով ցուցադրում էին, թե ինչպես են Ադրբեջանի օդանավակայանում դիմավորում Ռամիլ Սաֆարովին, նրան մեծարում ու ներում շնորհում, իսկ ՀՀ ԱԳ փոխնախարարը հայտարարում էր, թե իրենք կեսօրին նամակ են ուղարկել Հունգարիայում ՀՀ դեսպանատուն՝ ճշտելու համար, թե որքանով են հավաստի Սաֆարովին էքստրադիցիայի ենթարկելու մասին լուրերը:

Ավելին, ըստ նրա՝ Հունգարիայի հայ համայնքի փոխնախագահն անձամբ իրեն ասել է, որ բացի Բուդապեշտում ՀՀ պաշտոնական մարմիններին տեղեկացնելուց, Սաֆարովի արտահանձնման մասին հայտնել է նաեւ Երեւանում ԱԳՆ եւ Սփյուռքի նախարարության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ: Ու Ն. Զոհրաբյանը հարց տվեց՝ ուր էր ԱԳՆ-ն, ԱԱԾ-ն, ինչով էին զբաղված: «Ես առիթ ունեցել եմ ասելու, որ իմ տպավորությամբ ՀՀ դեսպանատների մեր պաշտոնյաները երկու գործառույթ են լավ կատարում՝ ապրիլի 24-ին Ցեղասպանության որեւէ հուշարձանի մոտ լացակումած միջոցառումները Սփյուռքի համայնքներում եւ ֆուրշետներ սեպտեմբերի 21-ի անկախության տոնի ժամանակ»,- նշեց նա՝ հավելելով, որ բացի դրանից, դեսպանները զբաղված են օդանավակայանում հայ պաշտոնյաներին դիմավորելով ու նրանց ընդամենը ուղեկցելով:[8]

**Lragir.am, 05/09/2012**

## Առաջադրանք

Վերցրեք մեկ շաբաթվա մի քանի թերթ, կամ դիտեք տարբեր հեռուստաալիքների լուրերի թողարկումները, կամ կարդացեք նորությունների կայքերի լուրերը եւ գնահատեք. արդյոք թերթերում եւ կայքերում տեղեկատվական սյունակները տարանջատվա՞ծ են կարծիքների եւ մեկնաբանությունների սյունակներից, արդյոք հեռուստառեպորտաժներում հստա՞կ էին տարանջատված փաստերը, կարծիքներն ու մեկնաբանությունները, ի՞նչ տիպի մեկնաբանություններ են ավելի շատ հանդիպում՝ հրազեկ եւ իրավասու մարդկանց հարցազրույցներ, հրապարակումնե՞ր, թե՞ լրագրողական մեկնաբանություններ: Եվ արդյոք սեփական կարծիքը, մեկնաբանությունը կամ գնահատող դատողությունը չէ՞ր ընկալվում իբրեւ փաստ:

Դե իսկ հիմա՝ ներքեւի ազատ տողերում ձեւակերպեք փաստերի եւ կարծիքների տարանջատման ձեր սկզբունքը:

**Հ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ Մարկ Տվենի «Թե ինչպես ես խմբագրեցի գյուղատնտեսական թերթը» երգիծական պատմվածքը, որտեղ հեղինակը գրոտեսկային ոճով ներկայացնում է ոչ իրազեկ ու բացարձակապես նյութից անտեղյակ խմբագրի, որը գյուղատնտեսական նյութեր է գրում: Նրա գրածները ոչ միայն հավաստի չեն, այլեւ անտրամաբանական մեկնաբանություններ են պարունակում: Փոխարենը՝ սենսացիա են առաջացնում, ինչը նպաստում է ողջ տպաքանակի սպառմանը: Պատմվածքի հայերեն տարբերակը կարող եք գտնել Այդին Մորիկյանի կազմած «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու. Բնագրեր» գրքում (Երեւանի մամուլի ակումբ, Բաց հասարակության ինստիտուտ, «Վելաս դրինտ», Երեւան, 2006, էջ 156):*

1. «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու. Բնագրեր», կազմող՝ Այդին Մորիկյան, Երեւանի մամուլի ակումբ, Բաց հասարակության ինստիտուտ, «Վելաս դրինտ», Երեւան, 2006, էջ 389:

2. Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը», ԵՄԱ, «Վան Արյան», Երեւան 2000թ., էջ 32-33

3. «Հետաքննող լրագրողների ընկերակցության» «Հետք» էլեկտրոնային թերթի էթիկայի կանոնագիր (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 6-ին) http://hetq.am/arm/about/code-of-ethics/ , վերջին դիտումը 04.10.2012թ.

4. Ժողովրդական բանահյուսության նմուշները, այդ թվում՝ անեկդոտները հեղինակային իրավունքի սուբյեկտ չեն, այդ իսկ պատճառով այստեղ հղում չկա աղբյուրին: Աղբյուրը մեր հիշողությունն է – Մ. Հ.

5. «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը», ԵՄԱ, «Վան Արյան», Երեւան 2000թ., էջ 49

6. Տես «Առավոտի» էթիկայի վարքականոնը, http://www.aravot.am/9254-2/, վերջին դիտումը՝ 04.10.2012թ.

7. http://lragir.am/armsrc/comments70725.html, վերջին դիտումը 05.09.2012թ.

8. http://lragir.am/armsrc/country70761.html, վերջին դիտումը 05.09.2012թ.

> "Լրատվական թողարկման մեջ տեղեկատվական նյութի տակ հաճախ թաքնված գովազդ է հրամցվում:"

Զրույց հինգերորդ

# Կարելի՞ է գնել հեռախոս մեկ դրամով

## Տեղեկատվության եւ գովազդի տարանջատման մասին



Գովազդը միշտ սուբյեկտիվ է: Այն ասում է՝ «ես եմ լավը», կամ՝ «ամենալավը», կամ՝ «լավերից լավը»... Եվ տեղեկատվության սպառողն էլ գիտի դա ու միշտ չէ, որ վստահում է գովազդին: Եվ այս պատճառով է նաեւ, որ էթիկական կանոնները սահմանում են տեղեկատվության եւ գովազդի տարանջատման սկզբունքը. ընթերցողը (հեռուստադիտողը, ռադիոունկնդիրը) պետք է հստակ իմանա, որ այս նյութը տեղեկատվական է, այն մյուսը՝ գովազդային: Վերջինս տեղեկություն է, որի դիմաց վճարվել է: Եվ այն պետք է այդ մասին հստակ նշում ունենա:

Ահա այս սկզբունքի ձեւակերպումը Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնում.

**3.1. հստակ սահմանազատել լրագրողական նյութերը գովազդից. յուրաքանչյուր հրապարակում, որի դիմաց վճարվել է, պետք է այդ մասին նշում ունենա:[1]**

Այս սկզբունքի պահպանումն ամենից դժվարն է բիզնես նորությունների դեպքում:

**Առաջադրանք**

Կարդացեք այս հրապարակումը եւ փորձեք կռահել. այն զուտ տեղեկատվությո՞ւն է, թե՞ թաքնված գովազդ:

**ORANGE-Ն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԴԻՄԱՎՈՐԵԼ ՆՈՐ ՀԵՌԱԽՈՍՈՎ**

Ուսումնական տարվա սկզբի առթիվ Orange-ն առաջարկում է ձեռք բերել երիտասարդների շրջանում մեծ հաջողություն ունեցող հեռախոսներ ընդամենը 1 դրամով, ինչպես հետվճարային, այնպես էլ կանխավճարային ծառայությունների հետ միասին:

Այսպիսով, Alcatel OT 908 Facebook, Samsung C3782, Alcatel OT 506D հեռախոսները կարելի է ձեռք բերել ընդամենը 1 դրամով 12 ամսով Թիթեռ, Պանտերա կամ Դելֆին 4000 սակագնային պլանին բաժանորդագրվելու դեպքում, իսկ Alcatel OT-217 հեռախոսը կարելի է ձեռք բերել 1 դրամով՝ պարզապես Orange-ի խանութներում լիցքավորելով կանխավճարային հաշիվը 12,000 դրամով:

Ավելին, մինչև սեպտեմբերի 30-ը բոլոր նրանք, ովքեր կբաժանորդագրվեն Դելֆին, Թիթեռ կամ Պանտերա սակագնային պլաններից որևէ մեկին 12 կամ 24 ամսով, ձեռք կբերեն հեռախոսներ և սմարթֆոններ՝ սկսած մեկ դրամից և կստանան արծաթե, ոսկե կամ պլատինե հեռախոսահամար որպես նվեր:[2]

**Lragir.am, 28/08/2012**

Ահա, մեկ ուրիշ օրինակ: Փորձեք սա էլ վերլուծել:

> «Հոկտեմբերի 1-ին կլրանա երգիչ Արամեի 30-ամյակը, ինչի կապակցությամբ նա կբացի կարաոկե ակումբ: Երգչի մենեջեր Արտյոմ Յակոբյանի փոխանցմամբ՝ Արամեն վաղուց է Երևանում բիզնեսով զբաղվելու ցանկություն ունեցել: Իսկ կարաոկե ակումբը բավական հարմար տարբերակ է. «Մեր ազգը սիրում է երգել, կարծում ենք իր անունը կրող կարաոկեն ավելի մեծ հաջողություն կունենա: Այս պահին ընթանում են ակումբի վերանորոգման աշխատանքները, նախատեսվում է մեծ բացում անել: Դա լինելու է ոչ միայն կարաոկե ակումբ, այլև պարային ու համերգային ակումբ, նաև իրենց համերգային ծրագրերով դրսից հրավիրված երգիչներ են լինելու»: Փաստորեն, Արամեն ինքն իր ծննդյան 30-ամյակին նվեր է մատուցելու կարաոկե ակումբի տեսքով»:[3]
>
> **«Ժողովուրդ», 31. 08. 2012**

Առաջինը թաքնված գովազդի տպավորություն է թողնում: Ընդ որում, այն տարածվել է մի քանի այլ լրատվամիջոցներով եւս: Դրանում գրված են որոշակի պայմաններ՝ գին, ժամկետներ եւ այլն: Երկրորդը՝ ավելի շուտ տեղեկատվություն է ապագայում կատարվելիքի մասին, գովազդային տարրը համարյա բացակայում է, քանի որ նշված չէ, հասցեն, բացման օրը, ժամը, գովազդված չէ կոնկրետ հաստատությունը...

Եվս մի օրինակ՝ քննարկման համար:

> **ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԸ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ Է ՈՒՍՄԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**
>
> Այսուհետ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ-ում Ուսման վարկեր հնարավոր կլինի ստանալ անգամ առանց երաշխավորության: Ինչպես տեղեկանում ենք բանկի մամուլի ծառայությունից, այն հաճախորդները, ովքեր ունեն վարկային պատմություն և վերջին 1 տարվա ընթացքում չեն ունեցել ժամկետանց վարկեր կամ ժամկետանց վարկերի ժամկետանց օրերի թիվը չի գերազանցում 30-ը և վարկառուն հենց ուսանողը չէ (վարկառու կարող է հանդիսանալ օրինակ Ուսանողի ծնողը), Ուսման վարկ կստանան առանց երաշխավորության պահանջի: Բանկը նաև նվազեցնում է Ուսման վարկերի տոկոսադրույքը՝ նախկին 22%-ի փոխարեն այժմ այն սահմանելով 19%: Բացի այդ, հոգալով հաճախորդների հարմարավետության մասին, բանկն Ուսման վարկեր կտրամադրի անմիջապես բանկ դիմելու օրը:
>
> Հաճելի անակնկալներ են նախապատրաստվել Ուսման վարկի բոլոր վարկառուների համար: Այն վարկառուները, ովքեր Ուսման վարկ կստանան 2012թ. սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 1-ը, կմասնակցեն դեկտեմբեր ամսին կայանալիք

խաղարկությանը, որի ընթացքում նրանք հնարավորություն կունենան շահելու մի շարք արժեքավոր նվերներից մեկը: Ուսման վարկի վարկառուների համար Բանկը նաև հնարավորություն է ստեղծել ստանալ VISA Student չիպային քարտը տարեկան սպասարկման վճարի 50% զեղչով:

Բանկը կարևորում է յուրաքանչյուր երիտասարդի սովորելու հնարավորությունը և դրանից ելնելով հնարավորինս պարզեցնում է ուսման վարկավորման ընթացակարգերը: 2004թ. լինելով ուսման վարկեր տրամադրող առաջին Բանկը ՀՀ բանկային համակարգում՝ մինչ օրս ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԸ հավատարիմ է «Այսօրվա գիտելիքը, վաղվա բարեկեցության գրավականն է»: կարգախոսին:[4]

**Tert.am, 13:13 - 30.08.12**

Ինչպե՞ս տարանջատել մեկը մյուսից: Եթե ընկնենք ծայրահեղության մեջ, ապա պիտի տնտեսական (բիզնես) նորություններ չհրապարակենք, որովհետեւ ցանկացած նման հրապարակում կարող է վերածվել թաքնված գովազդի: Ինչպես պետք է անել, որ տեղեկատվությունը (բիզնես նորությունը) չվերածվի գովազդի, տպավորություն չստեղծվի, որ դրա դիմաց վճարվել է:

Այստեղ միշտ կա աննկատելի մի սահման, ընդ որում, յուրաքանչյուրի համար այդ սահմանը անհատական է: Մենք կարծում ենք, որ բիզնես նորությունները պետք է շարադրել հնարավորինս չեզոք՝ առանց այնպիսի հանգամանքների, պայմանների, եւ այլնի, որոնք դրական (կամ բացասական) լույսով են ներկայացնում իրադարձությունը:

Այնուհետեւ, ցանկացած նյութ, որի դիմաց վճարված է, պետք է համարվի գովազդ եւ ԶԼՄ-ում այդ մասին հատուկ նշում ունենա, եթե իր ձեւավորմամբ չի ընկալվում որպես այդպիսին: Ավելին, լավ կլինի, որ նման նյութերը չմատուցվեն տեղեկատվական էջերում, իսկ մատուցվելու դեպքում՝ վճարովի լինելու մասին նշում ունենան: Ցավոք, ոչ միայն թերթերում, նաեւ հեռուստատեսությունում է հաճախ լրատվական թողարկման մեջ տեղեկատվական նյութի տակ թաքնված գովազդ հրամցվում: Մի քանի թերթեր, օրինակ՝ «Առավոտ» օրաթերթը, վճարովի նյութերի տակ դնում է R նշանը, ինչով մատնանշում է դրանց գովազդային բնույթը: Բացի այդ, գովազդային բաժինը հստակ սահմանազատված է տեղեկատվական բաժիններից, իսկ գովազդները տարանջատված են ձեւավորմամբ:

Ի դեպ, գովազդի (քաղաքական) տարրեր կարող են հայտնվել նաեւ քաղաքական նորություններում, եթե լրագրողը կամ լրատվամիջոցը շեղվելով պատշաճ անաչառության սկզբունքից, սկսի գովասանական բառերով ներկայացնել, օրինակ, պատգամավորության թեկնածուի հանդիպումը ընտրողների հետ: Հնարավոր է, որ այդ նյութի դիմաց վճարված էլ չլինի, սակայն իր բովանդակությամբ այն ընկալվի իբրեւ թաքնված քաղաքական գովազդ:

## Առաջադրանք

Վերցրեք մեկ շաբաթվա մի քանի թերթ, կամ դիտեք տարբեր հեռուստաալիքների լուրերի թողարկումները, կամ կարդացեք նորությունների կայքերի լուրերը եւ վերլուծեք. կա՞ն արդյոք տեղեկատվական նյութեր, որոնք թաքնված գովազդ էին հիշեցնում, արդյոք ձեր ուսումնասիրած լրատվամիջոցներում տեղեկատվությունն ու գովազդը հստակ տարանջատվա՞ծ են:

Դե իսկ հիմա՝ ներքեւի ազատ տողերում ձեւակերպեք տեղեկատվության եւ գովազդի տարանջատման ձեր սկզբունքը:

**Յ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ Անատոլի Ագրանովսկու «Դոկտոր Ֆյոդորովի հայտնագործությունը» ակնարկը, որտեղ հեղինակը ներկայացնում է հայտնի բժիշկ Ֆյոդորովին ու նրա ակնաբուժական գործունեությունը, սակայն ակնարկում գովազդային տարրեր չեք հայտնաբերի: Ակնարկի հայերեն տարբերակը կարող եք գտնել Այդին Մորիկյանի կազմած «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու. Բնագրեր» գրքում (Երեւանի մամուլի ակումբ, Բաց հասարակության ինստիտուտ, «Վելաս պրինտ», Երեւան – 2006, էջ 331):*

1. Տես Երեւանի մամուլի ակումբի կայքում http://ypc.am/self_regul/ln/am, վերջին դիտումը` 04.10.2012թ.

2. http://lragir.am/armsrc/economy-lrahos70315.html, վերջին դիտումը` 05.09.2012թ.

3. Մեջբերումն ըստ http://tert.am/am/news/2012/08/31/arame/, վերջին դիտումը` 05.09.2012թ.

4. http://tert.am/am/news/2012/08/30/acba, վերջին դիտումը` 05.09.2012թ.

5. «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը»: ԵՄԱ, Երեւան-2000, էջ 34

# ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լրագրողը եւ լրատվամիջոցը չեն կարող աշխատել առանց տեղեկատվության աղբյուրների: Ավելին, ըստ էության, լրագրողի աշխատանքի սկիզբը հենց տեղեկություններ հավաքելու նպատակով զանազան աղբյուրներին հարց տալն է:

Եվ ահա էթիկական կանոնագրերը դրանց հետեւողներից պահանջում են հարցեր տալուց առաջ նախ ներկայանալ եւ անպայման ներկայանալ իբրեւ տվյալ լրատվամիջոցի լրագրող: Սա տեղեկատվության աղբյուրների հետ պատշաճ հարաբերվելու գլխավոր նախապայմաններից մեկն է:

Ահա թե դա ինչպես է ձեւակերպված «Վաշինգթոն փոստ»-ի էթիկայի կանոնագրում.

**Լուրեր հավաքելիս լրագրողները չպետք է կեղծեն իրենց ինքնությունը, չներկայանան իբրեւ ոստիկան, բժիշկ կամ այլ մասնագետ:[5]**

Այլ կանոնագրերում պարզապես նշվում է տեղեկությունները ազնիվ ճանապարհով հայթայթելու անհրաժեշտության մասին:

Երկրորդ. լավ կլինի տեղեկությունները տրամադրելու բոլոր պայմանները նախապես քննարկել տեղեկատվության աղբյուրի հետ, հայտնել, որ նրա ասածները հրապարակվելու են հենց իր անունից եւ այլն: Եվ եթե աղբյուրն այլ պայմաններ է թելադրում, քննարկել նրա հետ հարաբերվելու, տեղեկությունները վերցնելու կամ դրանից խուսափելու հարցը:

Տեղեկատվությունը միշտ ունենում է հերոսներ, մասնակիցներ, անձինք, ում առնչվում են փաստերը: Ինչպե՞ս եւ ի՞նչ ձեւով պետք է հիշատակվեն այդ անձինք, մինչեւ որտե՞ղ է մարդկանց եւ մարդկանց կյանքը ներկայացնելու սահմանը:

Ընդսմին, արդեն ասել ենք, որ որոշ դեպքերում լսարանի շահը կարող է կորուստներ ունենալ՝ ի հաշիվ տեղեկատվության աղբյուրների եւ օբյեկտների շահերի: Ասենք, լսարանն ամբողջական տեղեկություններ չի ստանում հանցագործության կամ մարդու նկատմամբ բռնության մասին, քանի որ դուք

հանցագործության մեջ մեղադրվող կամ բռնության զոհ դարձած անչափահասի անունը չենք բացահայտում՝ գերադասելով այդ զոհի շահը լսարանի՝ ամբողջական տեղեկատվություն ստանալու շահից:

Տեղեկատվության աղբյուրների եւ հրապարակումների հերոսների հետ պատշաճ հարաբերությունների սկզբունքներից մենք առանձնացրել ենք չորսը.

- Աղբյուրի գաղտնիության պահպանում եւ off the record տեղեկությունների չհրապարակում
- Հարգանք մարդկանց անձնական կյանքի նկատմամբ
- Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների նկատմամբ
- Սխալների ուղղում եւ պատասխանի հնարավորության տրամադրում

> Աղբյուրի գաղտնիության պահպանման սկզբունքը չարաշահելով՝ անընդհատ անանուն «հավաստի աղբյուրների» հղում կատարելը խրախուսելի չէ:

## Զրույց վեցերորդ

# Վստա՞հ եք, որ գաղտնապահ եք

### Աղբյուրի գաղտնիության պահպանման եւ off the record տեղեկությունների չհրապարակման մասին



Լուսանկարը՝ reputation.com-ից

Պատահում է, որ լրագրողներին եւ լրատամիջոցներին տեղեկություններ են տրամադրվում՝ տեղեկության աղբյուրի գաղտնիությունը պահպանելու պայմանով: Պատահում է, որ հրավիրում են զրույցի՝ այդ զրույցը եւ դրա ժամանակ տրամադրված տեղեկությունները (որ ընդունված է անվանել off the record տեղեկություններ) չհրապարակելու պայմանով:

Ի՞նչ պիտի անենք մենք՝ լրագրողներս, նման իրավիճակներում: Արտաքուստ պարզունակ հարց տվեցի:

Բայց երբ ինքներս ենք բախվում իրականությանը, այսինքն՝ երբ հայտնվում ենք նման իրավիճակում, որոշում կայացնելը դժվարանում է: Ահա, մի դեպք, որ ներկայացված է մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ-ի հրատարակած «Լրագրողական էթիկա. օրինակներ եւ մեկնաբանություններ» գրքում:

**2011 թվականի օգոստոսի 31-ին ուկրաինական «Ունիան» լրատվական գործակալությունը հայտնեց երկրի կրթության նախարարի հնարավոր հրաժարականի մասին: Տեղեկության մեջ նշվում էր, որ Ուկրաինայի նախագահի աշխատակազմի ղեկավարը լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտնել է այդ մասին՝ ոչ հրապարակման համար (off the record): Այդ հանդիպման հրապարակային մասում այլ կարեւոր հարցերի պարզաբանումներ են տրվել: Նախարարի հրաժարականի մասին խոսվել է պաշտոնական հանդիպումից հետո՝ լրագրողների ներկայությամբ, բայց չհրապարակելու պայմանով:**

**Լրագրողները սոցիալական ցանցերում մեծ քննարկում սկսեցին այս հրապարակման շուրջ: Ոմանք արդարացնում էին լրատվական գործակալության քայլը, մյուսներն ասում էին, որ նման ձեւով ստացված տեղեկության հրապարակումը եւ աղբյուրի բացահայտումը մասնագիտական սկզբունքների եւ էթիկայի խախտում է:**

**Հրապարակման հեղինակ Վլադիմիր Իլչենկոն վստահ էր, որ «Ունիանի» ընթերցողները չէին ների իրեն, եթե կարեւոր հասարակական հնչեղություն ունեցող այդ տեղեկությունը չհրապարակվեր:[1]**

**Առաջադրանք**

Քննարկեք եւ փորձեք ինքներդ ձեզ համար ճշտել. դո՞ւք ինչպես կվարվեիք այս իրավիճակում: Կհրապարակեի՞ք չհրապարակման պայմանով (off the record) ստացված տեղեկությունը, թե՞ ոչ:

Ստորեւ՝ ազատ տողերում գրեք ձեր որոշումը ապա մեկնաբանեք այն:

Իսկ հիմա վերցրեք «Լրագրողական էթիկա. օրինակներ եւ մեկնաբանություններ» գիրքը ու համեմատեք հիշյալ իրավիճակի փորձագիտական մեկնաբանությունները ձերի հետ:

Մեր կարծի՞քն եք ուզում իմանալ. տեղեկատվության աղբյուրների հետ պայմանավորվածությունները պետք է պահպանել: Միայն բացառիկ դեպքերում, երբ խմբագրությունը կորոշի, որ հանրային շահը գերակա է նման տեղեկությունը չհրապարակելու նկատմամբ, կարելի է այն տարածել:

Ահա Էստոնիայի լրագրողների վարքականոնից մի մեջբերում:

> **Լրագրողը խստորեն պահպանում է տեղեկատվության աղբյուրին տված խոստումները եւ խուսափում է անիրականանալի պարտավորություններից:[2]**

Ինչ վերաբերում է աղբյուրի գաղտնիությունը պահպանելուն, նման վարվելակերպը օրենսդրական կարգավորում ունի շատ երկրներում: Շվեդիայում, օրինակ, ըստ լրագրող եւ «Լրագրության 10 ոսկե պատվիրան» գրքի հեղինակ Էրիկ Ֆիխտելիուսի, գաղտնի աղբյուր բացահայտող լրագրողը, այդ աղբյուրը փնտրող եւ գաղտնազերծող «իշխանության կամ այլ հանրային մարմինների» ներկայացուցիչները «կարող են շվեդական դատարանի վճռով դատապարտվել դրամական տուգանքի կամ մինչեւ մեկ տարի ազատազրկման»:[3] Այսինքն, Շվեդիայում տեղեկատվության գաղտնի աղբյուրների պաշտպանությունը ամենաբարձր մակարդակի է: Հայաստանում նույնպես օրենքը պաշտպանում է լրագրողական տեղեկատվության գաղտնի աղբյուրները: Ահա՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ՝ «Տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը» հոդվածը:

**«1. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:**

**2. Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաեւ լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, եւ սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ:»**[4]

Սակայն օրենսդրականից զատ այս պաշտպանությունը նաեւ էթիկական խնդիր է: Ընդ որում, շատ երկրներում լրագրողները գերադասում են ենթարկվել իրենց էթիկական կանոնի՝ աղբյուրը ոչ մի պարագայում չբացահայտելու իմպերատիվ պահանջին: Այսինքն՝ կարող են անտեսել անգամ աղբյուրը բացահայտելու դատարանի վճիռը՝ թեկուզ եւ դատական պատասխանատվության ենթարկվելու գնով:

Տեսնենք մի քանի էթիկական կանոններում աղբյուրը չբացահայտելու սկզբունքի սահմանումները:

«Առավոտ» օրաթերթի կանոնների համապատասխան կետն ասում է:

**7. «Առավոտի» լրագրողները հարգում են զրուցակիցների խնդրանքը՝ չհրապարակել իրենց անունը, տեղեկատվության աղբյուրը կամ չհրապարակել մասնավոր զրույցում իրենց հայտնած տեղեկությունը:**[5]

Ահա եւ՝«Վաշինգթոն փոսթ» թերթի էթիկայի կանոնների դրույթը:

**Բոլոր հնարավոր դեպքերում «Վաշինգթոն փոսթ»-ը պարտավորվում է նշել լրատվության աղբյուրը: Եթե պայմանավորվածություն է եղել չհրապարակել աղբյուրի ինքնությունը, այն «Վաշինգթոն փոսթ»-ից դուրս որեւէ մեկին հայտնի չպետք է դառնա:**

**Եթե լրատվություն տրամադրած աղբյուրը չի ցանկանում ամբողջությամբ բացահայտել իր ինքնությունը, լրագրողը պետք է փորձի համոզել նրան: Եթե հնարավոր չէ, լրագրողը պետք է տեղեկությունների այլ աղբյուր փնտրի: Եթե դա էլ է անհնար, նա պետք է համաձայնության գա աղբյուրի հետ՝ չհայտնել նրա ինքնությունը, բայց նյութում ներկայացնի այն գաղտնի պահելու պատճառները:**

**Ամեն դեպքում, գրեթե միշտ հնարավոր է որեւէ կերպ վկայակոչել աղբյուրը, օրինակ՝ մասնանշել գերատեսչությունը կամ պաշտոնը: Կեղծանուն չպետք է օգտագործել:[6]**

Եվ վերջապես՝ Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնի պահանջը.

**2.2. հնարավորինս խուսափել տեղեկատվության կոնֆիդենցիալ աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումից առաջ միշտ պարզել շարժառիթները, սակայն եթե տեղեկությունն այնուամենայնիվ տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որեւէ պարագայում չբացահայտել այն:[7]**

Հետաքննական լրագրության մեջ ավելի հաճախ է հարկ լինում դիմելու տեղեկատվության խորհրդապահական աղբյուրներին: Այս մասին նշված է նաեւ Հայաստանի հետաքննող լրագրողների ընկերակցության «Հետք» հրատարակության էթիկայի կանոնագրում.

**Բոլոր հնարավոր դեպքերում նշել լրատվության աղբյուրը: Նկատի ունենալով, որ հետաքննական լրագրությունը չի կարող գոյություն ունենալ առանց գաղտնի աղբյուրների, եթե պայմանավորվածություն է եղել չբացահայտել լրատվության աղբյուրը, ապա խոստումը պետք է պահել:[8]**

Այսուհանդերձ, ամենօրյա լրատվության մեջ, աղբյուրի գաղտնիության պահպանման սկզբունքը չարաշահելով, անընդհատ անանուն «հավաստի աղբյուրներին» հղում կատարելը չի խրախուսվում:

Փորձագետները, սովորաբար, խորհուրդ են տալիս.

- ա) Աղբյուրի հետ բոլոր պայմանները նախապես քննարկել:
- բ) Ավելի լավ է չվերցնել աղբյուրի գաղտնիությունը պահպանելու կամ չհրապարակելու (off the record) պայմանով տեղեկություններ:
- գ) Սակայն եթե արդեն վերցրել եք նման տեղեկություններ, ապա պայմանավորվածությունը մի խախտեք:

## Առաջադրանք

Վերցրեք նույն օրվա մի քանի թերթ, կամ դիտեք տարբեր հեռուստաալիքների այդ օրվա լուրերի թողարկումները, կամ կարդացեք նորությունների կայքերի լուրերը եւ պարզեք. կա՞ն արդյոք անանուն աղբյուրներին հղում կատարող հրապարակումներ: Արդարացվա՞ծ է, արդյոք, նման հրապարակումը, հանրային հնչեղություն ունե՞ն այդ տեղեկությունները:

Ձեզ համար նշեք. եթե դուք լինեիք թերթի, կայքի, ռադիոյի կամ հեռուստատեսության խմբագիր, դրանցից ո՞րը կհրապարակեիք կամ ո՞րը ճշտելու համար լրացուցիչ ջանքեր կգործադրեիք:

Կարդալով էթիկական կանոնների սահմանումները եւ համեմատելով այն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի մեջբերված հոդվածի հետ՝ մտածեք, եւ ինքներդ ձեզ համար որոշեք. կբացահայտե՞ք երբեւէ տեղեկատվության ձեր գաղտնի աղբյուրը՝ եթե դատարանը ձեզ պարտադրի այդ անել, թե՞ ոչ: Կամ՝ ի՞նչ դեպքերում կկատարեք դատարանի որոշումը:

Մեկնաբանեք ձեր կարծիքը ստորեւ՝ դատարկ տողերում, ապա եւ՝ ձեզ համար սահմանեք մասնավոր զրույցում ոչ հրապարակման համար (off the record) ստացած տեղեկությունները եւ աղբյուրի գաղտնիությունը պահպանելու ձեր կանոնը:

**Հ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ Էրիկ Ֆիխթելիուսի «Լրագրության 10 ոսկե պատվիրան» գրքի երրորդ՝ «Աշխատիր պլանավորվա՞ծ» գլուխը, մասնավորապես՝ դրա այն հատվածները, որ վերաբերում են տեղեկատվության աղբյուրների հետ հարաբերություններին:*
*(Էրիկ Ֆիխթելիուս, «Լրագրության 10 ոսկե պատվիրան», թարգմ. Մ. Հարությունյան, «Ինտերնյուս», Երեւան – 2001):*

1. «Երբ պաշտոնյան չհրապարակելու պայմանով տեղեկություն է հրապարակում», «Լրագրողական էթիկա. օրինակներ եւ մեկնաբանություններ», «Ինտերնյուս» Երեւան – 2011, էջ 35

2. «Էստոնիայի լրագրողների վարքականոնը», «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը»: ԵՄԱ, Երեւան-2000, էջ 61

3. Էրիկ Ֆիխթելիուս, «Լրագրության 10 ոսկե պատվիրան», թարգմ. Մ. Հարությունյան, «Ինտերնյուս», Երեւան – 2001, էջ 31

4. ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», հոդված 5, մեջբերումն ըստ ՀՀ ԱԺ պաշտոնական կայքի, http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1890&lang=arm, վերջին դիտումը՝ 01.10.2012թ.

5. Տես «Առավոտի» էթիկայի վարքականոնը, http://www.aravot.am/9254-2/, վերջին դիտումը՝ 01.10.2012թ

6. «Վաշինգթոն փոստ» թերթի էթիկայի կանոններ», «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը»: ԵՄԱ, Երեւան-2000, էջ 34

7. Տես Երեւանի մամուլի ակումբի կայքում http://ypc.am/self_regul/ln/am, վերջին դիտումը՝ 04.10.2012թ.

8. Հետաքննող լրագրողների ընկերակցության «Հետք» էլեկտրոնային թերթի էթիկայի կանոնագիր (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 6-ին) http://hetq.am/arm/about/code-of-ethics/, վերջին դիտումը՝ 04.10.2012թ.

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Նա ով ձգտում է հանրության ուշադրությանը, քաղաքական գործիչ լինի, թե՝ շոու բիզնեսի աստղ, պիտի պատրաստ լինի հասարակության ցանկացած արձագանքի, այդ թվում և՝ իր անձնական կյանքի վերաբերյալ:»

## Զրույց յոթերորդ

# Նախնադարում էլ մարդկանց հետաքրքրել են ցեղապետի և նրա կնոջ հարաբերությունները

### Մարդկանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի մասին



... Ազգային ժողովի պատգամավորին տեսել են ձմեռային հանգստավայրում՝ մի երիտասարդ կնոջ հետ դահուկավարելիս...

... Ձեր հարեւանը, որ հեռավոր ուղերթի վարորդ է, ամեն անգամ տուն վերադառնալիս սկանդալ է սարքում՝ կնոջը կասկածելով դավաճանության մեջ...

... Հայտնի երգչուհին բաժանվել է հերթական ամուսնուց եւ վերցնելով երեք երեխաներին, տեղափոխվել է նոր ընկերոջ տուն..

... Ուսանողական խորհրդի նախագահը ծնողների հետ տարաձայնության պատճառով հեռացել է տնից եւ ապրում է տարիքով իրենից երկու անգամ մեծ մի կնոջ հետ...

... Քաղաքապետը նոր առանձնատուն է կառուցում...

Այս եւ նման տեղեկություններից որո՞նք կարող են արժանանալ լրատվամիջոցների ուշադրությանը։ Արդյոք դրանք հետաքրքի՞ր են լսարանի համար եւ հա՞րկ է լուսաբանել։ Այսինքն՝ կարո՞ղ է արդյոք մամուլը միջամտել մարդկանց անձնական (մասնավոր) կյանքին եւ ներկայացնել այն։ Եթե այո, ապա՝ ո՞ր դեպքերում։

## Առաջադրանք

Ստորեւ՝ դատարկ տողերում նշեք ձեր կարծիքը. վերը հիշատակված դրվագներից ո՞րը դուք կլուսաբանեիք։

Մարդու անձնական կյանքը պաշտպանված է Սահմանադրությամբ եւ օրենքներով: Ահա ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածը:

**Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:**

**Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:**

**Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:**

**Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների ուղղման եւ իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:**

**Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, դատարանի որոշմամբ:**[1]

***Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 23***

Արդ, նորից հարցնենք, իրավունք ունի՞ նման սահմանադրական պահանջի պայմաններում մամուլը անդրադառնալու մարդկանց անձնական կյանքին եւ լուսաբանելու այն, եւ որտեղ է ավարտվում չմիջամտելու սահմանը:

Պատասխանը միանշանակ չէ: Ամեն դեպքում, պիտի կրկնենք, հրապարակել կամ չհրապարակելը տվյալ լրատվամիջոցի որոշելիքն է, եւ ինքն էլ պատասխանատվություն է կրում իր այդ որոշման համար:

Տեսնենք, թե այս պարագայի համար ինչ են ասում էթիկական կանոնները:

Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների էթիկայի վարքականոնն:

**4. Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ**

**Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝**

**4.1. հարգել եւ պաշտպանել մարդկանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը. հասարակական անհրաժեշտությամբ կարող է արդարացվել միայն պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին միջամտությունը,**

**4.2. այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը եւ պատասխանատվություն է կրում իր վճռի համար:[2]**

Իսկ ահա, «Առավոտ» օրաթերթի վարքականոնը:

**8. «Առավոտի» լրագրողները չեն հրապարակում մարդկանց մասնավոր կյանքի մասին տեղեկություններ, եթե դրանք չեն առնչվում պաշտոնյաների եկամուտների եւ կոռուպցիոն երեւույթների հետ:[3]**

Եվ «Հետք» թերթի կանոններում:

**... Հարգել մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, հեղինակությունը, պատիվն ու արժանապատվությունը:[4]**

Մեջբերված երկու կանոնագրերում վերապահում կա. այսինքն՝ անձնական կյանքին միջամտությունը ինչ-ինչ դեպքերում կարող է արդարացվել. Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի համար դա հասարակական ուշադրության ձգտող անձանց պարագան է, ընդ որում, երբ առկա է հասարակական շահը, իսկ «Առավոտի» համար՝ պաշտոնյաների եկամուտներին եւ կոռուպցիոն երեւույթներին առնչվող պարագան: «Հետքի» ձեւակերպումն իմպերատիվ է, առանց բացառությունների:

Մենք հակված ենք ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի ձեւակերպմանը:

Ըստ այդմ, վերը բերված օրինակներից հանրային ուշադրության են արժանի պատգամավորի, երգչուհու, քաղաքապետի կյանքի դրվագները: Ուսանողական խորհրդի նախագահի անձնական կյանքը կարող է լուսաբանվել տվյալ համալսարանի ուսանողական լրատվամիջոցում, եթե այդպիսին կա... Իսկ ձեր հարեւանի կյանքը ոչ մեկին հետաքրքիր չէ, եթե նրա բարձրացրած սկանդալները չեն խախտում հասարակական կարգը, վերածվում հանցագործության կամ որեւէ այլ պատճառով հասարակական հնչեղություն չեն ստանում:

**Նման տեղեկությունները միշտ էլ հետաքրքրել են մարդկանց: Եթե տարածության եւ ժամանակի մեջ հետ գնանք, կարծում եմ, կպարզենք, որ նախնադարում էլ մարդիկ հետաքրքրվել են ցեղապետի եւ նրա կնոջ հարաբերություններով...**[5]

Ամեն դեպքում, պետք է տարբերակում դնել հասարակ մահկանացուների եւ հանրային դեմքերի միջեւ:

Իսկ ովքե՞ր են հանրային դեմքերը, ինչպե՞ս ենք որոշում, ում կյանքն է հանրային հետաքրքրության առարկա, ումը՝ ոչ:

Սահմանումները շատ են: Տարբեր երկրներում այդ հանրային դեմքերի մեջ կարող են ներառվել զանազան բնագավառի «աստղերից» մինչեւ քաղաքական գործիչներ:

Մենք սահմանենք այսպես. հանրային դեմքեր ենք համարում նրանց, ովքեր կամավոր ընտրել են գործունեության այնպիսի ոլորտ, որով իրենց դրել են հանրության ուշադրության կենտրոնում եւ, բնականաբար, դարձել հանրային հետաքրքրության օբյեկտ: Այսինքն՝ իրենք են ընտրել իրենց ճանապարհը՝ դառնալով պատգամավոր, նախարար, նախագահ, երգիչ, դերասան եւ այլն, կամ ի ծնե են այդպիսին՝ արքայազն են, իշխանադուստր եւ այլն...

Ահա մի օրինակ՝ լրատվամիջոցներում հանրահայտ կնոջ անձնական կյանքին վերաբերող լուսանկարների հայտնվելու մասին:

### ԻՏԱԼԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՔԵՄԲՐԻՋԻ ԴՔՍՈՒՀՈՒ 50 ՄԵՐԿ ԼՈՒՍԱՆԿԱՐ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ

Իտալական Chi ամսագրի գլխավոր խմբագիր Ալֆոնսո Սինյորինին հայտարարել է, որ իր «ձեռքի տակ» ունի Քեմբրիջի դքսուհի Քեյթ Միդլթոնի մերկ 200 լուսանկար և դրանցից 50 «լավագույնները» տեղ կգտնեն միայն դքսուհուն նվիրված 26 էջանոց համարում, գրում է Daily Mail-ը:

Ամսագրի խմբագիրն ասել է, որ «նույնիսկ եթե իրեն զանգահարի Մեծ Բրիտանիայի թագուհին, ինքը ոչ մի դեպքում չի հրաժարվի այդ լուսանկարները հրապարակելուց»:

Նա նաև նշել է, որ թագավորական ընտանիքը չի կարող որևէ դատական գործ հարուցել իր դեմ, քանի որ լուսանկարներն արվել են հասարակական վայրում, ուստի դա չի կարող դիտվել որպես ներխուժում անձնական կյանք:

Սակայն թագավորական զույգն ամեն կերպ փորձում է խոչընդոտել այդ լուսանկարների հրապարակմանը Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիին պատկանող Chi ամսագրում, ինչպես նաև դրանց տարածմանն այլ ժամանցային ամսագրերում:[6]

**ԹԵՐԹ.am, 16.09. 2012**

Իսկ ստորեւ՝ 2011 թվականի ապրիլի սկզբներին Հայաստանի հասարակության բուռն քննարկմանն արժանացած մի իրադարձություն:

Կրեմլի պետական պալատում երեկ կայացավ «Տաշիր-2011» համահայկական ամենամյա երաժշտական 5-րդ մրցանակաբաշխությունը, որին մասնակցում էր հայաստանյան էստրադայի ամբողջ «աստղաբույլը»: Մրցանակաբաշխության ուղիղ եթերով հնարավորություն ունեին հետևել աշխարհի տարբեր անկյուններում ապրող հայերը, իսկ Հայաստանում այն ուղիղ եթերով հեռարձակում էր «Արմենիա» հեռուստաընկերությունը... Այս անգամ կազմակերպիչները երգիչ-երգչուհիներին նվիրեցին բնակարաններ ու մեքենաներ: «Տաշիր-2011»-ի շրջանակում Երևանում բնակարաններ ստացան «Մանկական Եվրատեսիլի» հաղթող Վլադիմիր Արզումանյանը, Նունե Եսայանը, Զիվան Գասպարյանը, Սիրուշոն, Շուշան Պետրոսյանը, Արման Հովհաննիսյանը, թանկարժեք մեքենաներ՝ երգչուհիներ Լուսինան և Էմմին:[7]

Բնակարաններ նվիրելը ինչ-որ մեկի (տվյալ դեպքում հայտնի գործարարի) անձնական գործն է, նվերն ընդունելն էլ՝ աստղերի գործը: Սակայն դա կատարվել էր հրապարակային, միլիոնավոր մարդկանց աչքի առջեւ: Այսինքն, ե՛ւ կազմակերպիչները, ե՛ւ ստացողները կամավոր իրենց դրել էին հանրության ուշադրության կենտրոնում: Ուստի եւ հանրությունը լրատվամիջոցներում քննարկում էր դա, արդարացնում կամ քննադատում:

Սակայն երբ քննարկումները բուռն դարձան, երգչուհիներից մեկը ահա թե ինչ հայտարարեց:

**«Հանրությունն իրավունք չունի մեկնաբանելու այն, թե ինչ նվերներ ստացան հայ էստրադայի աստղերը «Տաշիր-2011» համահայկական մրցանակաբաշխության ժամանակ կամ թե մատնանշել, թե ինչպես է պետք վարվել ստացած նվերների հետ»,- PanARMENIAN.Net-ի թղթակցի հետ զրույցում հայտարարել է երգչուհի Շուշան Պետրոսյանը: Երգչուհին, որը արարողության ընթացքում բնակարանի հավաստագիր ստացավ որպես նվեր, նշել է, որ նա վաստակել է այն իր աշխատանքով: «Նման անկիրթ վերաբերմունք ես դեռ չեմ տեսել: Երբ մենք բարեգործությամբ ենք զբաղվում, ոչ ոք այդ մասին չի խոսում, սակայն, երբ մեզ նվիրատվություն են անում, դա դառնում է օրվա գլխավոր թեման»,- ասել է երգչուհին: Նա նշել է նաև, որ մարդիկ կարող էին մի փոքր ուրախանալ, որ հայ էստրադայի աստղերը նման ուշադրության արժանացան:**[8]

Երգչուհին (հանրային ուշադրության ձգտող անձը, ով, ի դեպ, այժմ առավել շատ է ուշադրության արժանանում, քանի որ դարձել է ՀՀ ԱԺ պատգամավոր) կարծում է, թե հասարակությունն իրեն միայն փառքի պիտի արժանացնի, իսկ քննադատելու, իր գործողությունները մեկնաբանելու իրավունք չունի: Մինչդեռ, նա ով ձգտում է հանրության ուշադրությանը, քաղաքական գործիչ լինի, թե շոու բիզնեսի աստղ, պետք է պատրաստ լինի հասարակության ցանկացած արձագանքի, այդ թվում եւ իր անձնական կյանքի վերաբերյալ: Իսկ այդ արձագանքները, բնականաբար, տարածում են զանգվածային լրատվության միջոցները:

Այսպիսով, հանրության ուշադրության կենտրոնում գտնվող անձինք ավելի քիչ են պաշտպանված իրենց անձնական կյանքի մասին տեղեկություններ տարածելուց, քան հանրության ուշադրությանը չձգտող հասարակ մահկանացուները, հետեւաբար՝ նաեւ անձնական կյանքում իրենց դրսեւորած վարքի համար քննադատության սահմանները ավելի լայն են, քան հասարակ մահկանացուների համար:

Անձնական կյանքի միջամտություն եւ անձնական տվյալների հրապարակում չի կարելի (այս դեպքում մենք էլ իմպերատիվ ենք գրում եւ ոչ թե ասում ենք խորհուրդ է տրվում), երբ խնդիրը վերաբերում է անչափահասներին: Թեպետ այստեղ էլ կարող են լինել բացառություններ: Միայն խիստ ծայրահեղ անհրաժեշտությունը կարող է ստիպել լրատվամիջոցին եւ լրագրողին՝ հայտնելու անչափահասի անձնական կյանքի որոշ տվյալներ, սակայն, ամեն դեպքում, դա հարկ է անել այնպես, որ նույնականացման հնարավորությունը բացառվի:

## Առաջադրանք

Վերցրեք մի քանի թերթ, կամ դիտեք տարբեր հեռուստաալիքների լուրերի թողարկումները, կամ կարդացեք նորությունների կայքերի լուրերը. կա՞ն արդյոք մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ: Արդարացվա՞ծ է, արդյոք, դրանց հրապարակումը:

Ձեզ համար նշեք. եթե դուք լինեիք թերթի, կայքի, ռադիոյի կամ հեռուստատեսության խմբագիր, մարդկանց անձնական կյանքին վերաբերող ո՞ր նորություններին կտայիք նախապատվությունը կամ ընդհանրապես կհրապարակեի՞ք նման նյութեր:

Դե իսկ այս բաժնի վերջում էլ՝ ազատ տողերում գրեք մարդկանց անձնական կյանքին չմիջամտելու ձեր կանոնը, եթե, իհարկե, համաձայն եք ապագա լրագրողական գործունեության մեջ առաջնորդվել այդ սկզբունքով:

**Հ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ եւ ուսումնասիրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննված «Թամմերն ընդդեմ Էստոնիայի» գործը: Դրա անգլերեն տեքստը կարող եք գտնել http://www.legalguide.am/doc/materials_on_website/materials_english/summaries/summary_tammer.pdf հասցեում:*

1. Մեջբերումն ըստ՝ ՀՀ ԱԺ կայքի, http://parliament.am/parliament.php?id=constitution&lang=arm, վերջին դիտումը՝ 01. 10. 2012թ.

2. Տես Երեւանի մամուլի ակումբի կայքում http://ypc.am/self_regul/ln/am, վերջին դիտումը՝ 01.10.2012թ.

3. «Առավոտի» էթիկայի վարքականոնը, http://www.aravot.am/9254-2 վերջին դիտումը՝ 01.10.2012թ.

4. http://hetq.am/arm/about/code-of-ethics, վերջին դիտումը՝ 16.09.2012թ.

5. Սա մեր խիստ սուբյեկտիվ պնդումն է, որ հնարավոր է չունենա փաստական հիմք:

6. http://tert.am/am/news/2012/09/16/naked-special-edition/#prettyPhoto, վերջին դիտումը՝ 16.09.2012թ.

7. Ըստ ԹԵՐԹ.am կայքի, http://www.tert.am/am/news/2011/04/04/tashir/, վերջին դիտումը՝ 16.09.2012թ.

8. Ըստ PanARMENIAN.Net կայքի, http://www.panarmenian.net/arm/culture/news/66310/, վերջին դիտումը՝ 16.09.2012թ.

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

> Փոքրամասնությունների մասին գրելիս՝ շրջահայաց եղեք բառեր եւ արտահայտություններ գործածելիս: Դրանք վիրավորելու, ինչպես նաեւ սփոփելու մեծ ուժ ունեն:

Զրույց ութերորդ

# Հանցագործն ազգություն չունի

## Զանազան խմբերի ներկայացուցիչների նկատմամբ հարգանքի մասին



Լուսանկարը՝ tribune.com.pk-ից

Լրագրողների խնդիրները դժվարանում են, երբ տեղեկատվությունը վերաբերում է զանազան խոցելի խմբերին, բռնությունների զոհերին, ազգային փոքրամասնություններին, կրոնական տարբեր կազմակերպությունների անդամներին կամ սեռական այլ կողմնորոշում ունեցող անձանց: Այլ խոսքով՝ մարդկանց, ովքեր իրենց հատկանիշներով մեզանից տարբերվում են: Լուսաբանումների ժամանակ խտրականությունն այդպիսի խմբերի նկատմամբ պետք է բացառվի:

Ի դեպ, հարկ է նաև նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրությունն էլ խտրականությունը բացառելու հոդված ունի: Ահա այն:

«

**Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:**[1]

***ՀՀ Սահմանադրություն, հոդված 14.1***

»

Ինչպե՞ս լուսաբանել, որ և՛ տեղեկատվության ամբողջությունը չտուժի, և՛ այդ խմբերի նկատմամբ անհանդուրժողականություն չքարոզվի, չբացահայտվի բռնության զոհերի, անչափահասների ինքնությունը:

Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնում այս սկզբունքը ձևակերպված է այսպես.

«

**4.3. առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են: Զգույշ լինել դեռահաս ամբաստանյալների, ինչպես նաև սեռական հանցագործությունների զոհերի, ինքնասպանություն գործած անձանց ինքնությունը բացահայտելիս,**

**4.4. ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ,**

**4.5. պահպանել անմեղության կանխավարկածը. մինչեւ դատաքննությունը հանցագործության մեջ կասկածվողների անունները հրապարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն պահպանելով անմեղության կանխավարկածի, հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատավարության իրավունքի եւ հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջեւ:**

**5.1. խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով,**

**5.2. որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն,**

**5.3. որեւէ ձեւով չքարոզել բռնություն, պոռնոգրաֆիա, պատերազմ,**

**5.4. զգույշ լինել ահաբեկչական գործողությունների վերաբերյալ տեղեկություններ տարածելիս, բացառել ահաբեկիչների նկատմամբ համակրանք առաջացնող սյուժեները եւ հաղորդագրությունները, նրբանկատ լինել իրադարձությունների ականատեսների՝ իբրեւ տեղեկատվության աղբյուրների նկատմամբ, խուսափել պատանդների եւ հնարավոր զոհերի հարազատների եւ ընկերների բացահայտումից՝ առանց իրենց համաձայնության:[2]**

Մեջբերված հատվածին կարելի էր ավելացնել մարդու սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշումը, ֆիզիկական արատները, սոցիալական կարգավիճակը անհարկի չմատնանշելու սկզբունքը:

Եթե ավտոմեքենան բախվել է պատին, ապա բոլորովին էական մանրամասն չէ այն, թե վարորդը սոցիալ-դեմոկրատ է, «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչ կամ ասորի... Այդ մանրամասնը կարող է էական դառնալ, եթե տվյալ դեպքը, դիպվածը կամ իրադարձությունը անմիջականորեն կապ ունի մարդու քաղաքական կամ կրոնական

կողմնորոշման, կամ ազգության հետ: Ասենք՝ X կուսակցության քարտուղարը ուշանում էր համագումարից, այդ պատճառով արագ էր ընթանում եւ, չկարողանալով կառավարել մեքենան, հարվածեց պատին:

Կամ՝ բողոքի ցույցի մասնակիցների ազգությունը, կրոնական պատկանելությունը կարեւոր մանրամասն են եւ պիտի հիշատակվեն հրապարակման մեջ, եթե մարդիկ ցույցի են դուրս եկել ի պաշտպանություն հենց իրենց ազգային կամ կրոնական իրավունքների, իսկ եթե սոցիալական բողոք է, ապա ազգությունը կամ կրոնական պատկանելիությունը մատնանշելը երկրորդական է:

Ահա մի հրապարակում:

Երեկ թերթը (խոսքը «Հրապարակ» թերթի մասին է – Մ. Հ.) տեղեկացել է, որ Նորագավիթում 45-ամյա տղամարդու են կախված գտել: Ըստ լուրերի, տղամարդը մեղադրվում էր հոգեկան խնդիրներ ունեցող անչափահաս աղջկա հետ սեռական հարաբերություն ունենալու մեջ: Այս մասին իմանալով՝ աղջկա ծնողները դիմել են ոստիկանություն: Գործով քննություն էր ընթանում, և ահա երեկ տղամարդուն կախված են գտել: Ոստիկանությունից «Հրապարակի» թղթակցի հետ զրույցում հաստատել են, որ տղամարդու դիակ են գտել՝ կախված վիճակում: Այլ մանրամասներ չեն հայտնել: Որոշ տեղեկություններով, նա ազգությամբ եզդի է, ամուսնալուծված:[3]

**ԹԵՐԹ.am 19. 09. 2012**

Ի՞նչ եք կարծում, այս տեղեկատվության համար հանցագործության մեջ կասկածվողի ազգությունը կարեւո՞ր մանրամասն է...

Ահա եւս մի հրապարակում, որտեղ դարձյալ կա ազգության հիշատակում, սակայն նյութի համար այն կարեւոր է, քանզի առանց դրա տեղեկությունն ամբողջական չէր լինի:

Հայաստանի ամենամեծ ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդի համայնքը կտրականապես դեմ է վերջերս Հայաստանի կառավարության կողմից հավանության արժանացած «ՀՀ Ընտանեկան օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծին, ըստ որի ամուսնության նվազագույն տարիք է սահմանվել 18 տարեկանը:

Հայաստանի գործող Ընտանեկան օրենսգրքի համաձայն՝ ամուսնանալու նվազագույն տարիքը մինչ այդ աղջիկների համար 17-ն էր, տղաների համար՝ 18-ը: Այժմ եւ տղաների, եւ աղջիկներ համար սահմանվել է 18 տարեկանը:

Չընդունելով այս օրենքի փոփոխությունը՝ եզդի համայնքի առանցքային դեմքերից մեկը՝ Ազիզ Թամոյանը, նշում է, որ նախագիծը «դժբախտություն» է իրենց համար, քանի որ եզդի աղջիկներն ամուսնանում են 15-16 տարեկանում:

> «18 տարեկան աղջիկը արդեն պառավ է մեզ համար՝ «տիրըսը»: Մեզ մոտ 18-19 տարեկան աղջիկները չեն էլ ամուսնանում, քանի որ ուզողներ չեն ունենում: Եզդի համայնքը դեմ է այս օրենքի ընդունմանը: Կառավարությունը, հավանություն տալով նման օրենքի, պետք է հաշվի առնի ամենամեծ ազգային փոքրամասնության խոսքը, մեր սովորույթները, ազգային օրենքներն ու կրոնական ավանդույթները»,- «Մեդիալաբին» ասում է «Աշխարհի եզդիների միության» նախագահ Ազիզ Թամոյանը:[4]
>
> **aravot.am 24. 07. 2012**

Զանազան փոքրամասնությունների, խոցելի խմբերի վերաբերյալ հրապարակումների ուղեցույց է Լոնդոնում գործող «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ» (Media Diversity Institute) կազմակերպության հրատարակած «Բազմակողմանի լրատվության ձեռնարկ» գիրքը:

Ահա մի քանի ընդհանուր խորհուրդներ այդ գրքից:

**... էթնիկ, սոցիալական, կրոնական կամ այլ փոքրամասնությունների մասին գրելիս չափազանց կարեւոր է այդ խմբի ներկայացուցիչների հետ հարցազրույցներ անցկացնել եւ վերջիններիս դիրքորոշումներն ընդգրկել հոդվածում...**

**... Շրջահայաց եղեք բառեր եւ արտահայտություններ գործածելիս: Դրանք վիրավորելու, ինչպես նաեւ սփոփելու մեծ ուժ ունեն: Լեզվի անփույթ գործածությունը կարող է սրել էթնիկ եւ սոցիալական լարվածությունը, եթե նույնիսկ նման մտադրություն չեք ունեցել: Իրազեկ եղեք, թե փոքրամասնությունների անդամներն ինչպես են նախընտրում, որպեսզի իրենց անվանեն տվյալ լեզվով, որով գրում եք...**

**... էթնիկ եւ այլ փոքրամասնություններին մի վերաբերվեք իբրեւ միաձույլ միավորումների: Արտաքուստ թվում է, թե համայնքի բոլոր անդամներն ունեն միեւնույն մոտեցումը, սակայն իրականում ամեն ինչ այդքան էլ պարզ չէ...**

**... Շատ մարդիկ տարբեր սոցիալական խմբերի նկատմամբ ունեն ընդգծված բացասական վերաբերմունք: Եթե որոշ պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ, հոգեւորականներ կամ այլ անձինք կարող են վիրավորական արտահայտություններ գործածել փոքրամասնությունների մասին խոսելիս, ապա դա ամենեւին չի նշանակում, թե դուք, իբրեւ լրագրող, պետք է ձեր նյութի մեջ ընդգրկեք նման անպատիվ արտահայտությունները: Անհրաժեշտության դեպքում այդ միտքն այլ խոսքերով արտահայտեք: Եթե որոշել եք այդ**

արտահայտությունները մեջբերել ուղղակիորեն, ի նկատի ունեցեք, որ տվյալ փոքրամասնության անդամները վիրավորական եւ զայրացնող են համարելու դրանք:[5]

## Առաջադրանք

Վերցրեք մի քանի թերթ, կամ դիտեք տարբեր հեռուստաալիքների լուրերի թողարկումները, կամ կարդացեք նորությունների կայքերի լուրերը. կա՞ն արդյոք հրապարակումներ, հեռուստառեպորտաժներ՝ զանազան խոցելի խմբերի, ազգային, կրոնական կամ սեռական փոքրամասնությունների վերաբերյալ: Ձեր կարծիքով ամբողջակա՞ն են արդյոք այդ հրապարակումները, վիրավորու՞մ են, արդյոք, դրանք մարդկանց զգացմունքները:

Ձեզ համար նշեք. եթե դուք լինեիք թերթի, կայքի, ռադիոյի կամ հեռուստատեսության խմբագիր, թեմային վերաբերող ո՞ր նորություններին կտայիք նախապատվությունը կամ ընդհանրապես կհրապարկեի՞ք նման նյութեր:

Դե իսկ այս բաժնի վերջում էլ՝ ազատ տողերում գրեք մարդկանց այս խմբերի նկատմամբ հարգանքի ձեր կանոնը, եթե, իհարկե, համաձայն եք ապագա լրագրողական գործունեության մեջ առաջնորդվել այդ սկզբունքով:

**Հ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի» (Media Diversity Institute) հրատարակած «Բազմակողմանի լրատվության ձեռնարկ» գիրքը:*

1. Մեջբերումն ըստ՝ ՀՀ ԱԺ կայքի, http://parliament.am/parliament.php?id=constitution&lang=arm, վերջին դիտումը՝ 01.10.2012թ.

2. Տես Երեւանի մամուլի ակումբի կայքում http://ypc.am/self_regul/ln/am, վերջին դիտումը՝ 01.10.2012թ.

3. Մեջբերված է ըստ ԹԵՐԹ.am կայքի, http://tert.am/am/news/2012/09/19/anchapahas/, վերջին դիտումը՝ 19.09.2012թ.

4. Տես http://www.aravot.am/2012/07/24/93851/, վերջին դիտումը՝ 21.09.2012թ.

5. Դեյվիդ Թայեր, «Բազմակողմանի լրատվության ձեռնարկ», Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ,«Անտարես» հրատարակչություն, Երեւան-2005, էջ 17-19

“Պատասխանի եւ հերքման հնարավորություն տալուց բացի, լրատվամիջոցն ինքը պետք է հետամուտ լինի հայտնաբերելու եւ ուղղելու իր էջերում սպրդած վրիպակներն ու սխալները:”

Զրույց իններորդ

## Քլինթոնի նախագահության «պայծառ գարունն» ու Ջորջ Բուշ Ավագի «նախագահության ձմեռը»

Սխալների ուղղման եւ պատասխանի հնարավորության տրամադրման մասին



Լուսանկար՝ tribune.com.pk-ից

Սեփական սխալներն ընդունելն ու դրանք ուղղելը, մարդկանց պատասխանի եւ հերքման հնարավորություն ընձեռելը լրագրողական պարկեշտության կարեւոր սկզբունքներից են: Ոչ մեկն այս աշխարհում ապահովագրված չէ սխալվելուց, վրիպակներ թույլ տալուց: Հաճախ՝ նաեւ բարկանալուց եւ անհարկի արտահայտություններ օգտագործելուց: Այս ամենը պետք է շտկել անպայման:

Պատասխանի եւ հերքման իրավունքն, ի դեպ, Հայաստանում նաեւ օրենսդրական կարգավորում ունի, դրան է վերաբերում «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը: Ահա մի քանի մեջբերումներ այդ ընդարձակ հոդվածից.

**1. Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:**

**Հերքման պահանջը կարող է ներկայացվել մեկամսյա ժամկետում՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը:**

**2. Լրատվական գործունեություն իրականացնողը հերքման պահանջն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, պարտավոր է հերքման պահանջը ներկայացնողին տեղեկացնել հերքումը տարածելու ժամանակի մասին կամ գրավոր հայտնել հերքման տարածումը մերժելու մասին...**

**... 5. Հերքման պահանջի հետ անձն իրավունք ունի պահանջել իր պատասխանի հրապարակումը:**

**... Պատասխանը չպետք է հակասի սույն օրենքի պահանջներին եւ պետք է վերաբերի միայն պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անճշտություններին: Այն չպետք է պարունակի պատասխանի առարկա տեղեկատվությունը պատրաստած կամ տարածած անձի, ցանկացած այլ անձի կամ նրանց գործունեության քննադատություն, եթե դա ուղղակիորեն կապված չէ այդ տեղեկատվության հետ:**[1]

***«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 8***

Սակայն եթե օրենքը հերքման կամ պատասխանի հրապարակման պայմաններ է նախատեսում, ապա շատ լրատվամիջոցներ էթիկական կանոններով իրենք իրենց համար պատասխանը հրապարակելու անվերապահ պարտավորություն են սահմանում:

Ստորեւ՝ մի քանի օրինակներ.

«Վաշինգթոն փոստ» թերթի էթիկայի կանոններից.

**Հրապարակումներում քննադատվող կամ մեղադրվող անձանց պետք է պատասխանի հնարավորություն ընձեռել...**

**...Մեր թերթը պարտավորվում է նվազագույնի հասցնել եւ ուղղել առկա սխալները... Հարգանքով պետք է լսենք այն մարդկանց, ովքեր մեր ուշադրությունն են հրավիրում սխալների վրա...**[2]

Ահա եւ՝ «Առավոտ» օրաթերթի կանոնների համապատասխան դրույթը:

**Այն անձը կամ կազմակերպությունը, որի մասին նյութում բացասական կարծիք կամ մեղադրանք է հնչեցվում, հնարավորություն ունի «Առավոտի» նույն նյութում կամ հաջորդ օրերին տպագրվելիք նյութերում պարզաբանում կամ պատասխան տալ:**[3]

Հետաքրքիր ձեւակերպում ունի «Բիզնես Ուիք» հանդեսի էթիկայի կանոնագրի՝ այս սկզբունքին վերաբերող դրույթը:

**Եթե նյութին առարկություններ կան, մենք անց ենք կացնում մանրակրկիտ հետաքննություն: Եթե մենք ճիշտ ենք, պնդում ենք մերը, ումից էլ որ եկած լինի բողոքը: Եթե մենք ճիշտ չենք, ապա այդ մասին ասում ենք ուղղակի ու կատարում համապատասխան ճշտումները:**[4]

Պատասխանի եւ հերքման հնարավորություն տալուց բացի, խորհուրդ է տրվում, որ լրատվամիջոցն ինքը հետամուտ լինի հայտնաբերելու եւ ուղղելու իր էջերում (հաղորդումներում) սպրդած վրիպակներն ու սխալները: Համացանցային հրատարակությունների պարագայում դա անելն ավելի հեշտ է՝ հնարավոր է ուղղել ու անմիջապես թարմացնել հրապարակումը: Իհարկե, այս ձեւն ընթերցողի նկատմամբ այնքան էլ հարգալից վերաբերմունք չէ, մանավանդ, եթե ընթերցողն արդեն կարդացել է ձեր թույլ տված սխալը: Լավ կլինի, ուղղել հղումով եւ ներողություն հայցել: Իսկ ավանդական լրատվամիջոցների դեպքում այդ ուղղումները հարկ է անել է հնարավորինս շուտ՝ առաջիկա թողարկումների մեջ:

Որոշ տպագիր լրատվամիջոցներ, օրինակ՝ անգլիական «Գարդիանը» ունի հատուկ ուղղումների սյունակ, որտեղ էլ հրապարակվում են նախորդ համարներում նկատված վրիպակների վերաբերյալ ուղղման տեքստերը: Վերջին տարիներին այդ տեքստերը գրում է թերթի «ընթերցողների խմբագիր» (օմբուդսման) Յան Մեյսը: Ընդ որում, նրա տեքստերը գրվում են թեթեւ ոճով, երբեմն՝ հումորով: Ահա Յան Մեյսի՝ «Գարդիանում» տպագրած ուղղումների մի քանի օրինակներ.

Մեքսիկայի նախագահության ձախակողմյան թեկնածուի մասին խոսելիս մենք նրան անվանել էինք պարզապես Մանուել Լոպես Օբրադոր, մոռանալով նշել նրա անունը՝ Անդրե («Գարի Յունգի բարոյական աշխարհի գավաթը», էջ 3, G2, 16 հունիսի):[5]

Մենք առանց դիտավորության վիրավորել ենք լեյբորիստների գլխավոր վիփ (ծան - Վիփը ամերիկյան ու բրիտանական կուսակցություններում այն պաշտոնյան է, որ հետեւում է, որպեսզի կուսակցականները մասնակցեն ու քվեարկեն կառավարության կարեւոր քանավեճերի ժամանակ) Հիլարի Արմսթրոնգին՝ ասելով, թե նա համարյա կրկնակի մեծ է պահպանողականների առաջնորդ Դեյվիդ Քամերոնից («Թորիները առաջ են անցնում մինչ Համայնքների պալատը կռիվ է տալիս Բլերի դեմ», էջ 4, երեկ): Իրականում Քամերոնը 39 տարեկան է, իսկ Արմսթրոնգը 60, այնինչ 39-ի համարյա կրկնակին համարյա 78 է անում:[6]

Մենք սխալմամբ գրել էինք, թե երբ 1992 թվին էկրան բարձրացավ «Հիմնական բնազդը», «Բիլ Քլինթոնն իր նախագահության պայքար գարունն էր ապրում դեռ» («Մարմնական մեղքեր», էջ 9, «Ֆիլմ եւ երաժշտություն», 31 մարտի): Իրականում այդ տարվա մարտին, երբ ֆիլմը էկրան բարձրացավ, Ջորջ Բուշ Ավագն էր ապրում իր նախագահության ծմեռը: Նախագահ Քլինթոնն ընտրվել է 1992թ. նոյեմբերին եւ օծվել 1993թ. հունվարին:[7]

Քողարկիչ հագուստով մարդիկ, որ շրջապատել էին շախմատի ֆեդերացիայի հավաքը Զամբիայի Կաբվե քաղաքում, ոստիկաններ էին, ոչ թե զինվորականներ:[8]

## Առաջադրանք

Վերցրեք մեկ շաբաթվա մի քանի թերթ, կամ դիտեք տարբեր հեռուստաալիքների լուրերի թողարկումները, կամ կարդացեք նորությունների կայքերի լուրերը. կա՞ն արդյոք հրապարակումների, հեռուստառեպորտաժների հերոսների պատասխաններ, պարզաբանումներ, կամ լրատվամիջոցի թույլ տված սխալների ուղղումներ:

Ձեզ համար նշեք. եթե դուք լինեիք թերթի, կայքի, ռադիոյի կամ հեռուստատեսության խմբագիր, կհրապարակեի՞ք, արդյոք, այդ պատասխաններն ու ուղղումները հենց այդ ձեւով:

Դե իսկ այս բաժնի վերջում էլ՝ ազատ տողերում գրեք պատասխանի եւ հերքման իրավունք տրամադրելու, սխալներն ուղղելու ձեր կանոնը, եթե, իհարկե, համաձայն եք ապագա լրագրողական գործունեության մեջ առաջնորդվել այդ սկզբունքով:

**Հ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ անգլիական «Գարդիան» թերթի օմբուդսմանի (ընթերցողների խմբագիր) Յան Մեյսի՝«Բաց դուռ. Ընթերցողների խմբագիրը՝ ընթերցողներին» 3 գիրքը, որում, ինչպես նշեցինք, բերված են նաեւ «Գարդիանի» հրապարակումների սխալների ուղղումների օրինակներ:*

1. Մեջբերված է ըստ ՀՀ ԱԺ պաշտոնական կայքում հրապարակված տեքստի: Տես http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1890&lang=arm, վերջին դիտումը՝ 01.10.2012թ.

2. «Վաշինգթոն փոսթ» թերթի էթիկայի կանոնները, «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը»: ԵՄԱ, Երեւան-2000, էջ 32, 34

3. Տես «Առավոտի» էթիկայի վարքականոնը, http://www.aravot.am/9254-2/ վերջին դիտումը՝ 01.10.2012թ.

4. «Բիզնես Ուիք» հանդեսի մասնագիտական էթիկայի կանոնները, «Զանգվածային լրատվության անկախ միջոցների մենեջմենթ» (դասախոսությունների ժողովածու), ՀԺՄ, Երեւան – 1996թ., էջ 104

5. Յան Մեյս, «Բաց դուռ. Ընթերցողների խմբագիրը՝ ընթերցողներին», ԵՄԱ, «Վելաս պրինտ», Երեւան – 2006, էջ 209

6. Նույն տեղում, էջ 217

7. Նույն տեղում, էջ 223

8. Նույն տեղում, էջ 224

# ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՎԱԶԴԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Այս խորագրի տակ ներառելու ենք նաեւ սեփականատերերի հետ հարաբերությունների խնդիրը: Ահա թե ինչու իբրեւ սկզբունք, այս բաժնում նշված է խմբագրական անկախությունը: Այսինքն՝ խմբագրական ստեղծագործական գործունեությանը չմիջամտելու սկզբունքը:

Երկրորդը, որ անկախության բաղկացուցիչներից է, հրատարակումներում գովազդատուներին եւ հովանավորներին առավելություն չտալն է: Ցանկացած խմբագրությունում լինում են վեճեր կոմերցիոն բաժնի եւ ստեղծագործական բաժնի միջեւ. «մի քիչ լավ վերաբերվեք X ֆիրմային, չէ՞ որ նա մեր հիմնական գովազդատուներից մեկն է...»: Ահա թե ինչու շատ էթիկական կանոնագրեր կոմերցիոն եւ ստեղծագործական բաժինների հարաբերությունների մասին հատուկ նշում ունեն:

Այսպիսով, այս բաժնում մենք զրուցելու ենք հետեւյալ սկզբունքի շուրջ՝

- Խմբագրական անկախություն, գովազդատուների եւ հովանավորների լուսաբանման առավելության բացառում

> «Խմբագրական անկախությունը ենթադրում է, որ ոչ ոք, այդ թվում եւ սեփականատերերը կամ հրատարակիչները չպետք է միջամտեն խմբագրակազմի աշխատանքին:»

## Զրույց տասներորդ

# «Ռոմեո եւ Ջուլիետ»-ում դեղագործի դե՞րն է ամենից կարեւորը

### Խմբագրական անկախության, գովազդատուների եւ հովանավորների լուսաբանման առավելության բացառման մասին



Լուսանկարը՝ http://www.dvdactive.com-ից

Ֆրանսիական «Խաղալիք» ֆիլմում (Պիեռ Ռիշարի գլխավոր դերակատարմամբ) հիմնական սյուժետային գծից զատ ներկայացված են նաեւ թերթի մեծահարուստ սեփականատիրոջ (որը շատ այլ բիզնեսներ ուներ) եւ խմբագրակազմի հարաբերությունները. սեփականատերն ինքն է որոշում քաղաքականությունը, ազատում այս կամ այն աշխատակցին (միայն նրա համար, որ այդ աշխատակցի ձեռքերը խոնավ են), հանձնարարում լուսաբանել, ասենք, իր նորաստեղծ խաղալիքների խանութի բացումը եւ այլն: Այսինքն՝ ամբողջությամբ միջամտում է լրատվամիջոցի գործունեությանը... Սա այդ ֆիլմի թողարկման տարիների (գուցե նաեւ այսօրվա) իրականության գեղարվեստական արտացոլումն է, սակայն, այսուհանդերձ, շատ ու շատ երկրներում հռչակված է սեփականատերերից կամ հրատարակիչներից խմբագրական անկախությունը:

Այսպես, Նորվեգիայում դեռեւս 1953 թվականին ընդունված եւ 1973-ին վերախմբագրված խմբագրական կանոնագիրը՝ «Ռեդակտորպլակատենը» սահմանում է, որ գլխավոր խմբագիրն է միայն, որ ունի թերթի բովանդակության հարցերը լուծելու անսահմանափակ իրավասություններ: Հրատարակիչն օրենքով իրավունք չունի որոշելու, թե ինչ պետք է տպագրել:[1]

Ահա թե ինչպիսի ազդեցություններ է ունեցել այդ փաստաթուղթը նորվեգական լրատվական շուկայում.

**1987 թվականին, երբ «Մորգենբլադետ» թերթի հրատարակիչը փոխեց թերթի առաջին էջը, ողջ խմբագրակազմը, ի նշան բողոքի, հրաժարական տվեց եւ հեռացավ թերթից: Նույն թվականին «Միդխորդալանդ» թերթի հրատարակիչը պահանջեց հանել իրեն եւ իր ընտանիքի բիզնեսին վերաբերող հոդվածը: Խմբագիրն ու լրագրողն անմիջապես հեռացան եւ տեղափոխվեցին դիմացի մայթում գտնվող մրցակից թերթ: «Միդխորդալանդը» սնանկացավ, իսկ նրա մրցակիցը շարունակում է հրատարակվել:[2]**

«Վաշինգթոն փոստ» թերթի էթիկայի կանոնագրի վերջում կա այսպիսի մի նշում:

> **Երբ 1933 թվականին Յուջին Մեյերը գնեց «Վաշինգթոն փոստ»-ը, հրատարակելու իրավունքը, ինչն առ այսօր շարունակում է մնալ նրա ընտանիքի մենաշնորհը, նա հռչակեց հետեւյալ կանոնները.**
>
> **... Թերթի առաջնային առաքելությունը ճշմարտություն գտնելն ու հնարավորինս հստակ ներկայացնելն է...**
> **... Թերթը պետք է ծառայի ընթերցողներին, առհասարակ հասարակությանը եւ ոչ թե թերթի տիրոջ մասնավոր շահերին...[3]**

Այսպիսով, խմբագրական անկախությունը ենթադրում է, որ ոչ ոք, այդ թվում եւ սեփականատերերը կամ հրատարակիչները չպետք է միջամտեն խմբագրակազմի աշխատանքին: Ընդ որում, պետք է բացառել ոչ միայն սպառնալիքների, այլեւ խնդրանքի կամ նվերի տեսքով միջամտությունները:

Այս մասին նշում կա նաեւ Հայաստանի ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի «Խմբագրական անկախություն» բաժնում: Ահա այն.

**3. Խմբագրական անկախություն**

**Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝**

**3.2. խմբագրական լուսաբանումներում գովազդատուներին ու հովանավորներին արտոնություններ չտալ,**

**3.3. դիմակայել իրադարձությունների լուսաբանման վրա ազդելու նպատակով գովազդատուների, հովանավորների, ԶԼՄ սեփականատերերի գործադրած ճնշումներին,**

**3.4. հրաժարվել տեղեկություններ հրապարակելու կամ չհրապարակելու համար խոստացվող վճարներից, նվերներից, ինչը մասնագիտական անկախության հետ հակասության մեջ է մտնում եւ հանգեցնում է վստահության կորստի:[4]**

Գովազդատուներն ու հովանավորները որեւէ առավելություն չպետք է ունենան իրենց վերաբերող լուսաբանումներում: Գովազդի բաժինն ամբողջությամբ առանձնացված պետք է լինի ստեղծագործական բաժնից: Որոշ լրատվամիջոցներ շատ խիստ են սահմանում այս կանոնը:

Ահա «Բիզնես ուիք» հանդեսի մասնագիտական էթիկայի կանոնների համապատասխան հատվածը.

**Մեզ մոտ գովազդ տեղադրող ֆիրմաներն ունեն նույն իրավունքները, ինչ եւ մյուս ընկերությունները: Մենք առավելություն չենք տալիս որեւէ ֆիրմայի: Խմբագրության աշխատակիցները մեր կոմերցիոն բաժնի աշխատակիցների հետ պաշտոնական հարաբերությունների շրջանակից դուրս չեն գալիս առանց գլխավոր խմբագրի թույլտվության: Եթե խմբագրության**

**աշխատակիցները դրսից կամ մեր կոմերցիոն բաժնի կողմից ճնշում են զգում, պարտավոր են անմիջապես այդ մասին տեղյակ պահել գլխավոր խմբագրին:[5]**

Իսկ թե ինչ կարող է ստացվել, երբ գովազդատուն կամ հովանավորը առավելություն է ստանում, ցույց տանք մեկ այլ ֆիլմից քաղված կադրով:

Խոսքը բազմակի օսկարակիր «Սիրահարված Շեքսպիրը» ֆիլմին է վերաբերում: Ովքեր դիտել են այն, կհիշեն սյուժեն: Այս ֆիլմում պատմվում է «Ռոմեո եւ Ջուլիետ»-ի առաջին բեմադրության մասին: Ներկայացման հովանավորը՝ միստր Ֆենիմանը նաեւ ստացել էր դեղագործի աննշան դերը խաղալու իրավունք: Բնական է, որ նույն հովանավորը նաեւ ազդագրերն էր հրատարակել, որոնցում մեծ տառերով նշված էր «Միստր Ֆենիմանը դեղագործի դերում»:
(Տես՝ էջ 92)

## Առաջադրանք

Վերցրեք մեկ շաբաթվա մի քանի թերթ, կամ դիտեք տարբեր հեռուստաալիքների լուրերի թողարկումները, կամ կարդացեք նորությունների կայքերի լուրերը. կա՞ն արդյոք հրապարակումներ, որոնցում զգացվում է գովազդատուներին կամ տվյալ հաղորդման, թերթի, կայքի հովանավորներին առավելություններ տալու օրինակներ:

Ձեզ համար նշեք. եթե դուք լինեիք թերթի, կայքի, ռադիոյի կամ հեռուստատեսության խմբագիր, դրանցից որոնք կհրապարակեիք կամ կհեռարձակեիք եւ ինչ ձեւով:

Դե իսկ այս բաժնի վերջում էլ՝ ազատ տողերում խմբագրական անկախության եւ գովազդատուներին ու հովանավորներին առավելություն չտալու սկզբունքի ձեր սահմանումը:

**Հ. Գ.** *Ի հավելումն այս զրույցի, խորհուրդ կտանք կարդալ Գաբրիել Գարսիա Մարկեսի «Աշխարհի լավագույն մասնագիտությունը» վերնագրված ելույթը: Դրա հայերեն թարգմանությունը կարող եք կարդալ Այդին Մորիկյանի կազմած «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու. Բնագրեր» գրքում (Երեւանի մամուլի ակումբ, Բաց հասարակության ինստիտուտ, «Վելաս պրինտ», Երեւան – 2006, էջ 370):*

---

1. «Զանգվածային լրատվության միջոցներ. Օրենքներ եւ պրակտիկա» (համեմատական վերլուծություն): Հետազոտությունը պատրաստել է «Արտիկլ XIX» միջազգային կազմակերպությունը: «Տիգրան Մեծ», Երևան-1999, էջ 110

2. Նույն տեղում

3. «Վաշինգթոն փոստ» թերթի էթիկայի կանոններ», «Քաղաքական պայքարը եւ լրագրողի մասնագիտական բարոյականությունը»: ԵՄԱ, Երեւան-2000, էջ 36

4. Տե՛ս Երեւանի մամուլի ակումբի կայքում http://ypc.am/self_regul/ln/am, վերջին դիտումը՝ 01.10.2012թ.

5. «Բիզնես Ուիք» հանդեսի մասնագիտական էթիկայի կանոնները», «Զանգվածային լրատվության անկախ միջոցների մենջմենթ» (դասախոսությունների ժողովածու), ՀԺՄ, Երեւան – 1996 թ., էջ 105-106:

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

“Այդ կանոնագիրը պահպանելու կամ չպահպանելու համար դուք պատասխանատու եք միայն լսարանի, գործընկերների եւ ձեր խղճի առջեւ:”

## ԱՄՓՈՓՈՒՄ




Լուսանկարը՝ flickr.com-ից

Մենք ավարտեցինք մեր զրույցները լրագրողական էթիկայի մի քանի սկզբունքների շուրջ: Բայց ամփոփումից առաջ, եւ ի հավելումն բոլոր ասածների, ուզում ենք մեջբերում անել մեր պատանության սիրած ստեղծագործություններից մեկից: Խոսքը Ջեկ Լոնդոնի «Արեւի որդին» պատմվածքաշարի «Գիշերը Յոբոտոյում» պատմվածքին է վերաբերում: Ջեկ Լոնդոնի հիշյալ շարքի գլխավոր հերոս Դեվիդ Գրիֆը Յոբոտոյում պատահաբար հանդիպում է բավականին ինքնագոհ, մեծամիտ, ընդսմին՝ արդեն սպիրտի բավականին քանակություն օգտագործած մի անծանոթի, որը այն ժամանակների համար բավականին խոշոր վարկային գիծ ունենալով, շռայլում էր այդ փողը՝ տանուլ տալով, տանուլ տալուց հետո անզուսպ հայհոյելով, անվանարկելով մարդկանց, ովքեր չէին ցանկանում այլեւս իր հետ թուղթ խաղալ: Դեւիդ Գրիֆը նրան առաջարկում է կորցրածը հետ բերել: Խաղի պայմանը հետեւյալն էր. եթե այդ երիտասարդը հաղթում էր՝ հետ էր ստանում իր պարտված ողջ գումարը, եթե ոչ՝ մեկնում էր վայրենիներով բնակեցված մի կղզում գտնվող Գրիֆի պլանտացիաներում կառավարիչ աշխատելու: Սակայն ի հավելումն այս ամենի Գրիֆը նրա համար կանոններ է գրում, որ նա պարտավոր կլիներ արտասանել ամեն առավոտ: Ահա այդ կանոնները.

**«Ես պետք է մեկընդմիշտ հիշեմ, որ յուրաքանչյուր մարդ արժանի է հարգանքի, եթե միայն նա իրեն չի համարում ուրիշներից ավելի լավ մարդ»:**

**«Ինչքան էլ որ խմած լինեմ, ես պետք է մնամ ջենտլմեն: Ջենտլմենը մի մարդ է, որը միշտ քաղաքավարի է: Ծանոթություն. ավելի լավ է չխմել մինչեւ հարբելու աստիճան»:**

**«Տղամարդկանց հետ տղամարդու խաղի մեջ մտնելիս ես պետք է ինձ պահեմ տղամարդու պես»:**

**«Ժամանակին ու տեղին ասված խոսքը թեթեւացնում է հոգին: Անտեղի հայհոյելը իմաստից զրկում է հայհոյանքը: Ծանոթություն. հայհոյանքը լավ խաղաքուղթ չի բերում, այլ դատարկ քամի է»:**

**«Տղամարդուն չի թույլատրվում մոռանալ, որ ինքը տղամարդ է: Այդպիսի թույլտվություն չես գնի նույնիսկ տասը հազար ֆունտով»:**[1]

Պիտի հավելեմ, որ այդ ամբարտավան երիտասարդը, այս կանոնները կարդալուց հետո, սթափվում եւ ներողություն է խնդրում ներկաներից:

Ինչո՞ւ հիշեցի սա եւ հիշեցրի ձեզ: Որովհետեւ այս կանոնները գրելուց հետո, Դեւիդ Գրիֆը երիտասարդին՝ Դիկոնին ասում է նաեւ. «Դուք երկու տարվա ընթացքում ամեն առավոտ դրանք պետք է բարձրաձայն արտասանեք... Դրանք ձեր

օգնի են: Ես համոզված եմ, որ երբ Քարո-Քարո կղզում դուք դրանք կրկնեք յոթ հարյուր երեսուն անգամ, ապա ընդմիշտ կմխրճվեն ձեր հիշողության մեջ»:[2] Մենք ձեզ չենք պարտադրի ամեն առավոտ արտասանել էթիկական կանոնները: Ավելին, մենք ձեզ չենք պարտադրում մե՞ր կանոնները: Պարզապես ասում ենք. ժամանակն է, որ ոչ թե մենք՝ Դեւիդ Գրիֆի օրինակով ձեզ համար կանոններ առաջարկենք, այլ ինքներդ շարադրեք դրանք՝ ի մի բերելով այս գրքի սկզբում՝ երեք դատարկ վանդակներում ձեր գրածները, յուրաքանչյուր բաժնից հետո գրառած ձեր սկզբունքները, մեր առաջարկները եւ եթե հարկ լինի՝ ավելացնելով էլի կանոններ:

Իսկ եթե ուզում եք, ընդհանրապես անտեսեք այս գրքում եղածն ու գրեք ձերը՝ միայն ձերը:

Արդ, ահա ձեզ եւս ազատ տողեր, գրեք ձեր կանոնագիրը.

Ես՝ ______________________________

սկսելով զբաղվել տեղեկություններ եւ գաղափարներ տարածելու հանրային կարեւորություն ունեցող գործով, ինքս իմ եւ իմ ընթերցողների առջեւ պարտավորվում եմ առաջնորդվել հետեւյալ կանոններով ու սկզբունքներով.

-------- ---------------- -------

---------------------------------
ստորագրություն

Գրեցի՞ք:

Ապրեք: Հրաշալի է: Իսկ հիմա դրա տակ դրեք ամսաթիվ եւ ստորագրեք:

Տեսա՞ք՝ մենք ձեզ ոչինչ չպարտադրեցինք, եւ դուք հիմա կամավոր լրագրողական գործունեության էթիկայի անձնական կանոնագիր ստեղծեցիք:

Աշխատեք հետեւել դրան, առաջնորդվել դրանով: Դա շատ հեշտ է, մանավանդ գիտեք, որ այն խախտելու համար ոչ մեկը ձեզ չի քառատելու, չի տուգանելու կամ այլ կերպ չի պատժելու:

Այդ կանոնագիրը պահպանելու կամ չպահպանելու համար դուք պատասխանատու եք միայն լսարանի, գործընկերների եւ ձեր խղճի առջեւ: Հետեւաբար, խախտելու դեպքում միայն ինքներդ եք ներքուստ տանջվելու...

Իսկ դա առավել դաժան պատիժ է, քանի որեւէ դատարանի սահմանածը:

1. Ջեկ Լոնդոն, «Գիշերը Հոբոտոյում» (թարգմ. Պ. Մարտիրոսյան), Ջեկ Լոնդոն, Երկերի ժողովածու 12 հատորով, հատոր 7, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան – 1967:, էջ 157

2. Նույն տեղում:

## ՄԱՍ 2
ՕՐԻՆԱԿՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

> “Թանկարժեք նվեր ընդունած լրագրողը, նրա խմբագրությունը կաշկանդված են լինում նվիրատուին վերաբերող տեղեկություններ տարածելիս։”


**Գեղամ Վարդանյան**
Ինտերնյուսի Media.am կայքի պրոդյուսեր


# Թանկարժեք նվեր լրագրողին
## Սմարթֆոնների գործը



Լուսանկարը՝ flickr.com-ից

Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտում աշխատող ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը 2012թ.-ի ամանորի տոներից առաջ ընդունելություն էր կազմակերպել լրագրողների համար: Երեկոյին ներկա բոլոր լրագրողներին ՎիվաՍել-ՄՏՍ-ը նվիրել էր HTC Wildfire սմարթֆոններ: Այն ժամանակ Երեւանի խանութներում այդ մակնիշի սմարթֆոնների միջին գինը 135 հազար դրամ էր: Լրագրողները ընդունել էին նվերները: Ավելին, լրագրողները տեղյակ էին եղել սպասվող նվերի մասին: Եղել էին խմբագրություններ, որտեղից մինչամանորյա երեկույթին մասնակցելու էր գնացել մեկից ավելի լրագրող՝ հատուկ սմարթֆոն ստանալու համար: Միայն մեկ խմբագրության լրագրող էր հրաժարվել թանկարժեք եւ օգտակար հեռախոսից:

Ամանորյա նվերների պատմությունը, լրագրողական էթիկայի տեսանկյունից, հետագայում քննարկվել է media.am կայքում:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի լրատվամիջոցների հետ կապերի համար պատասխանատու աշխատակիցը media.am-ի թղթակցին ասել է, որ թանկարժեք սմարթֆոն նվիրելով իրենք ոչ թե ցանկացել են կաշառել լրագրողներին, այլ նրանց տվել են աշխատանքային գործիք՝ ժամանակակից հեռախոս, որն անհրաժեշտ է լրագրողական աշխատանքն ավելի որակյալ իրականացնելու համար:

«Առավոտ» օրաթերթի խմբագիր Արամ Աբրահամյանը, մեկնաբանելով «սմարթֆոնների գործը», նկատել է.«Եթե որեւէ ընկերություն լրագրողին երեկույթի է հրավիրում կամ նվեր նվիրում, դա չի նշանակում, որ լրագրողը պարտավորություն է կրում միայն լավը գրել այդ ընկերության մասին»:

«Առավոտ»-ի խմբագրական քաղաքականության համաձայն՝ նման միջոցառումներին մասնակցելու կամ նվերներ ընդունելու որոշումները կայացնում են հենց իրենք՝ լրագրողները:

«Ես չեմ կարող հրամայել նրանց այդ նվերները չընդունել: Բայց ունեմ մի սկզբունք. լրագրողներիս ասում եմ՝ երեկույթներին գնում եք, չեք գնում, նվերն ընդունում եք, չեք ընդունում, այդ ընկերության մասին պետք է գրեք միայն ճշմարտությունը, այդ թվում՝ եւ վատը:»,- ասել է Արամ Աբրահամյանը:

«Առավոտ»-ի էթիկայի վարքականոնում թանկարժեք նվերների մասին հիշատակում չկա:[1]

Բայց, օրինակ, Հետաքննող լրագրողների «Հետք» թերթը իր էթիկայի կանոնագրում[2] լրագրողներից պահանջում է հրաժարվել նվերներից, անվճար ուղեւորություններից կամ այլ ծառայություններից, քանի որ դրանք կարող են վտանգել հասարակության վստահությունը թերթի նկատմամբ, իսկ եթե հնարավոր չէ խուսափել նվերից, ապա ընդունելով այն՝ ուղարկել մանկատներ, ծերանոցներ կամ նման այլ հաստատություններ:

Հայաստանում գործող 48 լրատվամիջոց ստորագրել է 2007թ.-ին ընդունված ՁԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնը: Թանկարժեք նվերների մասին դրույթն այս Վարքականոնում ընդգրկված է 3.4 կետի ներքո:

**3.4. հրաժարվել տեղեկություններ հրապարակելու կամ չհրապարակելու համար խոստացվող վճարներից, նվերներից, ինչը մասնագիտական անկախության հետ հակասության մեջ է մտնում եւ հանգեցնում է վստահության կորստի:**

Այս կետն ուղղակի չի արտացոլում ՎիվաՍել-ՄՏՍ-ի նվիրած սմարթֆոնների դեպքը, քանի որ ամանորի երեկույթի առթիվ մատուցված նվերը տեղեկություն հրապարակելու կամ չհրապարակելու համար չի տրվել: Մյուս կողմից էլ՝ թանկարժեք նվերը կարող է լրագրողի մոտ անուղղակի պարտավորության զգացում առաջացնել նվիրատուի հանդեպ:

Լրատվամիջոցները սովորաբար կամ իրենց էթիկայի կանոններում են նշում թանկարժեք նվերներից խուսափելու կանոնի մասին, կամ էլ այն դարձնում են իրենց ներքին կանոնակարգի մասը, խմբագրական քաղաքականությունը: ԱՄՆ-ում տարբեր լրատվամիջոցների էթիկայի վարքականոնները լրագրողներին պարտավորեցնում են քաղաքավարի հրաժարվել տեղեկատվության աղբյուրի նվերներից՝ բացառությամբ չնչին արժեք ունեցող նվերների, ինչպիսիք են՝ գրքերը, սկավառակները, տեսաերիզները եւ այլն:

Լրագրողական էթիկայի սկզբունքներից մեկը՝ շահերի հնարավոր բախումից խուսափելը, այլ պարտավորությունների շարքում նաեւ նախատեսում է, որ լրագրողները նվերներ չընդունեն տեղեկատվության աղբյուրներից, ինչը կարող կասկածի տակ դնել նրանց անաչառությունն ու անկողմնակալությունը:

Թանկարժեք նվեր ընդունած լրագրողը, նրա խմբագրությունը կաշկանդված են լինում նվիրատուին վերաբերող տեղեկություններ տարածելիս: Նվիրատուի առջեւ պարտավորվածությունը կարող է խոչընդոտ լինել անկողմնակալ տեղեկատվություն տարածելու համար: Նախընտրելի վարվելակերպը նման նվերներից հրաժարվելն է:

Նկարագրված դեպքի՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի նվիրած սմարթֆոնների հարցում ճիշտ կողմնորոշվելու համար Հայաստանի լրատվամիջոցներում թե՛ գրված խաղի կանոնների՝ էթիկայի գործող կանոնագրքերի, թե՛ խմբագրական հստակ քաղաքականության պակաս կա:

1. «Առավոտ» օրաթերթ, էթիկայի վարքականոն, http://www.aravot.am/9254-2/

2. Հետաքննող լրագրողների ընկերակցության «Հետք» թերթ, էթիկայի կանոնագիր http://hetq.am/arm/about/code-of-ethics

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

> «Շատ նուրբ է սահմանը մարդկանց՝ տեղեկացված լինելու իրավունքի եւ անհատի մասնավոր կյանքի միջեւ: Սակայն այս սահմանն ավելի դյուրախոց է դառնում, երբ խոսքն իրոք ողբերգություն ապրած մարդկանց մասին է:»

**Աննա Իսրայելյան**
Առցանց «Առավոտի» խմբագիր

# Ձեռքդ ետ տար, եթե ավելի ես ցավեցնելու վերքը




Լուսանկարը՝ femaleimagination.wordpress.com-ից

Լսելով հոր՝ Սուրեն Սիրունյանի սրտի կաթվածից հանկարծամահ լինելու մասին լուրը՝ նրա դեռահաս աղջիկը՝ Դիանա Սիրունյանը, ինքնասպանության փորձ էր կատարել: Աղջիկը լուրը լսելուն պես վազել էր սենյակ ու միանգամից իրեն ցած նետել պատուհանից: Որեւէ մեկը չէր պատկերացրել, թե ինչ է կատարվում, որպեսզի կանխեին Դիանայի մտադրությունը, մայրը մտածել էր, թե աղջիկը գնում է իր սենյակում լաց լինելու ու նետվելուց հետո էին միայն հասկացել, թե իրականում ինչ է կատարվել:

Դիանա Սիրունյանը դեռ 5 օր ողջ մնաց, բայց գտնվեցին մի քանի կայքեր, որոնք նույն օրը եւեթ հաղորդեցին, թե աղջիկը մահացել է:

Միջանկյալ նշենք, որ ավաղ, եզակի օրինակ չէ հայկական մամուլում ողջ մարդուն մահացած ազդարարելը: Հենց նկարագրված դեպքերից քիչ առաջ «Հրապարակ» օրաթերթը որպես վերնագիր՝ թեեւ հարցականով, մատուցել էր լուրը, թե Վանո Սիրադեղյանը մահացել է: Սակայն հենց նյութի մեջ առկա էր նրա կնոջ հերքումը, թե չկա նման բան:

Իսկ երբ երկու շաբաթ անց ստացվեց Վանո Սիրադեղյանի նամակը, «Հրապարակի» խմբագիրը հաղորդեց, թե նախապես էլ բոլորովին վստահ չեն եղել նրա մահվան մասին լուրի իսկության հարցում, սակայն կարծում են, թե «ցանկացած լուր, տեղեկություն, կարծիք իրավունք ունի հրապարակված լինելու: Մի պարզ պատճառով, որ դրանց հարյուր տոկոսանոց ճշմարտացիությունը պարզել հնարավոր չէ, եւ մեզանում երբեմն ամենաֆանտաստիկ տեղեկություններն ամենահավաստին են լինում»: Նաեւ նշել էր. «Ամենակարեւոր խնդիրը, որ դրել էինք մեր առաջ՝ Վանո Սիրադեղյանի մասին ճշգրիտ ինֆորմացիա ստանալն էր, եւ եթե ավելի անկեղծ լինեմ՝ ստիպելը, որ նա խոսի, ձայն հանի՝ հերքելով կամ հաստատելով ինչպես իր գոյությունը, այնպես էլ հայտնելով իր տեսակետն ու մտադրությունները, իր կյանքի ու վերադարձի մասին դիրքորոշումը»:

Այդ օրերի ընթացքում էլ, մինչ Դիանա Սիրունյանը դեռ պայքարում էր կյանքի եւ մահվան սահմանագծին՝ այս թեմայի շուրջ, որն ամենաընթերցվողներից էր հայկական մամուլում, իրարամերժ տեղեկություններ էին հրապարակվում այդ ողբերգական իրադարձության վերաբերյալ:

Մեկ հրապարակվում էր, թե աղջիկն արդեն ինքնուրույն շնչում է, հետո հերքում էին, թե նա շարունակում է միացած մնալ արհեստական շնչառության ապարատին:

Մեկ հաղորդվում էր, թե Դիանա Սիրունյանը վիրահատվել է, հետո հերքվում էր՝ նշելով, թե նրա վիճակում որեւէ վիրահատական միջամտություն չի կարող լինել: Մի քանի անգամ հաղորդվեց, թե նա արյան փոխներարկման կարիք ունի, իսկ այդ հիվանդանոցում արյուն չկա, եւ մի քանի անգամ էլ հերքվեց, թե արյան կարիք չկա:

Դիանա Սիրունյանի հարազատները ի վերջո դադարել էին պատասխանել լրագրողների հարցերին ու նաեւ հանդիմանել՝ խոստանալով, որ Աստծո կամոք եթե աղջիկն ապաքինվի, լրատվամիջոցներից մի քանիսին դատի են տալու՝ կեղծ տեղեկատվություն տարածելու համար: Մասնավորապես դժգոհել էին, թե որոշ կայքեր գրել էին, որ աղջիկը հոր մահվան լուրն առնելուն պես՝ ինքնասպան է եղել եւ տեղում մահացել:

## Մեկնաբանություն

Աղջկա հարազատները իրոք կարող էին ոչ ճշմարիտ փաստացի սխալներ՝ զրպարտություն հրապարակելու համար փորձել կայքերին ենթարկել պատասխանատվության՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի համաձայն եւ այդ կայքերը, ըստ ամենայնի, ստիպված կլինեին փոխհատուցում վճարել նվազագույն աշխատավարձի մինչեւ 2000-ապատիկի չափով:

**Քաղաքացին, որի կարծիքով իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակայնորեն տարածած անձի դեմ:**

Սակայն եթե այս դեպքը քննվեր ոչ թե Հայաստանի դատական համակարգի, այլ, ասենք, ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի կողմից, անկասկած ավելի շատ կմատնանշվեին ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնի խախտումներ: Նշենք, որ այդ Վարքականոնը ստորագրածները խոստացել են պահպանել մասնավորապես հետեւյալ սկզբունքները.

**1.1. մինչեւ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,**

**1.2. եթե խմբագրությունը հասարակական նշանակալի տեղեկություններ է ստացել, սակայն չի կարողացել ճշտել փաստերը, հրապարակելիս անպայման նշել այդ մասին,**

**1.5. ծգտել, որ վերնագրերը, հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս:**

Ինքնասպանության փորձ անելու օրն իսկ Դիանա Սիրունյանի մահվան մասին լուրի հավաստիությունը ստուգված չէր, եւ դա ակնհայտ կեղծ տեղեկություն էր: Այդ լուրը հրապարակած որեւէ կայք չէր նշել, թե փորձել են ու չեն կարողացել ճշտել փաստերը:

Վանո Սիրադեղյանի «մահվան» մասին լուրում վերնագիրն այսուհանդերձ չէր համապատասխանում իրականությանը, որքան էլ որ ենթավերնագրում օգտագործվել էր Մարկ Տվենի հանրահայտ պատասխանը իր մահվան մասին լուրը հրապարակած ԶԼՄ-ին. «Իմ մահվան մասին լուրերը խիստ չափազանցված են»:

Դիանա Սիրունյանի մասին օրինակում խախտվել էր նաեւ ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնի հետեւյալ դրույթը.

**4.3. առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են:**

Եվ հատկապես կոպտորեն խախտվել էր նաեւ Վարքականոնի մեկ այլ սկզբունք.

**4.4. ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս՝ նրբանկատ լինել նրանց նկատմամբ:**

Շատ նուրբ է սահմանը մարդկանց՝ տեղեկացված լինելու իրավունքի եւ անհատի մասնավոր կյանքի միջեւ: Սակայն այս սահմանն ավելի դյուրախոց է դառնում, երբ խոսքն իրոք ողբերգություն ապրած մարդկանց մասին է: Այսուհանդերձ՝

ամեն լուր չէ, որ պետք է հրապարակվի՝ չճշտված, կեղծ լուրերը չպետք է հրապարակվեն: Հատկապես զգուշությամբ պետք է հրապարակվեն լուրերը, որոնք առնչվում են մարդկային ճակատագրերին:

Եվ եթե սենսացիա, «տաք լուրեր» հաղորդելու, ավելի շատ «քլիք»-եր հավաքելու մոլուցքը դեռ չի մթագնել լրագրողի ուղեղը՝ մի պահ պետք է մտածի, թե իր գրչի անզգույշ շարժումով, կամ ավելի ժամանակակից կլինի ասել՝ համակարգչի ստեղնաշարին արված մի քանի հարվածներով ինչ ծանր հարվածներ կարող է հասցնել առանց այդ էլ ցավ ապրող մարդկանց:

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

> “Մինչև այսօր Հայաստանում սարսափ հարուցող և դաժան տեսարանների համար չափորոշիչներ մշակված չեն, սակայն անգամ այդ պայմաններում կարելի է վստահաբար պնդել, որ վերը նշված տեսագրությունները դաժանություն էին պարունակում:”

**Արևհատ Գրիգորյան**
Երևանի մամուլի ակումբի փորձագետ

## Լրագրողական դիակապտություն.
### ինչո՞վ ենք փող աշխատում



2012թ.-ի հոկտեմբերի առաջին օրերին հայաստանյան առցանց լրատվամիջոցներում հայտնվեցին տասն ամսական երեխայի դիակի հայտնաբերման, դուրս բերման, վերակենդանացման փորձերի կադրեր:

Վերնագրի մոտ նշում կար՝ «18+», որը գուցե նշանակում էր, որ խորհուրդ է տրվում դիտել 18-ից բարձր անձանց, կամ էլ գուցե նշանակում էր՝ թույլատրված է դիտել բացառապե՛ս 18 տարեկանից բարձր անձանց: Սրանց մեջ էական տարբերություն կա, չնայած անհայտ էր, թե վերահսկողությունն ինչպես պետք է իրականացվի: Ավելի ճիշտ՝ ակնհայտ էր, որ այդպիսին չի իրականացվելու:

Տեսագրությունը նայելուց հետո հասկանալի դարձավ, որ այդ «18+» նշումը շատ քիչ, եթե չասենք՝ չնչի՛ն զգուշացում էր այն սարսափելի տեսարանների համար, որոնք պարունակում էր այդ տեսագրությունը:

Ավելին, տարիքային սահմանափակման մասին հիշատակումը սովորաբար հակառակ էֆեկտի՝ առավել մեծ լսարան հավաքելու համար է արվում: Համենայն դեպս, հետագայում այդ կայքը հանեց տեսագրությունը, թողեց միայն մեկ լուսանկար և հղում, թե որ կայքում է հնարավոր դիտել տեսանյութը: Այստեղ արդեն այն դիտելու համար անհրաժեշտ էր գրանցվել, այսինքն՝ մի քիչ, բայց գոնե բարդացված էր տեսագրության հասանելիությունը:

Հետագա այս քայլերը ոչ այլ ինչ էին, քան ինչ-որ մեկի գլուխը ջարդելուց հետո նրանից ներողություն խնդրելու պես մի բան: Թեև այս դեպքում լրատվամիջոցն անգամ նեղություն չտվեց իրեն ներողություն խնդրել, ասել, որ շտապել է, առանց մտածելու ակամա տարածել է դաժան տեսարաններ պարունակող տեսագրություն: Ի վերջո, եթե դրանք այդպիսին չէին, ինչո՞ւ հանվեցին կայքից:
Համանման դեպք տեղի ունեցավ նաև մի քանի ամիս առաջ, հուլիսին, երբ հայաստանյան լրատվամիջոցները հրապարակեցին Աֆղանստանում ամուսնական դավաճանության մեջ մեղադրվող կնոջ գնդակահարության տեսագրությունը: Սա էլ հետագայում հանվեց, բայց ո՞վ հաշվեց, թե քանիսը հասցրին տեսնել այդ իրական սարսափ ֆիլմը:

### Մեկնաբանություն

Մինչև այսօր Հայաստանում սարսափ հարուցող և դաժան տեսարանների համար չափորոշիչներ մշակված չեն, սակայն անգամ այդ պայմաններում կարելի է վստահաբար պնդել, որ վերը նշված տեսագրությունները դաժանություն էին պարունակում: Դրանք անչափահասների, հոգեպես անհավասարակշիռ մարդկանց վրա կարող են ունենալ շատ ավելի վատ ազդեցություն, քան համանման, բայց բեմադրված կադրերը, որոնց «եթերային» առատության դեմ իբրև թե պայքարում ենք:

Հատկանշական է, որ նկարագրված երկու դեպքում էլ երևույթը քննադատողները շատ չէին: Փաստորեն ստացվեց, որ հայկական սերիալների ռեժիսորներին ու

դերասաններին շատ ավելի հեշտ է մեղադրել հասարակությանը, հատկապես անչափահասներին քրեածին տեսարաններ և դաժան հաշվեհարդարներ հրամցնելու մեջ, քան իրական ռեժիմով սարսափ տարածող լրատվամիջոցներին: Գուցե հենց այսպես՝ ազատ գործելու համա՞ր է, որ հայաստանյան լրատվամիջոցները մեծ խանդավառություն չունեն՝ միանալու ինքնակարգավորման նախաձեռնությունների: Համենայն դեպս, Երևանի մամուլի ակումբի ինքնակարգավորման նախաձեռնությանը՝ ԶԼՄ-ների ներկայացուցիչների Վարքականոնին միացած լրատվամիջոցների ցանկում վերոնշյալ տեսագրությունները տեղադրած կայքերը չկան: Իսկ այդ Վարքականոնի 4.3 կետը կոչ է անում առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հերոսները երեխաներ, անչափահասներ են: 4.4 կետը հորդորում է նրբանկատ լինել ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց նկատմամբ՝ նրանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս: Նույնիսկ ավելորդ է հիշեցնել 5.3 կետը, որը հորդորում է որևէ ձևով չքարոզել բռնություն:

Եթե անգամ լրատվամիջոցը չի ստորագրել համանման վարքականոն, արդարացվու՞մ է արդյոք այս ամենը: Չեն ստորագրում, որ հանգիստ, առանց ավելորդ գլխացավանքի նման կադրե՞ր հրապարակեն: Սրանք հարցեր են, որոնց մասին լրատվամիջոցները լավ կանեն՝ մտահոգվեն: Նկարագրված դեպքերը պարզապես լրագրողական էթիկայի խախտումներ չեն, այլ՝ դիակների վրա փող աշխատելու փորձ: Առանց ծեքծեքումների դա պարզապես անվանում են դիակապտություն:

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

> Չնայած ինտերնետի և սոցիալական ցանցերի շնորհիվ ազատ խոսքի հնարավորությունները մեծացել են, վստահելի և էթիկական լրագրության ծավալը նվազել է:

**Էյդան Ուայթ**
Էթիկական լրագրության ցանցի տնօրեն, Լրագրողների միջազգային դաշնության նախկին գլխավոր քարտուղար

# Ինչու՞ է էթիկան կարեւոր լրագրության համար



Լուսանկարը՝ picasaweb.google.com-hg

Լրագրողները, ինչպես բոլոր մարդիկ, էթիկական բանական էակներ են: Նրանք անընդհատ ընտրություն են կատարում. գիտեն՝ ինչն է ճիշտ, ինչն է սխալ: Բայց ի տարբերություն այլ մարդկանց, լրագրողներն ունեն էթիկական լինելու հատուկ պարտականություն, քանի որ նրանց կատարած աշխատանքը ոչ միայն ազդում է հասարակության նորմերի և արժեքների ձևավորման վրա, այլև տեղեկատվական համատեքստ է ապահովում այն որոշումների համար, որոնք կայացնում են քաղաքացիներն իրենց կյանքում:

Լրագրողների կողմնակալությունը կարող է սարսափելի հետևանքներ ունենալ: Վերջին 25 տարիներին մի շարք ցավալի օրինակներ են եղել, երբ լրագրողներն ու լրատվամիջոցները հրաժարվել են ճշմարտության, անկողմնակալության և մարդկային արժանապատվության արժեքներից և փոխարենը նպաստել են պատերազմի և ցեղասպանության խթանմանը Աֆրիկայում, Միջին Արևելքում և Բալկաններում:

Հայերը բոլորից լավ գիտեն, որ այն լրագրությունը, որը թյուր տեղեկատվության, բռնության և կրքոտ կոչերի միջոցով սոցիալական հակասություն է հրահրում, կարող է մղել մարդկանց սպանությունների:

Ուստի, էթիկական լրատվամիջոցներ և լրատվություն ունենալու գաղափարը, որպես հանրային բարիք, ամենևին էլ տեսական չէ, այն առօրյա կյանքի սոցիալական և քաղաքական իրողությունների հիմքում է:

Լրագրողները պետք է գիտակցեն, որ պատասխանատու են ոչ միայն իրենց անձի կամ գործատուի առաջ, այլ նաև այն հասարակության, ում ծառայում են:

Ասելն, իհարկե, ավելի հեշտ է, քան անելը: Ժամանակակից խմբագրությունների թեժ մթնոլորտում բարեխիղճ լրագրողները միայն կաշառված քաղաքական գործիչների և լրագրությունից չհասկացող ծայրահեղականների պատճառով չէ, որ խնդիրներ են ունենում:

Այսօր լրատվամիջոցները հայտնվել են տեխնոլոգիական և սոցիալական հեղափոխության հործանուտում, ինչը փոխել է մարդկանց՝ տեղեկություններ ստանալու և միմյանց հետ հաղորդակցվելու սովորությունները: Այս գործընթացն արմատապես վերափոխել է նաև լրագրողների աշխատանքն ու լրատվամիջոցների գործունեությունը: Կոնվերգենտ տեխնոլոգիաները ճնշում են ավանդական լրատվական տնտեսությանը, փոքրացող շուկայի պատճառով ավանդական լրատվամիջոցների միջև դաժան մրցակցություն է սկսվել:

Ամբողջ Եվրոպայում և զարգացած աշխարհի մեծ մասում վերջին տարիների ֆինանսական ճգնաժամը հանգեցրել է լրագրության առանցքային կառույցներում ծախսերի զգալի կրճատմանը. քիչ գումար է ծախսվում վերապատրաստումների վրա, լրագրողներն աշխատում են ավելի անապահով և

վտանգավոր պայմաններում, պակասում են ներդրումները խմբագրական հետազոտությունների, հետաքննական, դիտորդական նյութերի միջոցով իշխանության գործունեությունը վերահսկելու ծրագրերում: Արդյունքում հանրային կյանքում, մասնավորապես տեղական մակարդակում, կոռուպցիոն երևույթները չեն բացահայտվում, դրանց մասին չի հաղորդվում: Մարդիկ քիչ են որակյալ տեղեկատվություն ստանում, թեև առօրյա կյանքում դրա կարիքն անընդհատ ունեն՝ տեղեկացված ու էթիկական ընտրություն կատարելու համար:

Չնայած ինտերնետի և սոցիալական ցանցերի շնորհիվ ազատ խոսքի հնարավորությունները մեծացել են, վստահելի և էթիկական լրագրության ծավալը նվազել է:

Քանի որ ավանդական չափանիշերն անկում են ապրում, իսկ առցանց աշխարհը կարգավորող փոխհամաձայնեցված բանաձև դեռ չկա, որոշ երկրների կառավարություններ փորձում են խոսքի ազատության վերաբերյալ նոր կանոններ սահմանել լրագրության մեջ: Շատ երկրներում մեծ քննարկումներ են ծավալվել այն մասին, թե ինչպես կանոնակարգել լրատվամիջոցներն ու ինտերնետը: Նույնիսկ որոշ ժողովրդավարական երկրներում, ինչպիսին են օրինակ՝ Հունգարիան, Բրիտանիան և Հարավային Աֆրիկան, կառավարությունները սպառնում են հարկադրել իրե՛նց կանոնները: Սա կարող է ամենուրեք լրագրողների համար վատ լուր դառնալ:

## Էթիկայի համար պայքարելիս՝ իմացեք հիմունքները

Զարմանալի չէ, որ լրագրության ոլորտի շատ մարդիկ հրատապ անհրաժեշտություն են համարում, որ լրատվամիջոցները կրկին սկսեն զբաղվել էթիկական խնդիրներով՝ հանրության վստահությունն իրենց նկատմամբ ամրապնդելու և կառավարության միջամտությանը դիմակայելու համար: Էթիկայի, լավ կառավարման և ինքնակարգավորման միջոցով լրագրության հանդեպ հանրային վստահությունը վերականգնելու նպատակով[1]՝ ոլորտի մասնագետների կողմից միջազգային քարոզարշավներ են մեկնարկել:

Առաջին անգամն է, որ լրատվական տարբեր հարթակների սեփականատերերը, խմբագիրները և լրագրողները, գտնվելով տարբեր մրցակցային դաշտերում, աշխատում են միասին՝ էթիկան, լավ կառավարումն ու ինքնակարգավորումը լրատվամիջոցների օրակարգ վերադարձնելու ուղղությամբ:

Էթիկան նաև յուրաքանչյուր լրագրողի աշխատանքային օրակարգի կարևոր բաղադրիչը պետք է լինի: Նա պետք է իմանա լրագրողական վարքի հիմնական սկզբունքները և հետևի ընդունված վարքականոններին:[2] Լրագրողների մեծ մասը

չի կարող անգիր թվարկել ներպետական կանոնակարգի դրույթները (կան ավելի քան 400 փոխհամաձայնեցված լրագրողական կանոնագրքեր), բայց նրանք առնվազը պետք է իմանան այն հինգ առանցքային սկզբունքները, որոնք կան գրեթե բոլոր կանոնագրքերում և միջազգայնորեն ճանաչված են.

**Պատմել ճշմարտությունը.** ձգտել լինել ճշգրիտ և միշտ բացահայտել այն, ինչը հայտնի է և ինչը կարելի է ստուգել: Չշահարկել կամ չտարածել բամբասանքներ և անհիմն մեղադրանքներ:

**Լինել անկախ.** լրագրողները և լրատվամիջոցները չպետք է քարոզեն կառավարությունների, քաղաքական կուսակցությունների օգտին, հետապնդեն առևտրային կամ այլ շահեր:

**Լինել անկողմնակալ.** լրագրողները պետք է լինեն արդար և անաչառ՝ հնարավորություն տալով բոլոր կողմերին արտահայտվելու և ապահովելով ողջամիտ հավասարակշռություն հակասությունների շուրջ:

**Չվնասել.** լրագրողները և լրատվամիջոցները պետք է հարգեն իրենց լսարանին և խուսափեն օգտագործել նյութեր, որոնք անհարկի վնաս կհասցնեն մարդկանց կամ համայնքներին:

**Լինել հաշվետու.** լրագրողները և լրատվամիջոցները պետք է ուղղեն իրենց սխալները, արձագանքեն իրենց աշխատանքի հետ կապված մտահոգություններին և բողոքներին՝ այդ թվում նաև ապահովեն պատասխանի իրավունք:

Երբ լրագրողներն անտեսում են այս սկզբունքները, նրանք անխուսափելիորեն թուլացնում են հանրության վստահությունը լրատվամիջոցների նկատմամբ: Սա մի դաս է, որը որոշ լրագրողներ այդպես էլ չեն յուրացնում: Օրինակ, Ջերալդո Ռիվերան, ով աշխատում էր Միացյալ Նահանգների Fox News ցանցում, 2003թ. ամերիկյան զորքերի Իրաք ներխուժման ժամանակ ցնցեց իր գործընկերներին՝ հայտարարելով, որ ինքն ունի սեփական հրացան և կսպանի Սադամ Հուսեյնին, եթե նման հնարավորություն ունենա:

Նրա գործողությունները զայրացրեցին գործընկերներին: Շատերը նկատեցին, որ կողմերից մեկին բացահայտորեն պաշտպանելով՝ նա վտանգում է այն բոլոր լրագրողների կյանքը, ովքեր լուսաբանում են այդ պատերազմը: Ի վերջո, ԱՄՆ զորքերի դիրքերի մասին նրա ռեպորտաժներն այնքան զայրացրեցին զինվորական ղեկավարներին, որ վերջիններս նրան արտաքսեցին երկրից:[3]

Ամեն անգամ այս դեպքը վերհիշելիս, համոզվում ենք, թե լրագրողների համար որքան կարևոր է էթիկական սկզբունքներով առաջնորդվելը՝ հատկապես պատերազմական ժամանակներում: Միջազգային նորությունների անվտանգության ինստիտուտը (The International News Safety Institute), որը համախմբում է աշխարհի առաջատար լրատվամիջոցներին, ունի լրագրողների անվտանգության փոխհամաձայնեցված կանոնագիրք:[4] Այն շատ օգտակար

ուղեցույց է Հայաստանի կամ այլ երկրների լրագրողների համար, ովքեր աշխատանքի բերումով հնարավոր է՝ հայտնվեն թշնամական միջավայրում:

Սա գեղարվեստական գիրք չէ, դժվար է մտապահել այն ամենը, ինչ գրված է այստեղ: Բայց մի բան պետք է անպայման հիշել. մասնագիտական հիմունքների նկատմամբ հարգանքը լրագրության, որպես հանրային բարիքի, կենսամասն է:

## Էթիկական մարտահրավերներ՝ ամբոխի մտածելակերպը

Էթիկական լրագրությունը մտածող լրագրություն է: Ի՞նչ է պատահում, երբ դուք մտածելու ժամանակ չունեք: Խմբագրությունների առջև ծառացած մերօրյա մարտահրավերներից մեկը լրատվության արագ տեմպն է՝ «հրատապ լուրերն» առաջինը հաղորդելու շտապողականությունը: Փաստերն ու լուսանկարները ստուգելու համար այլևս քիչ ժամանակ կա: Այսօր սոցիալական ցանցերը, ինչպես օրինակ Twitter-ը և Facebook-ը, լուրերի տարածման առաջատարներն են: Հաճախ հենց նրանք են որոշում «օրվա լուրերի» ցանկը: Խմբագրությունների մեծ մասն այսօր հատուկ մարդկանց են աշխատանքի վերցնում՝ Twitter-ի լրատվական միտումներին հետևելու համար: Անանուն աղբյուրներից ստացված և չստուգված տեղեկությունը հաճախ ակնթարթորեն գրավում է լրատվամիջոցների ուշադրությունը: Էթիկական լրագրության համար սա թունավոր միջավայր է:

Միևնույն ժամանակ, պաշտպանելու համար իրենց առևտրային շահը՝ լրատվամիջոցները հետևում են միմյանց օրինակին՝ հրաժարվելով նույնիսկ հիմնարար սկզբունքներից: Օրինակ՝ Պակիստանում, որտեղ ավելի քան 30 շուրջօրյա լրատվական ալիքներ լուրջ մրցակցություն են մղում շահավետ, բայց սահմանափակ գովազդային շուկայի համար, լրատվական ցանցերից մեկը 2012թ. սեպտեմբերին խախտեց մասնագիտական հիմնադրույթներից մեկը՝ «մի՛ վնասիր»-ը: Լրատվամիջոցը հրապարակեց անարգանքի մեջ մեղադրվող երեխայի անունը և նկարը (ինչպես հետագայում պարզվեց մեղադրանքը կեղծ էր):

Աղջիկը, ով աղքատ քրիստոնեական համայնքից էր, գտնվում էր բանտում ՝ զինված ոստիկանական հսկողության ներքո՝ երկյուղով, թե իսլամիստական կոշտ գծի ջատագովները կփորձեն իրենց ձեռքը վերցնել օրենքը: Կրոնական ծայրահեղականների հաշվեհարդարները արտասովոր իրողություն չեն Պակիստանում:

Երբ նա գրավի դիմաց ազատ արձակվեց և բանտից ծպտված փոխադրվեց գաղտնի վայր, երկրի ամենամեծ հեռուստատեսային ընկերությունը՝ GEO TV-ին, ձեռք բերեց նրա լուսանկարը և հրապարակեց այն: Մյուս լրատվամիջոցները հետևեցին նրա արարքին, և մի քանի ժամվա ընթացքում աղջկա դեմքը հայտնվեց

բոլոր թերթերի առաջին էջերում և հեռուստալուրերի հիմնական թողարկումներում:

Հոգնած ու վախեցած 11-ամյա երեխայի նկարը հրապարակելը խախտում է լրագրողական վարքականոնի հիմնական դրույթներից մեկը՝ լրագրությունը պետք է պաշտպանի երեխայի և հասարակության առավել խոցելի անձանց իրավունքները: Այս օրինակը ցույց է տալիս, թե ինչ վտանգների հետ է առերեսվում էթիկական լրագրությունը, երբ լրատվամիջոցներն իրենց աշխատանքում առաջնորդվում են ամբոխի մտածելակերպով:

Կատարվածն այնքան մտահոգեց որոշ լրագրողների, որ մասնագիտական շրջանակներում փոքրիկ ապստամբություն սկսվեց: Երկրի առաջատար լրագրողներից մեկը՝ Մուհամադ Զիաուդինը, ով Express-Tribune-ի գործադիր տնօրենն էր, քննադատեց իր սեփական թերթի և երկրի այն լրատվամիջոցների պահվածքը, որոնք հրապարակել էին աղջկա նկարը՝ անվանելով կատարվածը «մեծ խմբագրական սխալ»:[5]

Սա 2012թ.-ին Պակիստանում տեղի ունեցած էթիկական թեժ սկանդալներից վերջինն է, բայց ոչ միակը: Մի խումբ լրագրողներ, այդ թվում և Զիաուդինը, մտահոգված նման հարցերով, ստեղծեցին էթիկական լրագրության դաշինք[6] լրագրության ոլորտում առավել լավ էթիկական չափանիշների խթանման նպատակով:

Պակիստանում էլ, շատ այլ երկրների պես, կոռուպցիան տարածված է հանրային կյանքում, իսկ լրատվամիջոցները տարված են վարկանիշերով և մշտապես վախենում են տանուլ տալ իրենց մրցակիցներին: Սակայն վերջին էթիկական սկանդալներից հետո լրագրողները հասկացան, որ պետք է համախմբվեն և աշխատեն միասին՝ իրենց մասնագիտական արժեքները պաշտպանելու նպատակով:

## Էթիկական մարտահրավերներ՝ քաղաքականության ճնշող ձեռքը

Քաղաքական գործիչներն ու լրագրողները միշտ էլ սեր-ատելություն փոխհարաբերությունների մեջ են: Նրանք շատ են կախված մեկը մյուսից, բայց երբեմն չափից շատ են մոտենում իրար էթիկական հարմարավետության տեսանկյունից:

Ոչ մի պատմություն ավելի լավ չի ներկայացնում լրատվամիջոցների և քաղաքական իշխանության միջև հարմարավետ, ջերմ փոխհարաբերությունների վտանգը, որքան Միացյալ Թագավորությունում Լորդ Ջասթիս Լևեսոնի՝ լրատվամիջոցների կոռուպցիայի և բրիտանական մամուլի հեռախոսային հակերության շարունակական հետաքննությունը:[7]

Աշխարհի ամենամեծ լրատվական կայսրություններից մեկի խոսափողում՝ Ռուպերտ Մրդոքի News International-ում տիրող ոչ էթիկական հարաբերությունները հանգեցրեցին անօրինականության, կաշառակերության և գաղտնի գործարքների իրականացման, որոնցում ներգրավված էին բարձրաստիճան քաղաքական գործիչներ, ոստիկանության ղեկավարներ և լրատվական դաշտի աշխատողներ:

Թվում է՝ տասնամյակներ շարունակ բրիտանական քաղաքականությունը և Բրիտանիայի առաջատար լրագրողներից ոմանք գերի էին եղել կոռուպցիայի քայքայիչ գործընթացներին՝ անտեսելով շահերի բախումն ու արատավորելով անկախ լրագրությունը: Այս լրագրողներն ու քաղաքական գործիչները առանց մեծ ջանքեր գործադրելու լրագրությունից տեղափոխվել էին քաղաքական դաշտ՝ առանձնապես ուշադրություն չդարձնելով շահերի բախման վտանգին: Երբ News of the World-ի (վերջինս փակվեց սկանդալային ձևով) խմբագիրը հրաժարվեց իր աշխատանքից և դարձավ իշխող պահպանողական կառավարության հաղորդակցության բաժնի ղեկավարը, գրեթե ոչ ոք ծպտուն չհանեց: Այսօր նա կոռուպցիայի մեջ մեղադրվող նախկին ղեկավարներից մեկն է, ում սպառնում է ազատազրկում:

Բրիտանական սկանդալը նաև միջազգային ազդեցություն կունենա. երկրի մամուլի կամավոր ինքնակարգավորման համակարգը, որը ծառայել է որպես օրինակելի կաղապար այլ երկրների համար, վարկաբեկեց իրեն:

Այս դեպքն ապացուցում է, թե ինչու լրագրությունը պետք է գործի քաղաքականությունից անկախ և չղեկավարվի այնպիսի մարդկանց կողմից, ովքեր պատրաստ են զոհել թափանցիկությունն ու էթիկական չափանիշները հանուն իրենց անձի, առևտրային կամ քաղաքական արտոնությունների:

Թափանցիկության, հաշվետվողականության և լրատվամիջոցների լավ կառավարման սկբունքներին հետևելն անհրաժեշտ են մասնավորապես շահերի բախումը բացառելու նպատակով: Քաղաքական կամ առևտրային շահերի հայտարարման ներքին համակարգերը կարևոր են, եթե լրագրությունը պետք է պահպանի իր ազնվությունը:

Դա դյուրին գործ չէ: Շատ երկրներում լրագրողները ստանում են նվերներ կամ աջակցություն այնպիսի մարդկանցից, ովքեր ցանկանում են օգտագործել լրատվամիջոցներին: Այս երևույթները հաճախ գաղտնի են պահվում և վկայում են կոռումպացված և ոչ էթիկական հարաբերությունների մասին: Որոշ լրագրողներ կարող են մտածել, որ փոքր բարեհաճություններ անելը՝ կապեր հաստատելու նկատառումով, կամ անձնական նվերներ ընդունելը այնքան էլ վտանգավոր չեն: Ուզում եմ նրանց հիշեցնել ԱՄՆ հիմնադիրներից մեկի՝ Թոմաս Ջեֆերսոնի խորհուրդը. «Երբ գայթակղություն եք ունենում ինչ-որ գաղտնի բան անելու, հարցրեք ինքներդ ձեզ, թե արդյո՞ք դա կանեիք հրապարակավ: Եթե՝ ոչ, ապա վստահ եղեք, որ դա սխալ է»:

Բայց խնդիրները հաճախ ավելի շատ ինստիտուցիոնալ, քան անհատական բնույթ են կրում։ Լրատվամիջոցների տնօրինումն ու վերահսկումը շատ երկրներում թափանցիկ չէ։ Հաճախ կառավարությունները օգտագործում են պետական բանկերը և այլ հաստատությունները՝ բարեկամաբար տրամադրված լրատվամիջոցներին ֆինանսավորելու նպատակով, կամ պետական գովազդ պատվիրելով հատուկ աջակցություն են ցուցաբերում այն լրատվամիջոցներին, ովքեր համակրում են իրենց։

Որոշ երկրներում, մասնավորապես նախկին Խորհրդային Միության տարածքում, մեծ արդյունաբերողներն ու օլիգարխները գնում են լրատվամիջոցներ ոչ թե գործարար, այլ պարզապես քաղաքական ազդեցություն ունենալու նպատակով։

Այս խնդիրները ընդգծում են, թե ինչու է էթիկան կարևոր ոչ միայն խմբագրության, այլև լրատվամիջոցների կառավարման բոլոր մակարդակներում։ Էթիկական սկզբունքների հետևելու պահանջը պետք է բխի լրատվական բուրգի գագաթից՝ լրատվամիջոցների ղեկավարներից և տերերից։ Նրա՛նք պետք է առաջին հերթին լինեն լավ կառավարման և թափանցիկության ջատագովները։[8]

## Էթիկական մարտահրավերներ՝ մասնավոր կյանք, զրպարտություն, ճանաչված մարդիկ

Էթիկական լրագրությունը հաճախ ճնշումների է ենթարկվում, երբ խոսքը վերաբերում է հարուստ, հասարակության մեջ ազդեցիկ դիրք զբաղեցնող մարդկանց։ Անշուշտ ժողովրդավարական հասարակությունում քաղաքականության կամ գործարարության ոլորտում ընդգրկված անձինք պետք է ընդունեն, որ իրենց գործունեությունը պետք է բաց լինի հանրության առաջ։ Սակայն նրանցից շատերը պնդում են, որ անձնական կյանքի իրավունքը, ինչը նույնպես միջազգային չափանիշերով երաշխավորված մարդու իրավունք է, իրենց իրավունք է վերապահում չպատասխանել իրենց ընտանիքին վերաբերող հարցերին։ Սեփական անձն ու հեղինակությունը լրագրողների հետաքրքրասիրությունից պաշտպանելու նպատակով նրանք հաճախ փորձում են լրագրողների դեմ կիրառել զրպարտության մասին օրենքները՝ հատկապես երբ խոսքը կոռուպցիային է վերաբերում։

Զրպարտությունը, ինչը շատ երկրներում քրեական հանցագործություն է համարվում, լրագրությունը վարկաբեկելու սպառնալիք է դարձել շատ տեղերում։ Հայաստանում, օրինակ, վերջին տարիներին լրատվամիջոցների դեմ զրպարտության մեղադրանքով բազմաթիվ գործեր են ներկայացվել դատարան։

Այս երևույթը աշխարհում հայտնի է որպես «զսպող էֆեկտ» մամուլի ազատության համար։ Այն խթանում է լրատվամիջոցների ինքնագրաքննությունը, նրանք վախենում են հրապարակել օրինական կարծիքներ և մեկնաբանություններ, քանի որ հնարավոր է՝ հայտնվեն դատական գործընթացում։

Սակայն երբեմն լրատվամիջոցները կարող են դիպչել զգայուն լարերի՝ չափից շատ ուշադրություն բևեռելով բարձրաշխարհիկ մարդկանց, աստղերի, երգիչների, մարզիկների անձնական կյանքի հանգամանքների վրա: 2012թ. սեպտեմբերին, երբ Ֆրանսիայում, Իռլանդիայում, Իտալիայում և Շվեդիայում մի շարք ամսագրեր հրապարակեցին Քեմբրիջի դքսուհու, Բրիտանիայի ապագա թագավոր՝ արքայազն Ուիլյամի կնոջ կիսամերկ լուսանկարները, աղմուկ բարձրացավ: Այդ լուսանկարներն արվել էին հեռվից մի լուսանկարչի կողմից, ով մտել էր մասնավոր առանձնատուն՝ այս բացառիկ նկարները ստանալու նպատակով:

Սա սկանդալ առաջացրեց՝ և ոչ միայն Բրիտանիայում, որտեղ լրատվամիջոցները մեծապես հարգում են արքայական ընտանիքի մասնավոր կյանքը այն բանից հետո, երբ արքայազն Ուիլյամի մայր արքայադուստր Դիանան մահացավ 1997թ. Փարիզում՝ լուսանկարիչների հետապնդման ժամանակ տեղի ունեցած ավտովթարից:

Այս դեպքը կրկին նույն հարցն է առաջ քաշում՝ ո՞րն է, կամ ո՞րը չէ հանուն հանրային շահի լրագրությունը: Հաճախ լրատվամիջոցները «հանրային շահ» են անվանում այն ամենը, ինչով հետաքրքրված է հանրությունը: Սա արդարացնում է նրանց բևեռացված ուշադրությունը հանցագործություններին, սեռական բռնություններին, սկանդալներին, բամբասանքներին:

Սակայն հանրային շահն առավել ընդգրկուն հանրային արժեքներին է վերաբերում: Մարդիկ չեն կարող անմիջականորեն հետաքրքրված լինել տնտեսությամբ, կրթությամբ, առողջապահությամբ կամ սոցիալական քաղաքականությամբ, սակայն դրանք լուրերի ամենօրյա օրակարգի կենսական բաղադրիչներն են, որոնցում յուրաքանչյուր քաղաքացի ուղղակի շահ ունի:

Ոչ ոք չի հերքում, որ հարուստների և հայտնիների մասին պատմություններն առավել մեծ ուշադրության են արժանանում, բայց երբ լրագրողները չափից շատ են սևեռվում հայտնիների վրա, նրանք կարող են ուշադրությունից բաց թողնել այլ, առավել կարևոր խնդիրներ:

## Էթիկական մարտահրավերներ՝ բազմազանություն և կրոն

Ինքնության խնդիրները, կապված էթնիկ պատկանելիության, սեռի, կրոնի կամ հավատքի հետ, միշտ էլ դժվար երկընտրանքներ են առաջացնում էթիկական լրագրության համար: Պայթյունավտանգ հարցերի առնչվելիս, ինչպես օրինակ՝ տարբեր մշակույթների միջև կրոնական լարվածությունն է, կամ տարբեր էթնիկ խմբերի միջև փոխհարաբերությունները, լրատվամիջոցները պետք է լինեն հավասարակշռված և ապահովեն լիարժեք լուսաբանում:

Նրանք պետք է խուսափեն կարծրատիպերից և գործիք չդառնան ծայրահեղականների ձեռքին, ովքեր ձգտում են առճակատում հրահրել համայնքների միջև:

Նման օրինակ է իսլամի դեմ սիրողական տեսաֆիլմը, որը պատրաստել էին ԱՄՆ-ի քրիստոնյա արմատականները և տարածել YouTube-ում, նաև՝ դրան հետևած բռնությունների լուսաբանումը լրատվամիջոցների կողմից:

Կրոնական ծայրահեղականները թե՛ արևմուտքում և թե՛ մահմեդական աշխարհում փորձեցին առճակատում սկսել այս հարցի շուրջ: Որոշ մահմեդական ահաբեկիչներ այս բողոքները նույնիսկ դարձրեցին Լիբիայում զինված հարձակման պատրվակ. սպանվեցին երեք դիվանագետներ, այդ թվում նաև՝ ԱՄՆ դեսպանը:

Աշխարհի լրատվամիջոցները շտապեցին ցուցադրել մեծ քաղաքներում տեղի ունեցող բռնի բողոքների տեսանյութերը, որոնք ուղեկցվում էին դրոշների հրկիզմամբ և առճակատման կոչերով: Միայն մի քանի լրատվամիջոց անդրադարձավ բողոքների իրական մասշտաբներին: Ընդհանուր եթերից այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ բողոքները մեծ ընդգրկում և աջակցություն են ստացել և արտահայտում են արաբական աշխարհի «մահմեդական զայրույթը»: Եթե լրատվամիջոցները ժամանակ հատկացնեին փաստերի մանրամասն ուսումնասիրման համար ու տեղեկությունները տարածեին ճիշտ համատեքստում, ի հայտ կգար միանգամայն այլ պատմություն: Թոնի Բուրմանը մեկն էր այն եզակի լրագրողներից, ով ավելի խորն էր ուսումնասիրել իրավիճակը: 2012թ. սեպտեմբերի 22-ին Toronto Star-ում տպագրված իր հոդվածում նա գրում է. «Հստակ թվեր հնարավոր չէ պարզել, բայց ենթադրվում է, որ ամբողջ աշխարհում ցուցարարների թիվը չի գերազանցել 40,000-ը: Սա ավելի քիչ է, քան աշխարհի արաբական բնակչության 0.001 տոկոսը, և շատ ավելի քիչ, եթե մենք հաշվենք աշխարհի մահմեդական բնակչությունը, որը կազմում է 1.6 միլիարդ մարդ»:

Փաստորեն հնարավոր է, որ մահմեդականների մեծ մասն առավել վիրավորված լինեին անհեռատես ծայրահեղականներից կողմից իրավիճակի շահարկումից, քան հենց բուն ֆիլմից:

Երբ խոսքը վերաբերում է համայնքների միջև լարվածությանը, լրագրողները պետք է խուսափեն ճշմարտության նկարագրական մատուցումից: Ռասայական հարցերի, միգրացիայի կամ կրոնի վերաբերյալ գրելիս նրանք պետք է հանգամանորեն գնահատեն տեղեկությունները, ստուգեն բողոքներն ու իրադարձությունները ներկայացնեն համատեքստի մեջ, զգուշանան խտրականությունից կամ կանխակալությունից: Լրատվամիջոցների աջակցության կազմակերպությունները, ինչպես օրինակ Բազմակողմանի լրատվության ինստիտուտը (Media Diversity Institute)[9] օգնում են լրագրողներին դիմակայել նման մարտահրավերներին:

էթիկական լրագրությունը չի կարող լուծել այն լարվածությունը, որն առաջանում է տարբեր համայնքների միջև ժամանակ առ ժամանակ: Այն չի կարող վերացնել լրատվամիջոցների աշխատանքը շահարկելու քաղաքական դերակատարների կամ իշխանության ձգտող խմբերի փորձերը: Սակայն այն կարող է օգնել ստեղծելու տեղեկատվական այնպիսի համակարգ, որն էթիկական է, թափանցիկ և հաշվետու: Նման սոցիալական և մասնագիտական մթնոլորտի ձևավորումը ոչ միայն տաղանդավոր լրագրողներին դրսևորվելու հնարավորություն կտա, այլև մեծապես կնպաստի լրատվամիջոցների նկատմամբ հանրային վստահության ձևավորմանը:

---

1. Դրանք էթիկական լրագրության նախաձեռնությունը (www.ethicaljournalisminitiative.org) և էթիկական լրագրության ցանցն են (www.ethicaljournalismnetwork.org):

2. Կանոնագրքերի երկու լավ օրինակներ են Լրագրողների միջազգային ֆեդերացիայի կանոնագիրքը (տես http://www.ifj.org/en/articles/status-of-journalists-and-journalism-ethics-ifj-principles) և ԱՄՆ-ում Պրոֆեսիոնալ լրագրողների հասարակության կանոնագիրքը (տես՝ http://www.spj.org/ethicscode.asp)

3. Տես՝ http://en.wikipedia.org/wiki/Geraldo_Rivera՝ նրա կողմից էթիկական հակասությունների այլ օրինակների ծանոթանալու նպատակով:

4. Տես՝ http://www.newssafety.org/page.php?page=165

5. Տպագրվել է 2012թ. սեպտեմբերի 19-ին, http://tribune.com.pk/opinion/

6. Տես՝ www.pakmediaethics.org

7. Սկանդալի համապարփակ պատկերին ծանոթացեք http://www.guardian.co.uk/media/leveson-inquiry հասցեում: Նյութը տրամադրել է այն թերթը, որը սկսել է սկզբնական սկանդալը:

8. Թափանցիկության և լավ կառավարման պահանջի մեծացումը հանգեցրել է էթիկական լրագրության ցանցի միջոցով Լրատվական չափանիշների աուդիտի ստեղծմանը (Media Standards Audit), տես՝ www.ethicaljournalismnetwork.org

9. Տես՝ http://media-diversity.org/en/

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ